ԷՋՄԻԱԾԻՆ

1979

Դ

Ա.ՄԸ 146



ԼԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Հատոր

1979

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1979 թ. ապրիլի 15)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառաւոր Հօր, նոյնպէս
և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք» (Հռոմ. Զ 4):

Ինչպես Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով,
այնպես և մենք քայլենք դեպի նորոգումը մեր կյանքի:

Սիրեցյալ ժողովուրդ Մեր,

Զատիկ է այսօր, ուրախ եղեք ու ցնծացեք:

Սուրբ Զատիկ, երբ բոլորս մեր հոգիների լույսի տակ տեսնում ենք շողակաթ պատկերը Հիսուսի հրաշք հարության:

Հիսուսի ծննդյան ու կյանքի, Հիսուսի խաչելության ու հարության մասին վկայում են ավետարանիչները և ժամանակակից հիշատակարանները: Վկայում են հետագա դարերն ու սերունդները բոլոր: Վկայում են բոլոր ժամանակների՝ հավերժական կյանքի տեսիլքով մսեղվան դեմ մաքառող անթիվ, անհամար բազմությունները մարդկանց:

Այո՛, ճշմարտապես «յարեաւ Քրիստոս ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Ամեն անգամ, երբ մեր հոգիներում հառնում է լուսաշող պատկերը Հիսուսի հարության, մեր գիտակցության մեջ պայծառանում է ոչ միայն հույսը

հավիտենական կյանքի, այլև հրամայականը՝ մարդկային կյանքը, մեր այս երկրային անցավոր կյանքը, Հիսուսի Ավետարանի լույսով լուսավորելու, Հիսուսի Ավետարանի լույսով բեղմնավորելու, Հիսուսի Ավետարանի լույսով բարեշրջելու:

Հարց եք տալու Մեզ, թե ո՞րն է այդ հրաշագործ լույսը, որ ճառագայթում է Հիսուսի Ավետարանից: Մեր պատասխանն է՝ այդ ճառագայթող լույսը, այդ հրաշագործ լույսը, մանավանդ Հիսուսի սերն է ամենապարփակ ու ամենահաղթ: Կարդացեք Ավետարանները և պիտի հաստատեք, թե Հիսուսի մեն մի խոսքը, Հիսուսի մեն մի արարքը, Հիսուսի հրաշագործությունները բոլոր, հստակ ու պայծառ արտահայտություններն են նրա աստվածային սիրո, և միաժամանակ հրավերներ, ուղղված բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդներին, բոլոր ժամանակներին, ա՛յդ սիրով ջերմացնելու հոգիները մարդկային, ա՛յդ սիրով շաղախելու կյանքի գործերը մարդկանց, ա՛յդ սիրով արգասավորելու պատմությունը մարդկության:

Մեր դեպի Արարիչը բարեխնամող և դեպի Նրա արարչագործությունը հիասքանչ, սեր դեպի մարդը, դեպի բոլոր մեր նմանները անխտիր, ահա մայր ապրումը Հիսուսի, ահա սեպուհ պատվիրանը Նրա: Աստուծո ու մարդկանց հանդեպ մեր սիրուց է, որ բխում է գոյության իմաստը երկրային կյանքի և ուրախությունը ապրելու, սերը բարու և ճշմարտի, սերը արդարության ու խաղաղության, սերը շինարար աշխատանքի և համերաշխ գործակցության, մարդկանց և ազգությունների միջև:

Մարդու գոյությունը և պատմությունը պատահական և աննպատակ իրողություններ չեն: Անհնար է համոզվել՝ թե մարդկային կյանքը, նյութական տիեզերքի կույր փոթորկումների մի ակնթարթի փրփուր է միայն:

Մեր սուրբ հայրերից Ներսես Շնորհալի կաթողիկոսը Ամենայն Հայոց մեզանից ութ հարյուր տարիներ առաջ երգել և փառաբանել է այդ սերը, Հիսուսի սերը, աղերսելով, որ այդ սիրով ճմլվեն, շաղախվեն սրտերը մարդկանց՝ «սէր անուն Յիսուս, սիրով քո ճմլեա, սիրտ իմ քարեղէն»:

Ինչքա՞ն այժմեական, ինչքա՞ն ճշմարտացի են հնչում այս սուրբ խոսքերը նաև մեր օրերում:

Սիրելի հավատացյալներ, դիտեցեք աշխարհին, մեր ժամանակների կյանքի պատկերին, միջպետական հարաբերություններին, միջազգային անցուդարձերին ու պիտի տեսնեք, թե մարդկությունը այսօր էլ տագնապում և տառապում է վատառողջ, հիվանդագին մղումներից, շահագործումներից, բռնություններից, ազգամիջյան ատելավառ թշնամություններից, եղբայրասպան արարքներից, արյունալի պատերազմներից:

Մենք ևս, հետևաբար, Շնորհալի մեր մեծ Հայրապետի խոսքերով դիմենք հարուցյալ Աստվածորդուն, աղերսելով՝ Տեր մեր և Փրկիչ մեր Հիսուս Քրիստոս, Քո սիրովդ ճմլիր քարեղեն սրտերը մեր ժամանակների մարդկանց և փրկիր մարդկային աշխարհը վերջնական կործանումից:

Երանի՜ թե մեր օրերի պետությանց սահմանադրություններն ու օրենքները ևս շաղախված լինեին Քրիստոսի սիրով, Քրիստոսի Ավետարանի խաղաղարար շնչով:

Սիրելի ժողովուրդ, Զատիկ է այսօր, մեր Մայր եկեղեցին, Հայաստանյայց առաքելական եկեղեցին, աշխարհի բոլոր քույր եկեղեցիների հետ, ցնծությամբ ու բարձրաղաղակ երգերով ավետում է հաղթական հարությունը Հիսուսի, հավատքով անսասան, որ ինչպես հարուցյալ Փրկչի սիրով ու զո-

հաբերումով խափանվեց մեղքը աշխարհի և մահը պարտվեց հաղթությամբ, այնպես էլ նույն աստվածային սիրո լույսով մարդիկ ու ազգություններ պիտի կարողանան գտնել ճշմարիտ ճանապարհը խաղաղ ու արդար մի երկրային կյանքի:

Որովհետև քրիստոնեությունը լավատեսական աշխարհայացք է՝ Աստուծո և մարդու նկատմամբ, փրկության վարդապետություն է, հաղթության ճանապարհ է:

Հիսուսի կյանքը եթե գերեզմանով վերջանար, այո՛, քրիստոնեությունը կմնար ունայն վարդապետություն, սակայն նրա գերեզմանը դատարկ մնաց, խափանվեց չարը, ու պարտվեց նրա պտուղը՝ մահը: Ահա թե ինչու սուրբ Առաքյալը՝ Պողոս, փոթորկված ուրախությամբ, մեծ ստուգությունն է աղաղակում. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Հայ ժողովուրդը և մեր Մայր եկեղեցին, հարության տեսիլքով ոգեշնչված, միշտ հավատացին չարի պարտության և կյանքի բարի ուժերի հաղթանակին: Այդ հավատքով մեր ազգը իր հերոսական պատմությունը կերտեց և հասավ մեր օրերի վերածնունդին, իբրև ազգություն, իբրև պետություն, իբրև մշակույթ ու իբրև ազգային եկեղեցի:

Քրիստոսի հարության ստուգությունը իր սրտում պայծառ, ազգային պատմության փորձը իր գիտակցության մեջ վառ, ժողովուրդը մեր, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, մնում է հաստատ իր հավատքի վեմի վրա, թե կգա օրը մարդկային բարի ու արդար ուժերի ամբողջական ու վերջնական հաղթանակի: Հիրավի, հակառակ մեր փոթորկահույզ դարաշրջանում դրսևորվող շփոթեցուցիչ և վհատեցուցիչ երևույթների սանձազերծումի, այդ իսկ փոթորկումների ընդմիջից հետզհետե զարգանում է մեկտեղումը և հզորացումը արդարության և խաղաղության ուժերի, աշխարհի բոլոր ժողովուրդների ազատատենչ լայն զանգվածների եղբայրության գիտակցության հաղթական զարթոնքով:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, իր Մայր Աթոռ սուրբ Էջմիածնով, ամուր կանգնած մեր հինավուրց երկրի մայր հողի վրա, մահվամբ մահը հաղթած մեր ժողովրդի հետ մեկ սիրտ, մեկ հոգի, մնում է հավատարիմ իր խաղաղության ուխտին, մնում է հավատարիմ իր մայր հայրենիքի գերագույն շահերին, իր ազգի է՛լ ավելի պայծառ ապագային, ու իր ճակատագիրը կապում է աշխարհի խաղաղարար ուժերի հաղթանակի հետ, միջազգային լարվածության վերացման ու պետությունների համերաշխ գործակցության հրամայականների լույսի տակ:

Սիրելի հավատացյալներ, Խաղաղության Իշխանի հաղթական հարության ստուգությունը մեր հոգիներում, աղոթենք ու գործենք միասիրտ ու միակամ, մեր քույր եկեղեցիների ու մեր եղբայր ժողովուրդների հետ միասին, սրտեռանդ ողջունելով և օրհնելով մեծ Ավետիսը՝ «Փառք հրաշափառ Յարութեան Քո Տէր»:

Սուրբ գրական Հայաստան աշխարհից և Ամենայն Հայոց սրբություն, սրբոց Էջմիածնից բաշխում ենք Ձեզ բոլորիդ սերն ու խաղաղությունը հարուցյալ մեր Փրկչի Հիսուս Քրիստոսի: Ամեն:

Քույր Եկեղեցիներ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ
(Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԿ Բ-ԻՆ (Բեյրութ),
Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՀՄԱՅԱԿ-ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՌՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք),

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօր մեծ առավոտն է մեր հոգիների, որովհետև խաչյալ Քրիստոսը հաղթելով մահն ու չարիքը աշխարհի, մեռելներից հարություն առավ և մեզ պարգևեց մեծ հույսը հավիտենական կյանքի:

Մեր սիրտը լի այս լույս հավատքով, Քրիստոսատես Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից Ձեզ բերում ենք մեծ ավետիսը աշխարհասասան և Մեր աղոթքը ջերմ, որ Փրկչին մեր Հիսուսի հարության շնորհները առատապես իջնեն ձեր եկեղեցու, նրա սպասավորների ու ձեր հավատացյալ զավակների վրա, որպեսզի նրանք բոլորը դառնան «լուսո որդիներ» և ապրեն ու գործեն այս երկրային կյանքը հարության տեսիլքով, հավերժական կյանքի հույսով, որ գերագույն երաշխիքն է երկրային առաքինազարդ ու ստեղծարար կյանքի:

Սուրբ Հարության շնորհները թող ճառագայթեն նաև ձեր մեծ եկեղեցու, ձեր հավատացյալ զավակների համայնքային ու ընտանեկան կյանքից ներս, որպեսզի այդ շնորհներով ստավել աճեն ու զորանան նրանց քրիստոնեական առաքինություններն ու ոգեկանությունը:

Եղբայրական սիրով ողջունում ենք Ձեզ, ձեր եկեղեցու բոլոր ժրաջան հոգևոր հովիվներին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին:

«Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14) և «Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ» (Եբր. ԺԳ 1). ամեն:

«Փառք Յարութեան Քո Տէր»:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկած ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօր մեծ առավոտն է մեր հոգիներուն, զի խաչյալն Քրիստոս հաղթելով մահն ու չարիքը աշխարհի, հարություն առավ մեռելներեն և մեզ պարգևեց մեծ հույսը հավիտենական կյանքի:

Մեր սիրտը լի այս լույս հավատքով, Քրիստոսատես Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն Ձեզի կբերենք մեծ ավետիսը այս աշխարհատասան և Մեր աղոթքը ջերմ, որ Փրկչին մեր Հիսուսի հարության շնորհները առատապես իջնեն մեր Մայր եկեղեցվո և անոր սպասավորներուն և հավատացյալ զավակներուն վրա, որպեսզի անոնք բոլորը դառնան «լուսո որդիներ» և ապրին ու գործեն այս երկրային կյանքը հարության տեսիլքով, որ գերագույն երաշխիքն է երկրային առաքինազարդ ու ստեղծարար կյանքի:

Սուրբ Հարության շնորհները թող ճառագայթեն նաև ձեր հավատացյալ ժողովուրդի համայնքային ու ընտանեկան կյանքեն ներս, որպեսզի այդ շնորհներով առավել աճին ու զորանան անոնց քրիստոնեական առաքինությունները ու հայկական ոգեկանությունը:

Եղբայրական սիրո ողջույն Ձեզ և համայն հայ հավատացյալ Մեր զավակներուն:

«Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14) և «Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ» (Եբր. ԺԳ 1). ամեն:

«Փառք Ցարութեան Քո Տէր»:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



1979 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. 1979 թվականի հունվարին անցկացվեց հերթական համամիութենական մարդահամարը: Մարդահամարի տվյալների համաձայն, Հայկական ՍՍՀ բնակչության թիվը առ 17-ը հունվարի 1979 թ. կազմել է 3.031 հազար մարդ:

2. Հայկական ՍՍՀ բնակչության թվի փոփոխությունը բնութագրվում է հետևյալ տվյալներով.

1913 թ.	1000,1	հազար	մարդ
1940 թ. (գնահատումը)	1320,3	»	»
1959 թ. (ըստ հունվարի 15-ի մարդահամարի)	1763,1	»	»
1970 թ. (ըստ հունվարի 15-ի մարդահամարի)	2491,9	»	»
1979 թ. (ըստ հունվարի 17-ի մարդահամարի)	3030,8	»	»

1970 թ. մարդահամարից հետո անցած ինը տարում Հայկական ՍՍՀ բնակչությունը ավելացել է 538,9 հազար մարդով կամ 21,6 տոկոսով:

Հանրապետության բնակչությունը գլխավորապես ավելացել է բնական աճի հաշվին:

3. Քաղաքային և գյուղական առկա բնակչության թվի փոփոխությունը բնութագրվում է հետևյալ տվյալներով.

Տարիներ	Հազար մարդ	Այդ թվում		Տոկոսներով, ամբողջ բնակչության համեմատությամբ	
		քաղաքում	գյուղում	քաղաքում	գյուղում
1913	1000,1	101,0	899,1	10,4	89,6
1940	1320,3	375,4	944,9	28,4	71,6
1959	1763,1	881,9	881,2	50,0	50,0
1970	2491,9	1481,5	1010,4	59,5	40,5
1979	3030,8	1992,7	1038,1	65,7	34,3

1970 թվականից քաղաքային բնակչությունը ավելացել է 511,2 հազար մարդով, այդ թվում քաղաքներում բնական աճի հաշվին՝ 263,7 հազարով. գյուղական բնակավայրերը քաղաքայինների վերակազմվելու և գյուղական բնակչության քաղաքներ տեղափոխվելու հաշվին՝ 247,5 հազար մարդով:

Մարդահամարների միջև ընկած ժամանակաշրջանում գյուղական վայրերում բնակչության բնական աճը կազմել է 164,4 հազար մարդ, սակայն վերոհիշյալ պատճառներով գյուղական բնակչության թիվը ավելացել է միայն 27,7 հազար մարդով:

4. Մարդահամարի ժամանակ հաշվառվել են 1476,5 հազար տղամարդ և 1554,3 հազար կին: Տղամարդկանց և կանանց տոկոսը փոփոխվել է հետևյալ կերպ.

Տարին	Ամբողջ բնակչությունը		քաղաքային բնակչություն		գյուղական բնակչություն	
	կիսամյակ	մեծամասն	կիսամյակ	մեծամասն	կիսամյակ	մեծամասն
1939	50,6	49,4	50,8	49,2	50,5	49,5
1939	47,8	52,2	47,9	52,1	47,7	52,3
1970	48,8	51,2	48,9	51,1	48,7	51,3
1979	48,7	51,3	48,5	51,5	49,1	50,9

Ըստ 1979 թվականի մարդահամարի, կանանց թիվը 77,8 հազարով գերազանցում էր տղամարդկանց թիվը:

5. Բնակչության թիվը առ 17-ը հունվարի 1979 թ. (հազար մարդ)

Երևան —1019

Լենինական —207

Կիրովական —146

Մարդահամարը անցկացվել է հաշվարարների կողմից բնակչության հարցումների միջոցով: Բնակչության հաշվառման լիակատարությունն ու ճշտությունը ապահովելու համար մարդահամարի ընթացքում և նրանից հետո անցկացվել են վերահսկիչ ստուգումներ:

Մարդահամարի նախնական համառոտ արդյունքները ստացվել են մարդահամարի աշխատողների կատարած հաշվարկումների հիման վրա: Մարդահամարի մանրամասն տվյալները ըստ տերիտորիալ բաժանման, բնակչության տեղաբաշխումը ըստ սեռի, տարիքի, ազգության, լեզվի, կրթական մակարդակի, ամուսնական դրության, ընտանիքի անդամների թվի և մյուս ցուցանիշների, սահմանված ծրագրով մշակվում են ՍՍՀՄ կենտվիճվարչության կենտրոնական հաշվողական կենտրոնի կողմից:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Կալկաթայի հայոց Նազարեթի անվան սուրբ եկեղեցու վարչության հրավերով սույն թվականի հունվարի սկզբներից մինչև փետրվարի կեսերը Մայր Աթոռի պատվիրակները՝ Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թոփուզյանը, եղան Հնդկաստանում՝ անձամբ տանելով նաև Ն. Ս. Օծության ողջույններն ու օրհնությունները հնդկահայությանը: Հընդկահայերը նրանց վերապահել էին սրտաբաց ու ջերմ ընդունելություն: Մայր Աթոռի պատվիրակները ծանոթացան հնդկահայոց թեմի ներկա վիճակին, նրա ազգային-եկեղեցական ու մշակութային կարիքներին և, վերադառնալով ս. Էջմիածին, հանգամանորեն զեկուցեցին Վեհափառ Հայրապետին և Գերագույն հոգևոր խորհրդին:

Ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն են ներկայացվում քաղվածքներ նրանց զեկուցումից:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հնդկաստանի երբեմնի բարգավաճ ու բազմամարդ հայկական գաղթօջախների մնացորդացը ամփոփված է երկու քաղաքներում: Արևմտյան Բենգալիայի խոշորագույն քաղաք Կալկաթայի շուրջ տասը միլիոն հաշվող բնակչության ծոցում մնացել են հազիվ 150—160, իսկ արևմտյան Հընդկաստանի հինգ միլիոնանոց Բոմբեյ քաղաքում՝ 14—15 հայեր: Այսօր հայեր չկան Ագրայում, Դելհիում, Սուրաթում, Մադրասում, Չինսուրահում, Չանդերնագորում, Սաիդապատում, Մոնղուրում, Գվալիորում և այլ վայրերում, սակայն առկա են հայկական մարած գաղթօջախների խոր հետքեր:

Հնդկահայ գաղթօջախները թեև այսօր թուլացել են, ամայացել, սակայն իրենց չորսդարյա պատմության ընթացքում կարևոր դեր են կատարել ինչպես հայ, այնպես էլ ասպնջական հնդիկ ժողովրդի կյանքում: Սկզբում Մադրասը, հետագայում և Կալկաթան հանդիսացան հայ եկեղեցական-մշակութային, հասարակական-քաղաքական մտքի և լուսավորական շարժման նշանավոր կենտրոններ, որոնք բացառիկ դեր կատարեցին նաև հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Հարություն քհն. Ծմավոնյանը, Շահամիրյանը և նրանց գաղափարական մյուս գործակիցները դարձան հայ ժողովրդի զարթոնքի առաջին մուներիկները՝ նոր ժամանակներում:

Հնդիկ ժողովրդի հետ կապված լինելով տնտեսական շահերի ընդհանրությամբ, հնդկահայերը գործուն մասնակցություն են բերել նրա ազատագրական պայքարին: 1662 թ. Մալաբարում, 1760—1764 թթ. Բենգալիայում եվրոպական նվաճողների դեմ բռնկված ապստամբություններում հերոսական վարքով աչքի են ընկել շատ հայեր: Բենգալիայում կռվող հնդկական զորքերի զորահրամանատարներից մի քանիսը հայեր էին, իսկ ընդհանուր հրամանատարը՝ Գորգի խան վերանվանված հայ վաճառական Գրիգոր Հարությունյանն էր: Հնդկա-

կան սարեգրություններում դրվատանքով են հիշատակվում հայ գեներալներ, պետական բարձր պաշտոնատարներ, ճարտարապետներ և հատկապես մեծատուն վաճառականներ, որոնք եվրոպացիներից առաջ ամրացել էին Հնդկաստանում:

Հնդկահայ գաղթօջախների բազմահարուստ պատմության վկաներ են հնօրյա եկեղեցիները, մատուռները, գերեզմանատները և նյութական մշակույթի այլ հուշարձաններ, որոնք տակավին կանգուն են մնում Հնդկաստանի տարբեր քաղաքներում: Դրանցից հնագույնը՝ Չինսուրահի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, կառուցվել է 1695 թ. մեծատուն վաճառականներ Հովհաննես և Հովսեփ Մարգարյանների տրամադրած միջոցներով և հանդիսանում է քրիստոնեական հնագույն աղոթատեղիներից մեկը ողջ Բենգալիայում: Եկեղեցու շրջափակում կան շուրջ 100, իսկ գավիթում՝ 28 գերեզմաններ: Չինսուրահում հայեր չլինելու հետևանքով, այս եկեղեցում տարին միայն մի անգամ է պատարագ մատուցվում՝ Կալկաթայից այնտեղ ժամանած հավատացյալների համար:

Կալկաթայի առաջին հայկական եկեղեցին՝ ս. Հովհաննեսը, կառուցվել է 1707 թ.՝ դրանից առնվազն 80 տարի առաջ ձեռք բերված հայոց գերեզմանատան հողամասում, սակայն լինելով փայտաշեն, երկար կյանք չի ունեցել, և 1724 թ. նրա տեղում կառուցվել է մի նոր եկեղեցի, որն իր մեկենասի՝ մեծատուն Նազարի անունով վերանվանվել է Նազարեթի ս. եկեղեցի: Այդ գերեզմանատանը թաղված են ականավոր հասարակական գործիչ Հովսեփ Էմինը, բարեգործ Մասեհ Բաբաջանը, Աբգարյան, Աղաբեկյան, Զոհրապյան և այլ բազմաթիվ մեծատուն-գերդաստանների անդամները: Այնտեղ է գտնվում Կալկաթայի քրիստոնեական հնագույն գերեզմանը, որի տապանաքարը կրում է հետևյալ մակագրությունը. «Այս է տապան ողորմած հոգի Սուքիազի կողակից Ռըզաբիբէի որ փոխեցաւ աշխարհէս ի կեանս յաւիտենից. թիվն 15 նախա 21», այսինքն 11 հուլիսի 1630: Այս տապանաքարը հայտնաբերվել է 1894 թ. և երկար ժամանակ գտնվել է Կալկաթա քաղաքի պատմությունը ուսումնասիրող գիտնականների ուշադրության կենտրոնում:

Կալկաթայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է XX դարասկզբին, երբ քաղաքի ընդարձակվելու հետևանքով Նազարեթի անվան եկեղեցին մնացել է հայաբնակ թաղերից հեռու, ծայրամասում: Այս եկեղեցուն կից բարձրանում է ազգային ծերանոցի եռհարկանի շենքը, որտեղ պատրաստարված ավելի քան երեսուն անօգնական ծերերի բոլոր ծախսերը ծածկվում են եկեղեցապատկան կալվածների եկամուտներով:

Կալկաթայի և Չինսուրահի հայկական եկեղեցիները, նրանց կտակված մեծագումար անշարժ ու շարժուն գույքը գտնվում է Նազարեթի անվան ս. եկեղեցու վարչության տնօրինության ներքո: Վարչությունն ընտրվում է եկեղեցու ընդհանուր անդամական ժողովում՝ չորս տարվա համար: Ներկա վարչությունը բաղկացած է հետևյալ 11 անձերից. Կարո Մակ Ջոն (նախագահ), Լարի Մարտին և Պետեր Ա. Բազիլ (որդեններ կամ գործերի կառավարիչներ), Կարո Ա. Մարտին, Նեֆտոն Ա. Բազիլ, Ջոն Մարտին, Հայկ Ա. Սուքիաս, Մալկոլմ Հ. Սուքիաս, Մարգար Ա. Մարգար, Մարտին Բազիլ, Ջոն Դ. Արաթուն, որոնք կալկաթահայ հասարակության լավագույն ներկայացուցիչներից են: Գործերի կառավարիչներն ընտրվում են վարչության նիստում՝ երկու տարով, և գլխավորում են եկեղեցու վարչատնտեսական ընթացիկ գործունեությունը:

Արևմտյան Հնդկաստանում առաջին հայկական եկեղեցին՝ ս. Մարիամ Աստվածածինը, կառուցվել է XVII դարի վերջերին Սուրաթում, որտեղ այն ժամանակ հաստատված էին զգալի թվով հայ մեծատուն վաճառականներ: 1778 թ. այդ եկեղեցին ի հիմանե վերակառուցվել է և կանգուն է մնացել մինչև XX դարի սկզբները: Սուրաթի հայկական գաղթօջախը վաղուց վերացել է, և այսօր նրա գերեզմանատունն ու մատուռը որպես պատմական հուշարձան դրվել են պետական համապատասխան գերատեսչության վերահսկողության ներքո, թեև համարվում են Բոմբեյի հայկական համալնքի սեփականությունը:

Բոմբեյի ս. Պետրոս եկեղեցին կառուցվել է 1796—1797 թթ. Սուրաթից այնտեղ տեղափոխված հայ մեծատուն Ժակոբ Պետրոսի նվիրաբերությամբ: 1956—1957 թթ. Բոմբեյի եկեղեցական վարչության որոշումով հնօրյա, արդեն խարխլված ս. Պետրոսը քանդվել է և նրա տեղը կառուցվել է համանուն փոքրիկ, բայց շքեղ եկեղեցին, ինչպես նաև նրան առընթեր ուսթհարկանի արդիական «Արարատ» շենքը, որը բավական կարևոր եկամտի աղբյուր է: Ս. Պետրոս եկեղեցու ներկա վարչությունը բաղկացած է հետևյալ չորս անձերից. Ռոզա Բազիլ (նախագահ), Հայկ Գալալճյան (տրրստի), Նվարդ Բարսեղյան-Մեհթա և բժիշկ Արամ Եղիազարյան (որդեններ կամ գործերի կառավարիչներ): Հայաստանյաց եկեղեցու այդ զավակները հնարավոր ամեն

ինչ անում են, որպեսզի անկորուստ պահպանվի մարող գաղթօջախի ունեցվածքը:

Հնդկաստանում գտնվելու առիթով, տ. Սիոն արքեպիսկոպոսը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Կալկաթայի, Բոմբեյի և Չինսուրահի եկեղեցիներում: Սուրբ Սեղանին սպասարկում էր հնդկահայոց երիտասարդ ու գործունյա հոգևոր հովիվը՝ Էջմիածնի ճեմարանի նախկին սան տ. Հակոբ քահանա Կյոքճյանը:

Հարավ-արևելյան Հնդկաստանի խոշորագույն քաղաք Մադրասի հայկական առաջին եկեղեցին կառուցվել է 1712 թ., սակայն այն քանդվել է 1760—1764 թվականների պատերազմական գործողությունների հետևանքով: 1772 թ. մադրասահայ վաճառականների առատաձեռնությամբ քաղաքի կենտրոնում կառուցվել է ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին և ձեռք են բերվել եկեղեցապատկան մեծագումար կալվածներ: 1963 թ., երբ արդեն մարել էր Մադրասի աղթօջախը, Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ ս. Աստվածածինը և եկեղեցապատկան կալվածները դրվեցին Կալկաթայի Հայկական ընկերակցության (Արմինիոն ասոսյեշն) տնօրինության ներքո:

Հայկական ընկերակցությունը կարևոր դեր է կատարում Կալկաթայի եկեղեցական, ազգային-հասարակական և կրթական-մշակութային կյանքում: Այն հիմնադրվել է 1860 թ., սակայն որոշ ժամանակ անց դադարել է գործելուց, 1922 թ. վերակազմվել է և այնուհետև անընդմեջ գոյատևել է մինչև այսօր, ծավալելով գնահատելի գործունեություն: Ընկերակցության նախագահը՝ բազմավաստակ հասարակական գործիչ Նեֆտոն Բազիլը, նրա պատվո նախագահը՝ ժրաջան Ժ. Դ. Արաթունը, և վարչության մյուս անդամները լծված են շինարար աշխատանքի, ձգտելով սատարել հնդկահայերի ազգապահպանման գործին: Ինչպես Կալկաթայի և Բոմբեյի եկեղեցական վարչությունների, այնպես էլ Հայկական ընկերակցության մշտական հոգատարության առարկա են Մարդասիրական ճեմարանը և Դավթյան օրիորդաց դպրոցը:

Հնդկահայ դպրության անմար օջախը՝ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը, իր դռները բացել է 1821 թ. ապրիլի 2-ին Աստվածատուր Մուրադխանյանի, Մնացական Վարդանյանի և այլ բազում երախտավորների տրամադրած միջոցներով: 1922 թ. հնդկահայ Դավիթ Դավթյանի բարերարությամբ շարք է մտել նաև մի նոր կրթական օջախ՝ Դավթյան դպրոցը, որը 1949 թվականից համարվում է Ճեմարանի աղջկանց բաժինը: Ներկայումս այդ կրթական օջախներում անվճար սովորում են շուրջ 150 գիշերօթիկ երկսեռ սաներ, հիմնականում Իրանի տարբեր շրջաններից եկած: Առանձնահատուկ կարևորություն է ընծայվում մայրենի լեզվի, հայոց գրականության, պատմության և Հայաստանի, ներառյալ Սովետական Հայաստանի աշխարհագրության դասավանդմանը:

Հնդկահայ մշակութային կյանքում գնահատելի աշխատանք են ծավալում Մարդասիրական ճեմարանի նախկին միությունը և նրա շուրջ համախմբված մտավորականները ու հասարակական գործիչները: Հիմնականում Կարո Մարտինի, Հովհաննես Միքայելյանի, Զաբելա Հունանյանի և այլոց ջանքերով վերականգնվեց ճեմարանի տպարանը, սակայն նրանց բավական լայն հրատարակչական ծրագրի միայն մի մասը իրականացվեց. 1950—1956 թթ. հրատարակվեցին «Նոր Ազդարար» պարբերականը և մի քանի գրքեր: Ճեմարանի նախկին սաներից ոմանք և նրա միջավայրում հասունացած մի շարք մտավորականներ զգալի ավանդ են ներդնում հայ-հնդկական մշակութային կապերի զարգացման գործում: Դրանցից առանձնահատուկ հիշատակության արժանի է Հնդկաստանի կանանց ազգային կոնգրեսի նախկին նախագահ Աննա Բազիլը, որի գրչին է պատկանում «Հայկական գաղթօջախները Հնդկաստանում» անգլերեն ուշագրավ մենագրությունը: Հայ և հնդիկ հասարակության կողմից գնահատված անգլիագիր հեղինակներ են նաև Եսայի Մարտինը, ճեմարանի դասախոս, պատմաբան Մարտին Բազիլը և ուրիշներ:

Հնդկահայ գաղթօջախների խիստ նոսրացած մնացորդացին սպառնում է ձուլման վտանգը: Մայրենի լեզվի տեղն աստիճանաբար գրավում է անգլերենը, հայկական բարքերն ու սովորույթները փոխարինվում են օտար ապրելակերպով: Բայց զարմանալիորեն կենսունակ է այն սերը, որով հնդկահայությունը կապված է մնում ս. Էջմիածնի և մայր հայրենիքի հետ: Եթե չլիներ օրինական հպարտության և ազգային արժանապատվության այն զգացումը, որ մայր հայրենիքի վերելքն ու ս. Էջմիածնի պայծառությունն առաջացնում են յուրաքանչյուր հնդկահայի մոտ, անկասկած վաղուց վերացած կլիներ հնդկահայությունը:

Հնդկահայերը վերին աստիճանի զգայուն են այն ամենի նկատմամբ, ինչ գալիս է ս. Էջմիածնից: Դրանով էր հիմնականում պայմանավորված փոխադարձ սիրո և հարգանքի այն մթնոլորտը, որ մշտապես տիրում էր եկեղեցական վարչությունների,

Հայկական ընկերակցության ներկայացուցիչների, Մարդասիրական ճեմարանի հոգաբարձուների, հասարակական գործիչների, մտավորականների հետ Մայր Աթոռի պատվիրակների ունեցած խորհրդակցություններում և հանդիպումներում:

Հնդկահայությունը մինչև այժմ էլ երախտագիտությամբ է հիշում 1963 թվականի վերջերին Հայոց Հայրապետի հովվապետական այցելությունը Հնդկաստան, երբ հնդկահայ ողջ համայնքները ապրեցին զանազան քաղաքների մեջ ազգային հպարտության և հոգևոր ցնծության օրեր, շնորհաբեր ներկայությանը Նորին Սուրբ Օծության:

Այդ առումով բնութագրական է նաև այն, որ Մայր Աթոռի պատվիրակներին հնարավորություն տրվեց ելույթներ ունենալու հրապարակային միջոցառումներում, հանդեսներում: Նրանք ամենուր լսելի դարձրին ս. Էջմիածնի ձայնը, հաղորդելով Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու պատգամը՝ ուղղված հնդկահայերին, այն է՝ սիրեցեք և ձեր երազանքների խարիսխ դարձրեք վերածնված Մայր Հայաստանը, ամուր կառչեցեք հայոց հավատքի վեմ ս. Էջմիածնին, հավատարիմ քաղաքացիներ եղեք ձեր երկրորդ հայրենիքին՝ ասպնջական Հնդկաստանին:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի.—Զ կիրակի քառասնորդական Պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մանուկ քհն. Մարգարյանը, և «Հայր մեր»-ից առաջ «Տուր մեզ Փրկիչ զողորմութիւն և զմեղացս զթողութիւն» (շարական) բնաբանով քարոզ է խոսում տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետին և Մայր Աթոռին հրաժեշտ տալով, Տորոնտո (Կանադա) մեկնեցին Մայր Աթոռի միաբան տ. Արիս եպս. Ծիրվանյանը, դոկտ. Վարդան Այնաջյանը, պարոնայք Պետրոս Մուշյանը և Արմեն Քյուրքճյանը, որոնք ուխտավորաբար մեկ շաբաթ գտնվում էին Մայր Աթոռում և հայրենիքում:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 8-ին, կիրակի. Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, որը «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Զի որպէս փայլակն, որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ» (Մատթ. ԻԴ 27) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում տեղի է ունենում Դոնբաս-ցեքի ավանդական արարողություն՝ նախագահությամբ լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

* * *

Ապրիլի 9-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունե-

ՀԱՅԿ ԳՐՏԻՐԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՌԱՔԵԼՈՅ

նում դասախոսություն՝ առողջապահության վերաբերյալ: Ժամանակակից մի քանի հիվանդությունների մասին դասախոսում է Էջմիածին քաղաքի վաստակավոր բժշկուհի Թամարա Ավետիսյանը:

Վերջում հարգելի բժշկուհին պատասխանում է ուսանողների հարցերին:

* * *

Ապրիլի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը ներկայացնում է վերջերս ֆրանսերեն լեզվով լույս տեսած հայ կաթողիկե հոգևորական Կարապետ եպս. Ամատունու «Հայ եկեղեցին և կաթոլիկությունը» գիրքը:

Վերջում հայր սուրբը պատասխանում է միաբանների հարցերին:

* * *

Ապրիլի 12-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, միջօրեի ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը կատարում է Ոտնլվայի կարգը:

Ժամը 19-ին սկսվում է մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի սոսկալի չարչարանաց և խաչելության հիշատակին նվիրված Ավագ ուրբաթի հսկման արարողությունը: «Փառք ի բարձունս»-ից առաջ քարոզում է տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը՝ խոսելով Հիսուսի մատնության, խաչելության և հոգևոր փրկագործության նշանակության մասին:

* * *

Ապրիլի 13-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ.

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է Թաղման կարգը և ապա Թափոր թաղմանն՝ հանդիսադրությամբ տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

* * *

Ապրիլի 14-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ծրագալոյց Զատկի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում Ծրագալոյցի ս. պատարագ է մատուցում տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի ուսանող սարկավագները ընթերցում են Դանիելի գիրքը: Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Զատկի նախատոնակ: Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունը Վեհարանում շնորհավորում է Նորին Սրբությանը Զատկի նախատոնակի առթիվ:

Երեկոյան ժամը 20.30-ին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տեղի է ունենում Նավակատիքի ավանդական ընթրիք:

* * *

Ապրիլի 15-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի զատկական քարոզը նույն օրը, երեկոյան ժամը 23-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոյով:

Հայոց Հայրապետի զատկական քարոզը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3:

* * *

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհարանի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը և այլ հրավիրյալներ:

* * *

Ապրիլի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Ապրիլի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Բեյրութից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Մայր Աթոռի միաբան տ. Գնել եպս. Մերեճյանը, որը, Մայր տաճարում իր ուխտը կատարելուց հետո, այցելում է Վեհափառ Հայրապետին:

Սրբազանին ընկերակցում էին Բեյրութի ծանոթ ազգայիններ տեր և տիկին Վահե Շեքերջյանները՝ որպես ուխտավոր:

Այս առթիվ պրն. Վահե Շեքերջյանը Վեհափառ Հայրապետին հանձնում է, որպես աջահամբույր, 10.000 դոլլարի մի գումար՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

*
* *

Ապրիլի 19-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա շրջապտույտի մեկնեցին ս. Գեղարդ և Գառնի պատմական վայրերը:

*
* *

Ապրիլի 20-ին, ուրբաթ.—Այսօր, տասնօրյա զատկական արձակուրդից հետո, հոգևոր ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները:

*
* *

Ապրիլի 22-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակի).

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Սիոն արքեպ. Մանուկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ ինս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ» (Յովհ. ԺԱ 25) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհարանի սեղանատանը կազմակերպվել էր ընդունելություն, որին ներկա էին տ. Սիոն, տ. Հուսիկ, տ. Գնել սրբազանները, Լոնդոնի ս. Պետրոս եկեղեցու համայնքային եկեղեցական վարչության անդամներ պրն. Հարություն Այվազյանը և պրն. Տիրան Ուզունյանը, որոնք ուխտավորաբար գտնվում էին Մայր Աթոռում, ինչպես նաև Բեյրութից տեր և տիկին Շեքերջյանները:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկայությունը Գնել սրբազանի, լոնդոնահայ պարոնայք Հարություն Այվազյանի և Տիրան Ուզունյանի:

Այս առթիվ Հայոց Հայրապետը, Իր օրհնությունը բաշխելով տեր և տիկին Շեքերջյաններին, պրն. Վահե Շեքերջյանի կուրծքը զարդարեց ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ականակուռ շքանշանով, որպես Մայր Աթոռի երիտասարդ բարերարի:

*
* *

Ապրիլի 24-ին, երեքշաբթի.—Ցիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի:

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության, բարձրացավ Ծիծեռնակաբերդ՝ «Հոգւոց» արտասանելու Ապրիլյան եղեռնի բյուրավոր հայ նահատակաց խընկելի հիշատակին, այնուհետև գեղեցիկ ծաղկեպսակ դրեց հուշարձանի առաջ:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ընկերակցում էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

*
* *

Նույն օրը, ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, որը «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ 24) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարի հյուսիսային կողմում կանգնեցված Եղեռնի հուշարձանի առջև, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն:

Ժամը 15-ին հոգևոր ճեմարանի ուսանողությունը, ծաղիկներ ձեռքներին, բազմահազար ուխտավորների հետ, բարձրանում է Ծիծեռնակաբերդ՝ խոնարհվելու նահատակաց հուշարձանի առաջ:

*
* *

Ապրիլի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսում է դարասկզբի հայոց մեծ Եղեռնի և ներկա հայոց հայրենի վերածնդի մասին: Ոգեկոչելով Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակը, Հայոց Հայրապետը նշեց, որ այսօրվա մեր վերա-

ծնված մայր հայրենիքը գեղեցկագույն հուշարձանն է մեր նահատակներին՝ հայրենական վերածննդի այս խոստումնալից օրերին:

*
* *

Ապրիլի 29-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակի).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մանուկ քհն. Մարգարմանը: «Հայր մեր»-ից առաջ «Ուղիղ եղիցին աղօթք մեր, որպէս խունկ առաջի քո Տէր (Սաղմոս) բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ հանգուցյալ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի մահվան տարելիցի առթիվ կատարվում է հոգեհանգիստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Իրաքի հայոց Ազգային կենտրոնական վարչության հրավերով, ապրիլի 5-ին հովվական այցելությամբ Իրաք մեկնեց Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ Զատկի տոնի առթիվ տանելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և նախագահելու զատկական եկեղեցական հանդիսություններին:

Տ. Արսեն սրբազանի հետ նույն օրը Բաղդադ մեկնեց նաև Մայր Աթոռի միաբան և Իրաքի հայոց թեմի նորընտիր առաջնորդական տեղապահ տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

Բարձրաստիճան հյուրերին Բաղդադի օդանավակայանում դիմավորում են Ազգային կենտրոնական վարչության անդամները՝ գլխավորությամբ Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանի, քահանայից դասը և համայնքի զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սրբազանը և տ. Ավագ վարդապետը առաջնորդվում են Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: «Հրաշափառ»-ով եկեղեցի մուտք գործելուց հետո տ. Արսեն եպիսկոպոսը հաղորդում է Հայոց Հայրապետի ողջույնն ու օրհնությունը ներկա հավատացյալներին:

Ապրիլի 6-ին ս. պատարագ է մատուցվում Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, և ապա առաջնորդարանի դահլիճում տեղի է ունենում ընդունելություն՝ ի պատիվ Մայր Աթոռից ժամանած հյուրերի:

Ժամը 12-ին առաջնորդարանի դահլիճում գումարվում է Իրաքի Ազգային կենտրոնական վարչության նիստը, որտեղ տ. Արսեն եպիսկոպոսը ժողովականներին է ներկայացնում Իրաքի հայոց նորընտիր տ. Ավագ վրդ. Ասատուրյանին:

Հատենի ժողովը ընթերցվում է հոտնկայս Հայոց Հայրապետի նամակը, որով հաղորդվում էր տ. Ավագ վարդապետի՝ Իրաքի հայոց առաջնորդական տեղապահի պաշտոնը ստանձնելու մասին:

Ապրիլի 7-ին, շաբաթ օրը, տ. Արսեն սրբազանը, ուղեկցությամբ Ազգային կենտրոնական վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանի, այցելում է Բասրայի հայոց եկեղեցի և կիրակի, Ծաղկազարդի օրը, ս. պատարագի մատուցմամբ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում տեղի հայ հավատացյալներին:

Ապրիլի 10-ին, երեքշաբթի օրը, տ. Արսեն եպիսկոպոսը, ուղեկցությամբ դոկտ. Հասրաթ Միքայելյանի, տ. Ավագ վարդապետի, տ. Օշական քահանայի այցելում է Մուսուլ և Զախո:

Մուսուլում նույն օրը, երեկոյան, տ. Արսեն եպիսկոպոսը, ողջունելով եկեղեցում հավաքված հավատացյալներին, հաղորդում է Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Ապրիլի 11-ին, չորեքշաբթի օրը, տ. Արսեն եպիսկոպոսը այցելում է Զախոյի հայ համայնք, որի անդամները քրդախոս են, բայց ջերմ հավատացյալներ և հայրենասերներ: Այդ օրը տոն էր Զախոյի բովանդակ հայրենակարոտ հայության համար, հայություն, որը իր որդիական անկեղծ սերն էր հայտնում Մայր Աթոռին և Հայոց արժանընտիր Հայրապետին, որ չի մոռացել հեռավոր Իր զավակներին և Իր ներկայացուցչի միջոցով ս. Էջմիածնից ուղարկել Իր սիրո և օրհնության խոսքը:

Տ. Արսեն սրբազանը և նրան ուղեկցող անձինք Մուսուլ և Զախո կատարած իրենց այցելությունից վերադարձան Բաղդադ մեծ ոգևորությամբ և լավագույն տպավորություններով:

Ապրիլի 12-ին, Ավագ հինգշաբթի: Տ.

Արսեն եպիսկոպոսը Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում նախագահում է «Ոտնլուայի» և ապա «Խաւարման» հանդիսավոր արարողություններին և քարոզում «Տէր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» բնաբանով:

Ապրիլի 13-ին, ուրբաթ օրը, ժամը 17-ին, տ. Արսեն եպիսկոպոսը հանդիպում է ունենում Բաղդադի հայոց ՀԲԸ միության ղեկավարների և անդամների հետ:

դադ կատարած հովվապետական օրհնաբեր այցելության ուրախ առիթով, արժանացել էին ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ շքանշանների՝ հայ համայնքի ծոցում իրենց կատարած շնորհակալ եկեղեցանվեր և հասարակական գործունեության համար:

Ապրիլի 15-ին, Զատիկ. Քրիստոսի ս. Հարության հրաշափառ տոնը: Այս մեծ տոնի առթիվ տ. Արսեն եպիսկոպոսը հանդի-

Տ. Արսեն սրբազանը, տ. Ավագ վարդապետը Զախոյում, մի խումբ հավատացյալների հետ

Նույն երեկոյան, ավելի ուշ, սրբազանը հյուրն է լինում Բաղդադի Հայ երկսեռ երիտասարդաց միության ղեկավարության և անդամների:

Ապրիլի 14-ին, Ծրագալույց ս. Զատկի: Օրվա տոնի առթիվ իր անդրանիկ պատարագն է մատուցում, որպես Իրաքի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, տ. Ավագ վրդ. Ասատուրյանը:

Հավարտ ս. պատարագի Բաղդադի հայոց Ազգային ծերանոցի մեջ, ի պատիվ սրբազանի և տ. Ավագ վարդապետի, կազմակերպվում է ընդունելություն: Այս առթիվ տ. Արսեն սրբազանը հանդիսավորապես Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակներն է հանձնում դոկտ. Հասրաթ Միքայելյանին և Բաղդադի հայոց ՀԲԸ միության փոխատեղապետ տիար Աբրահամ Շահինյանին, որոնք մեկ տարի առաջ, 1978 թվականի հունվար ամսին Նորին Սրբության Բաղ-

սավոր ս. պատարագ է մատուցում ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և «մահուամբ զմահ կոխեաց» Բանին կենաց քարոզով մխիթարում ներկա հավատացյալներին:

Բաղդադում գտնված օրերին տ. Արսեն եպիսկոպոսը և տ. Ավագ վարդապետը ընդունում են այցելությունը Բաղդադի կաթողիկե հայոց առաջնորդ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանի և ապա փոխադարձում այդ այցելությունը:

Ապրիլի 16-ին տ. Արսեն եպիսկոպոսը վերադառնում է Մայր Աթոռ՝ իր հետ բերելով Իրաքի բովանդակ հայության, Ազգային կենտրոնական վարչության, քահանայից դասի, բոլոր կազմակերպությունների որդիական երախտագիտությունն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին և դեպի նրա արժանավոր Գահակալը:

ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 7-ին, չորեքշաբթի օրը, ժամը 14-ին, Վեհարանում Հայոց Հայրապետը բարեհաճեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան հանձնել Երևանի սուրբ Հովհաննես եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ Գևորգ Համալյանին՝ ի գնահատություն նրա երկար տարիների եկեղեցանվեր աշխատանքի:

Հանդիսությանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, այդ օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, ինչպես նաև Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներ, քահանա հայրեր և այլ հրավիրյալներ:

Տ. Կոմիտաս սրբազանը Հայոց Հայրապետին ներկայացրեց պատվարժան հյուրերին և նշեց օրվա հանդիսության նպատակը:

Այնուհետև խոսք առավ Նորին Սուրբ Օծությունը, ողջունեց բոլոր ներկաներին և հայրապետական Իր բարձր գնահատությանն ու օրհնությանը արժանացրեց ս. Հովհաննես եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ Գևորգ Համալյանի բազմամյա եկեղեցանվեր և անձնվեր ծառայությունները և, բոլոր ներկաների ծափողջույնների ներքո, նրա կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Ապա Վեհափառ Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսքով հանդես եկավ Գևորգ Համալյանը:

Սույն հանդիսության ժամանակ, հանուն Երևանի ս. Հովհաննես եկեղեցու եկեղեցական խորհրդի, հետևյալ սրտառուչ ուղերձն ընթերցեց նույն խորհրդի անդամ Էդվարդ Ցիցինյանը.

«Ձերդ Սրբություն,

Այս բարեպատեհ առիթից օգտվելով՝ կփութամ նախ մեր սիրո և շնորհակալության խոսքն ուղղել Ձերդ Սրբությանը, որ մեզ արժանացրեց Ձեր կողմից բարձր գնահատված այս հանդիսման բացառիկ պատվին:

Այնուհետև թող մեզ թույլ տրվի մեր երախտագիտական խոր զգացմունքը արտահայտել Ձերդ Սրբությանը, որ բարեհաճել էիք Ձեր սրբատառ կոնդակով ավագության կոչում շնորհել ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ տ. Նշան քահանա Հանեյանին՝ միջնորդությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի:

Նույնպես Խորհուրդիս մեծ գոհունակություն պատճառեց մեր մեծահարգ նախագահ պարոն Գևորգ Համալյանին «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով պարգե-

վատրելը Ձերդ Սրբության մաղթանքներով և հայրական օրհնություններով շարադրված կոնդակով:

Ձերդ Սրբություն, համոզված եղեք, որ առաքինազարդ Հայրապետի Ձեր կերպարը հանդիսանում է մեր բոլորիս սրտերի բաբախման կարգավորիչը, քանի որ մեծ է Ձեր հմայքը ոչ միայն հայ ժողովրդի զավակների վրա, այլ նաև համայն աշխարհի քրիստոնյա եկեղեցիների հոգևոր պետերի և պետությունների քաղաքական ղեկավարների վրա:

Ուրախալի է արձանագրել, որ դարերի ընթացքում տրորված Հայաստանյայց եկեղեցին, պատռելով իրեն շրջապատող երբեմնի խավարի քողը, Ձերդ Սրբության օրով ապրում է իր լուսավոր վերածնունդը՝ եղբայրական սիրո ամուր կապերով զոդված Ռուս պրավոսլավ եկեղեցու հետ, Քրիստոսի սիրո մեջ, և այդ փաստը գալիս է մի անգամ ևս հաստատելու այն ճշմարտությունը, որ Հայաստանյայց եկեղեցին եղել է և լինելու է ոչ միայն մեր ժողովրդի հավատքի և հույսի չցամաքող ակունքը, այլ նաև մեր ազգային ինքնության անսասան պատվանդանը, իր եռամեծ սուրբ Հայրապետների ազգանվեր շինարար գործերով, որոնց արժանավոր հաջորդներից մեկն է նաև Ձերդ Սուրբ Օծությունը՝ խաղաղության և ազգերի եղբայրության անվեհեր մարտիկը:

Թույլ տվեք ինձ, Ձերդ Սրբություն, մաղթել Ձեզ քաջառողջություն և անսպառ եռանդ, որպեսզի տակավին երկա՞ր ու երկա՞ր տարիներ կարողանաք հաջողությամբ կյանքի կոչել Ձեր եկեղեցաշեն բոլոր ծրագրերը:

Ձերդ Սրբության գավազանը, իբրև Մովսեսի հրաշագործ գավազան, թող առաջնորդի ու պահի հայ ժողովրդին, իսկ Քրիստոսի վերջին շնչով օծված և Աստվածամոր արտասուքներով ողողված սուրբ խաչը, որ պատկերված է Ձերդ Սրբության վեղարի վրա, թող դառնա աշխարհի բոլոր ժողովուրդների միջև հույսի, սիրո և խաղաղության վսեմ խորհրդանշան»:

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի հանձնման հանդիսությունն ավարտվեց Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով և օրհնությամբ:





ԱՅՑ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Մայր Աթոռիս միաբան և Ֆրանսիայի Նիցցա քաղաքի և շրջակայքի հայոց հոգեվոր հովիվ տ. Տարոն ծ. վրդ. Մերեճյանը 1978 թվականի սեպտեմբերի 16—18 օրերին իբրև զբոսաշրջիկ այցելել է Սինգապուր քաղաք:

Ներշնչված՝ ժամանակին աշխույժ մի հայ գաղութ հյուրընկալած, այդ գեղեցիկ քաղաքի հուշերի մեջ տակավին վերապրող հայկականության խորհրդավոր զգայականությամբ, հայ սուրբը ամսագրիս խմբագրությանն է ուղարկել սրտառուչ մի թղթակցություն:

Թղթակցությունը ենթավերնագրված է «Այց Սինգապուրի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին», որը կազմում է Տարոն ծ. վարդապետի «Ճանապարհորդական հուշեր» գործի մի գլուխը:

Տ. Տարոն ծ. վարդապետը նախ համառոտակիորեն ներկայացնում է Արարատյան դաշտից 1604 թվականին պարսից Շահ-Աբաս արքայի կողմից դեպի Պորսկաստան բռնի կերպով տեղահանված հոծ մի հայ զանգվածի պատմականը, զանգված, որի մի կարևոր մասն էլ տարածվելով հասնում է մինչև Ծայրագույն Արևելք:

Ուր որ հասնում են հայերի այս խմբերը, կազմավորվում են իբրև եկեղեցական համայնքներ, աշխույժ մասնակցություն են բերում տվյալ երկրների տնտեսական-մշակութային կյանքին, ապա, դարերի ընթացքում զանազան պատճառներով անհետանալով այդ երկրների ընկերային կյանքի հրապարակից, իրենց աշխատասիրության, ստեղծագործ ոգու, շինարարական տաղանդի հետքերն են թողնում այնտեղ: Դրանցից են տակավին տասնյակներով այդ հեռավոր երկրներում կանգուն մնացած եկեղեցիներ, դպրոցներ, տպարաններ, վաճառատներ, բնակելի տներ, հայկական անուններով փողոցներ և... գերեզմանոցներ:

Տ. Տարոն ծ. վարդապետը իր հուշերի մեջ կենտրոնանում է Սինգապուր քաղաքի վրա, համառոտակի անդրադառնում քաղաքի հիմնադրության պատմությանը և նրա արագ աճին, հայերի՝ այնտեղ հաստատվելուն և 1830 թվականին եկեղեցի և դպրոց բացելու աշխատանքներին:

Նշելով, որ 1835 թվականին է կառուցված քաղաքի ամենահին՝ ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը պետության կողմից պահպանվում է իբրև պատմական հուշարձան, և որին ինքը այցի է եկել ուխտավորաբար, հայր սուրբը կատարում է գեղեցիկ մտորումներ և խորհրդածություններ:

Նա խոսքի է նստում եկեղեցու պահպանության տակ հանդարտորեն ննջող հայ հոգիների հետ. «Ներե ուխտավորիս, եղբայր հավիտենական, եթե վրդովեցի քեզ՝ դարերու խաղաղությանդ մեջ: Այսօր քեզի այցի կուգամ ամպերու վրայով: Թող վեր հառնե քու հոգին այժմ և զգենու մարմին, ինչպես երբեմն էիր, միասին նստելու համար անգամ մը ևս մեր նախնյաց ուխտավորի սեղանին շուրջ՝ ծալապատիկ, խրախճանքե արբեցողներու նման, աղոթելու և երգելու փառքն անցյալի քու նախնիներու, որոնք այլևս հավիտենականության են հանձնված»:

Այնուհետև հայր սուրբը մանրամասնորեն ներկայացնում է եկեղեցու արտաքին և ներքին պատկերը:

Տ. Տարոն վարդապետի առաջին մտածումն է լինում, իբրև հոգևորական, տասնյակ տարիներով մայրենի լեզվով աղոթքից զրկված և նրա կարոտը զգացող եկե-

ղեցու մեջ ս. պատարագ մատուցել և կատարել հոգեհանգիստ Սինգապուրի հայ ննջեցյալների հոգիների համար:

Սեպտեմբերի 17-ին Սինգապուրի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տ. Տարոն ծ. վրդ. Մերեճյանի մատուցմամբ կատարվում է ս. պատարագ: Ահա թե ինչ է զգացել և ապրել հայր սուրբը պատարագ մատուցելիս.

«Ինձի կթվա, որ հավատացելոց բազմություն մը ուրախության աղաղակներով տարված, հափշտակված դարերու հեռավորութենեն դեպի ինձի կվազե»:

Կանցնիմ բարեպաշտորեն անոնց ընդմեջեն՝ օրհնելով զանոնք, ինչպես պատարագիչ հայրը կընե հանդիսավոր առիթներով:

Եկեղեցիին դուռը բաց է, և լույսերը կարտահայտեն տոնական օրվան մը պայծառությանը:

«Խորհուրդ խորին»,—ամեն բան պատրաստ է՝ մատուցելու ս. պատարագ: Ո՞ւր ես, «հօտ փոքրիկ»: Նստարանները դատարկ են: «Տխրություն խորին»: Եվ կաթիլ մը արցունք ոլորապտույտ կգրուսաշրջկի, կարծես աչեկակերպ հոսանք մը, կծորի ցած աչքերես: Ի՜նչ դառն իրականություն, որուն ենթակա է ուշ կամ կանուխ յուրաքանչյուր հայ գաղութ: Հայասփյո՛ռ... Մահասփյո՛ռ, քանզի ապրեցա հոռետեսությունը՝ ըլլալով հանդերձ միշտ լավատես մը:

Հոգիս կվկայե.

«Ձիք փրկություն արտաքո մայր հայրենիքե»:

Հայր Տարոնը իրավացի է իր եզրահանգման մեջ: Վաղ թե ուշ այդ է ապագան մայրենի հողից կտրված հայ բեկորների: Լավագույն պարագային այսօր տակավին կենսունակության երևույթ ունեցող մեր գաղութների համար, ինչպես սինգապուրցի տաքսու վարորդը, տեղաբնակները պիտի ասեն՝ ցույց տալով հայերից մնացած հետքերը.

«Փառքի կոթողացած արտահայտությունն է ասիկա ձեր ազգին, որու զավակները կանգնեցուցին իրենց հավիտենական երթի ճանապարհին՝ հեռու իրենց մայր հողեն: Դժբախտաբար չեմ ճանչնար հայը, սակայն այս կառույցը կցոլացնե շինարար ու ստեղծագործ ժողովուրդի մը բարձր տաղանդը»:

Սակայն որքան էլ տխուր հնչեն այս տողերը, որքան էլ հոռետես կերպարանքի տակ ներկայանա այս կանխագուշակությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը կանգնած է այն գիտակից հոգևորականների կողքին ափյուռքում, որոնք Տարոն ծ. վարդապետի պես, անձնվիրաբար հոսանքին դեմ թիավարելով, խաչ ի ձեռին ծառայում են մեր ս. եկեղեցուն և ժողովրդին:

Հայ եկեղեցին պետք ունի միայն հավատավոր հոգևոր սպասավորների:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ





ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

10. ՀԱԿՈԲ

Հակոբ որդին էր Իսահակի և անմիջական նախահայրը Իսրայելի տասներկու ցեղերուն: Ծննդոց Գրքի գրեթե կեսը հատկացված է ներկայացնելու Հակոբ նահապետի և իր զավակներուն արկածալից կյանքը և կրոնական փորձառությունները (Ծնն. ԻԵ 19—Ծ գլուխները): Իր կանուխ երիտասարդության նախ գնեց իր եղբորմեն անոր անդրանկության իրավունքը ամամ մը թանապուրի փոխարեն և ապա ստացավ անդրանիկ զավակի վերաբերյալ հորենական օրհնությունը, այս անգամ իր մորը խորամանկությամբ: Բայց վճարեց այս անիրավության համար կյանքի նեղություններով: Նախ փախավ եղբոր բարկութենեն Խառան իր մոր ազգականներուն քով: Քսան տարի չարաչար ծառայություն ըրավ այնտեղ հարստացնելով թե՛ իր մորեղբայրը և թե ինքզինքը: Ամուսնացավ իր մորեղբոր երկու աղջիկներուն հետ և անոնցմե ու անոնց զույգ աղախիններեն ունեցավ 12 մանչ զավակ, որոնք կազմեցին Իսրայելի ժողովուրդին տասներկու ցեղերուն նահապետները: Վերադարձավ իր երկիրը և երկար տարիներ ապրեցավ այնտեղ: Ծերության տարիքին իջավ Եգիպտոս, ամբողջ իր ցեղով և այնտեղ վախճանեցավ. բայց իր մարմինը բերվեցավ ու թաղվեցավ Քեբրոն իր հայրերու գերեզմանը:

Հակոբ ճարպիկ, խորագետ, աշխատասեր և եսակեդրոն անձ մըն էր, որ շարունակ իր շահը կհետապնդեր, ատոր համար ալ հաջողություններու զուգահեռ ընթացան նաև նեղությունները իր կյանքին մեջ:

Հատկապես Խառանեն իր երկիրը վերադարձի ճամբուն վրա, երբ պետք եղավ իր եղբոր հետ երես երեսի գալ, զգաց որ ներքին նեղության մը մատնված էր. «Զահի հարաւ Յակոբ և տարակուսեալ էր» (Ծնն. ԼԲ 7): Իր եղբոր դեմ ի գործ դրած անիրավությունը ուժգնորեն խողվեց և խոնարհեցուց զայն. ու ըսել տվավ իրեն. «Ով իմ հորս Աբրահամի և Իսահակի Աստված, ով Տեր, դուն ըսիր ինձի որ դառնամ իմ ծննդյան երկիրս, և խոստացար օգնական ըլլալ ինձի. ես արժանի չեմ փոքրագույնին այն գթության և հավատարմության, որ ցույց տվիր քու ծառայիդ հանդեպ. որովհետև լոկ ճամբորդական գավազանով մը անցա այս Հորդանան գետը, և ահավասիկ կվերադառնամ երկու բանակի վերածված: Ազատե զիս եղբորս ձեռքեն, որովհետև կզարհուրիմ անկե...» (Ծնն. ԼԲ 9—12): «Երկու բանակով» շատ ալ վախնալու պատճառ չուներ Հակոբ, բայց իր վստահությունը ամուր չէր Աստուծո վրա, քանի որ խիղճը արատավոր էր: Այս կետին խորհրդավոր դեպք մը տեղի կունենա Հակոբի կյանքին մեջ:

Հակոբ իր ամբողջ ունեցածը և ընտանիքը անցուցած է գետին մյուս կողմը. բայց ինքը կմնա դեռ գետին այս կողմը: Գիշեր է և միս մինակ. հավանաբար ինքզինքը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № Բ-ից:

աղոթքի և մտածականի տվավ Հակոբ երբ կգտնվեր իր կյանքի կարևորագույն հանգրվանին վրա, ուր իրեն համար լինելու չլինելու հարց մըն ալ գոյություն ուներ: «Ու մարտնչեցավ մարդ մը անոր հետ մինչև առավոտ»: Հակոբին հետ մարտնչողը իրականին մեջ իր խղճմտանքն էր. Աստուծո արդարությունն է որ մարդու կերպարանք առած իր դեմ կմաքառեր՝ մեկ կողմեն անցյալին իր գործած անիրավությանց համար, մյուս կողմեն ազատագրելու համար զայն իր խորամանկութենեն և եսասիրութենեն: Հակոբ ծանրագույն մեղքեր չէր գործած. ոչ մարդ սպանած էր և ոչ ալ՝ շնություն ըրած. բայց եսասիրական նկատումներով խաբած էր իր եղբայրը, իր հայրը և իր աներհայրը. այժմ հարստացած և մեծատուն ցեղապետ մը եղած կվերադառնար. սակայն Հակոբ կզգար որ ներքնապես աղքատացած էր: Աստված իր խոստումին հավատարիմ եղած էր. օրհնած էր զինքը և պաշտպանած. բայց Հակոբ հավատարիմ չէր եղած Աստուծո. «իր ներկայության» չէր քալած, ոչ ալ «Անարատ» եղած էր: Երբ ան այլևս իր երկիրը կվերադառնար շարունակելու և իրագործելու համար Աստուծո ծրագիրը՝ ընտրյալ ժողովուրդ մը կազմելու՝ Աստված կուզեր որ Հակոբ ուղղեր իր սիրտը և իրեն հետ քալեր, արժանանալու համար ընտրյալ ժողովուրդի մը հայր ըլլալու առանձնաշնորհին:

Քիչ չէ թիվը մարդոց, որոնք Հակոբին պես ոչինչով կսկսին կյանքը և իրենց ուշիմությամբ և աշխատասիրությամբ մեծ հարստության և դիրքի կտիրանան, որուն մեջ միշտ հաշվի պետք է առնվի Աստուծո օգնությունը և օրհնությունը: Շատեր չեն կրնար տեսնել ասիկա. Հակոբ տեսավ և ըսավ. «Արժանի չեմ փոքրագույնին այն գթության և հավատարմության որ ցույց տվիր ծառայիդ հանդեպ»: Թե՛ եղբոր բարկությունը իջեցնելու նպատակավ՝ և թե՛ հաստատում ընելու դիտավորությամբ, իր հարստության կարևոր մեկ բաժինը իր եղբոր դրկեց առջևեն: Սակայն Հակոբ կզգար որ այդ նվերները բավական չէին ջնջելու խաբեության խարանը, որ իր խղճին վրա դարնված կմնար: Ուստի ունեցավ այն խորհրդավոր մաքառումը, այս անգամ ուղղակի Աստուծո հետ և Աստուծո դեմ:

Որքան խորհրդանշական է և իմաստալից, որ մարտնչող անձանոթը երբ տեսավ որ չի կրնար հաղթահարել Հակոբը, անոր «ամրաջիլը ընդարմացուց»: Անձանոթը ըսած էր. «Զգե որ հեռանամ այլևս»: Հակոբ տեղի չտվավ. ընդհակառակը ավելի ուժգին կպավ խորհրդավոր մարդուն և ըսավ. «Պիտի չարձակեմ քեզ, մինչև չօրհնես զիս»:

Ու գերբնական էակը փոխան օրհնության նոր անուն մը տվավ Հակոբին. «Ասկե վերջ անունդ պիտի ըլլա Իսրայել», որ կնշանակե «Աստուծո հետ մարտնչող». ավելցուց անձանոթը. «Որովհետև մարտնչեցար Աստուծո և մարդոց հետ, և զորավոր դուրս եկար» (Ծննդ. ԼԲ 24—30):

Այս մարտնչումը սակայն Հակոբին վրա ձգեց իր մնայուն հետքը: Այո, հասած էր իր նպատակին նաև Աստուծո հետ մաքառելու ընթացքին, ինչպես եղած էր մարդոց հետ մարտնչելու ատեն: Ապահովված էր Աստուծո ներումը և օրհնությունը. սակայն կաղ մնացած էր: «Ընդարմացած», այսինքն թմրած և անգործության մատնված էր զիստը շարժման մեջ դնող «ամրաջիլը»:

Շատ նշանակալից է պայքարին հաջորդող աստվածաշնչական հավաստումը. «Ու անոր վրա արև ծագեցավ» երբ անցավ գետը. բայց «Նա կաղայր երթայր ի զըստէ անտի» (Ծն. ԼԲ 31): Այնուհանդերձ կաղացող Հակոբը ավելի լավ մարդ մըն էր քան նախկին չկաղացող՝ ավելի շիտակ՝ բարոյապես երկու կողմի վրա կաղացող Հակոբը: Երբեմն փորձանքներու կկարոտինք ավելի լավ մարդ ըլլալու համար: Հանախ ծանր հիվանդություն մը, լուրջ արկած մը, սրտի տագնապ մը միայն կրնան զգաստացնել քայքայիչ խմիչքի կամ ծխիկի գերի մարդը, որ հրաժարի բարոյապես և ֆիզիկապես անդունդ առաջնորդող նման մոլություններեն: Շատեր նման փորձանքներու հանդիպելով հանդերձ չեն զգաստանար և կմեռնին իրենց մեղքին մեջ:

Հակոբ այս միջադեպեն առաջ գրեթե ամեն մարզի մեջ ինքնաբավ զգացած էր ինքզինքը: Գրեթե ոչ ոք կրցած էր հաղթահարել իրեն կյանքի պայքարին մեջ: Հաջողակ և համարձակ եղած էր իր բոլոր գործերուն մեջ, բայց երբ պետք եղավ դեմ հանդիման գտնվիլ իր եղբոր հետ, զոր անիրաված էր, ինքզինքը նկուն և անբավական զգաց. վախցավ իր եղբոր արդար բարկությենեն, որ խորքին մեջ Աստուծո արդարության ազդարարությունն էր: Հակոբ իբրև բարոյական ժառանգորդը Աբրահամի և Իսահակի կանչված էր «Աստուծո հետ քալելու և անարատ ըլլալու»: Ցարդ այնքան գրավված էր հարստանալու տենչով, որ գրեթե ժամանակ չէր ունեցած անդրադառնալու իր այս պարտավորության: Իր կյանքի կարևորագույն այս հանգրվանին զգաստության հրավիրվեցավ Հակոբ և հակառակ իր մաքառումին ի վերջո տեղի տրվավ: Այս դեպքեն հետո Հակոբ գտած էր

իր լավագույն եսը և մտած էր իր ուղիղ դերին մեջ, թե իսկ «զիստեն կկաղար»: Մարդուն ինքնաբավությունը, ամբարտավանությունը և հավակնոտությունները պետք է խորտակվին նախ քան արդարության և սրբության ճանապարհին մեջ մըտնելը:

Հակոբի համար նոր «արև մը ծագած էր», նոր հանգրվան մը բացված էր. ու ասկե հետո ինք հավատարիմ եղավ իր կոչումին, քան ինչ որ եղած էր մինչև հիմա. իր թերացումներու ավելի խոր ճանաչումին հասած էր. ու իր կաղությունը մշտական հուշարար մը մնաց նախ իր անկատարության, և ապա՝ Աստուծո կրթելու, Անոր ապավինելու անհրաժեշտության:

Հակոբ ապրեցավ 147 տարի: Լատինք կհիշատակեն դեկ. 23-ին. իսկ մենք և հույնք՝ նախահարց հետ:

11. ՀՈՎՍԵՓ

Հովսեփ վերջինը՝ և ամենեն համակրելին է Ծննդոց Գրքի հավատքի և սրբության հերոսներու: Կարելի չէ կարդալ իր կյանքը առանց մեծագույն հետաքրքրության և խորագույն հուզումի: Մարդկային պատմության ու ժողովուրդներու գրականության գեղեցկագույն դրվագներեն է Հովսեփի պատմությունը, որ կգրավե ս. Գրքի առաջին մատյանի վերջին տասներկու գլուխները:

Վերջընթերն էր Հովսեփ Հակոբի տասներկու զավակներուն, ծնած անոր սիրելի կնոջմեն, Ռաքելեն, որ մեռավ երկրորդ տղայաբերքին, երբ Հովսեփ դեռ մատաղ մանուկ էր: Հայրը իր սերը կրկնապատկեց որբացած այս զավկին վրա, ինչ որ նախանձը շարժեց մյուս եղբայրներուն, որոնք իբրև գերի ծախեցին զայն վաճառականներուն, որոնք իրենց կարգին վաճառեցին զայն Եգիպտոսի փարավոնին բարձրաստիճան մեկ պաշտոնատարին: Հովսեփ, որ արդեն հասուն երիտասարդ մըն էր ծախված ատեն, իր ուշիմությամբ, հավատարմությամբ և ձեռներեցությամբ փարավոնի պաշտոնատարին տան և ինչքերուն վերակացու կարգվեցավ: Այս տան մեջ տեղի ունեցավ Հովսեփի կյանքին ամենեն եղերական՝ ու միաժամանակ դյուցազնական՝ տրամը, որ երևան հանեց Հովսեփի ոսկի նկարագիրը: Պաշտոնատարին փարթամ կինը աչք տնկեց Հովսեփի վրա: Անոր տեղ ունէ ուրիշ երիտասարդ պիտի չկրնար «ոչ» ըսել նման հրապուրիչ կանչի մը: Հովսեփ կրցավ: Ոչ միայն մերժեց առաջարկը և այլ համարձակորեն կրցավ ըսել կնոջ. «Այս տան մեջ ամեն ինչ ինձի հանձնված է բացի քեզմե, որովհետև տանտիրոջս կինն ես». և ավելցուց. «Ուստի ի՞նչպես կրնամ այսպիսի մեծ չարիք մը գործել, և ՄԵՂԱՆՉԵԼ ԱՍՏՈՒԾՈ ԱՌՋԵՎ» (ԾՆ. ԼԹ 9): Հովսեփ ոչ միայն կնոջ հարաճուն թախանձանքներուն չէր անսար, այլ կկիրարկեր գերագույն ռազմավարությունը, որ հաջողություն կրնա խոստանալ նման պարագաներուն. «Ոչ հույպ լիներ նմա». չէր մոտենար կնոջ. կխուսափեր անոր հանդիպելե:

Ցանկությունը կրակ մըն է, որ եթե չըմարվի իր սկզբնական շրջաններուն, ավելի կբորբոքի օրերու հետ և ի վերջո այրերու համար ցանկության տերը և իր զոհը, ինչպես եղավ Հովսեփի պարագային: Աստվածաշունչի պարզագույն և անմրցելիորեն իրապաշտ բառերով՝ «Օրին մեկը երբ Հովսեփ տուն մտավ իր մեկ գործը կատարելու համար, երբ ընտանիքի անդամներեն ոչ ոք կար ներսը, կինը բռնեց անոր հագուստեն և ըսավ. ննջե ինձի հետ: Ու Հովսեփ իր հագուստը անոր ձեռքը ձգելով դուրս փախավ...»: Դյուրին է երևակայել հետևանքը: Ոչ ոք պիտի հավատար Հովսեփի անմեղության, երբ շոշափելի փաստը, իր հագուստը կնոջ ձեռքն էր, որ զայրացած կգոռար ամենքին, թե եբրայեցի այս գերին հանդգնած էր իր վրա հարձակիլ: Աստուծո գերագույն տնօրենությամբ տեղնուտեղը չսպանվեցավ Հովսեփ. այլ ցմահ բանտարկության դատապարտվեցավ: Կրակի հնոցի մեջ նետված էր Հովսեփ, ու իր նկարագրի ոսկին ավելի զտված դուրս եկավ, թե՛ այս բարոյական փորձութենեն և թե՛ բանտի վիրապեն, դառնալու համար ի վերջո, աստվածային անիմանալի դարձվածքներով, Եգիպտոսի փոխարքան... և փրկելու իր ցեղը սովի ճիրաններեն:

Հովսեփ Աստվածաշունչի ամենեն կատարյալ դեմքերեն է, հետևաբար ժառանգած է իրավամբ «Գեղեցիկ» տիտղոսը:

Հովսեփ արդարև գեղեցիկ էր ֆիզիքապես, բարոյապես և իմացապես: Իր նկարագրին հիմնական գիծերը պարկեշտություն և հավատարմություն է: Վստահությունը գրավեց մարդոց, ուր որ գտնվեցավ. փարավոնի պաշտոնարարի տան մեջ, բանտին մեջ և փարավոնի բարձրագույն ծառայության մեջ: Հավատարիմ եղավ մարդոց. վասնզի նախ հավատարիմ էր իր Աստուծուն: Աբրահամյան կրոնքին գերագույն կատարն է Հովսեփ: Արդարև միշտ «քալեց Աստուծո ներկայության և անարատ եղավ»: Սրտառուչ է արդարև սրտեն փրթած իր տրամաբանական ավաչը. «Ինչպե՞ս կրնամ մեղանչել Աստուծո առջև»:

Աստուծո հարաբերաբար միայն՝ մենք կրնանք տեսնել մեր ուղիղ հարաբերությունը մեր ընկեր արարածներուն հետ: Մինչև

որ մեր դիմացինը չնկատենք Աստուծո պատկերով ստեղծված թանկագին հոգի մը, պիտի չկրնանք անոր հանդեպ սեր և հարգանք տածել, և զգուշանալ զայն խորտակելե և փճացնելե: Առանց Աստուծո հաշիվ տալու գիտակցության, մարդկային հարաբերությունները ի վերջո պիտի այլասերին վերածվելու համար եսասիրական ու կենդանական բնազդներու:

Ի վերջո Հովսեփ գերագույն իմաստությամբ մը իր եղբայրներուն սորվեցուց թե ինչպես պիտի ըլլա իրական եղբայրությունը: Չարիքը բարիքով վերադարձուց: Զինքը գերիի մը պես ծախած եղբայրներուն առջև երեք անգամ փղձկեցավ ու ստիպվեցավ առանձնանալ իր եղբայրական հուզումին ազատ ասպարեզ տալու համար: Ծնողասեր և ազգասեր էր Հովսեփ: Իր որդիական սիրով ողողեց իր ծերունազարդ հայրը և մխիթարեց զայն իր վերջին տարիներուն: Իր ժողովուրդին տեր ու պաշտպան կանգնեցավ օտար երկրի մը ծառայության մեջ եղած միջոցին: Այս բոլորը և ավելին եղավ ան, որովհետև ամենեն առաջ և ամենեն ավելի աստվածասեր էր Հովսեփ:

Հովսեփ նախատիպարն է Քրիստոսին ոչ միայն իր բարոյական կատարելությամբ և փորձության մեջեն հաղթական դուրս գալով, այլ նաև Քրիստոսի պես «երեսուն արծաթի» վաճառվելով, և իր ժողովուրդի փրկության պատճառ դառնալով, ինչպես եղավ Քրիստոս՝ Աստուծո նոր ժողովուրդին համար: Հովսեփ մեռավ 110 տարեկանին, իբրև փոխարքա Եգիպտոսի: Թեև թաղվեցավ Եգիպտոս, սակայն իր ժողովուրդը երբ ելավ Եգիպտոսեն, անոր ոսկորներն ալ միասին հանեցին և ի վերջո թաղեցին իր հայրերու գերեզմանը Քեբրոնի մեջ: Լատինք կհիշատակեն զայն դեկտ. 11-ին. իսկ մենք և հույնք՝ նախահարց հետ:

Գլուխ երրորդ

ԱՆԱՊԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Այս գլուխին մեջ պիտի հիշվին Աստուծո ժողովուրդին այն գործիչները, որոնք Եգիպտոսի ելքեն հետո անոր անապատային 40 տարիներու թափառումներու ընթացքին կարևոր դեր կատարեցին և տակավ առ տակավ առաջնորդեցին և մտցուցին զայն Ավետյաց Երկիրը:

12. ՄՈՎՍԵՍ

Անտարակույս մեծագույն դեմքը Հին Կտակարանին, և կրոնական չափանիշով՝ մեծագույններեն մեկը աշխարհի պատմության մեջ: Աստվածաշունչի մեջ չորս գիրքեր—**Ելից, Ղևտական, Թվոց** և **Երկրորդումն Օրինաց**—կպարունակեն պատմությունը իր կյանքին, գործին և օրենքներուն:

Մովսես ծնավ Եգիպտոսի մեջ 1570-ին Ք. Ա., երբ իր ժողովուրդը զգալիորեն բազմացած՝ բայց միաժամանակ գերի դարձած էր Եգիպտոսի փարավոններուն: Առաջքն առնելու համար Իսրայելի ժողովուրդին անսովոր աճումին, փարավոններեն մեկը, «որ չէր ճանչնար Հովսեփը», նախ աղյուսաշինության չարաչար աշխատանքին լծեց զանոնք, և ապա հրաման հանեց որ անոնց արու զավակները փճացվին տղայաբերքին կամ գետ նետվին եթե ազատած են: Մովսես ալ սահմանված էր այս ճակատագրին. սակայն աստվածային նախախնամությունը նախ փրկեց՝ և ապա ղրկեց զայն ազատագրելու իր ժողովուրդը եգիպտական գերութենե: Ծանոթ և հրաշալի պայմաններու մեջ ջուրեն ազատված այս «կայտառ» մանուկը եղավ փարավոնի դստեր որդեգիրը և մինչև քառասուն տարեկանը ապրեցավ եգիպտական արքունիքին մեջ «Եվ սորվեցավ Մովսես Եգիպտոսի ամբողջ իմաստությունը, և հզոր էր խոսքով ու գործով» (Գործ. Է 22):

Իր «զորությունը» և ինքնությունը նախ հայտնեց, երբ արյունը խոսեցավ իր մեջ և «իր ազգակիցները տեսնելու ելավ» ու սպաննեց եգիպտացի վերակացուն, որ անգթաբար կմտրակեր եբրայեցի աշխատավոր մը: Նախ քան այս լուրը փարավոնին ականջը հասնիլը Մովսես փախավ Եգիպտոսեն և ապաստանեցավ Սինայի անապատի ցեղապետներեն մադիանացի քուրմի մը մոտ, ուր ամուսնացավ անոր աղջիկներեն մեկին հետ և ունեցավ երկու զավակներ: Այստեղ ապրեցավ Մովսես, արքունիքին մեջ մեծցած մարդը, քառասուն տարիներ, իբր պարզ հովիվ:

Ութսուն տարեկանին, երբ դեռ կորովի անձնավորություն մըն էր, Միքել Անձեղոյի ծանոթ արձանին մեջ պատկերացվածին պես, Աստված հայտնվեցավ իրեն Սինա լերան վրա Անկեզի Մորենիին մեջեն, և ուզեց ղրկել զայն իր գերի ժողովուրդը փրկելու մեծ առաքելության: Մովսես նախ ընդդիմացավ այս առաջարկին, որուն անբավական կնկատեր ինքզինքը, բայց երբ գրեթե հակամայս համակերպեցավ Աստուծո պնդումին, ի գլուխ հանեց զայն հրաշալի պայմաններու ներքև: Ազատագրեց և տարավ իր ժողովուրդը ետ Սինա լերան ստորոտը, ուր Աստված հայտնված էր իրեն առաջին անգամ, և այնտեղ ՈՒԽՏ մը կընքվեցավ Աստուծո և Իսրայելի ժողովուրդին միջև:

Այս ՈՒԽՏԸ կրոնական պատմության մեծագույն «աքտ»երեն մեկն է և ներկայացված է Ելից գրքի ԺԹ գլուխին մեջ իրապաշտ և տրամադիկ պատկերացումով, որուն կարժե անդրադառնալ. որովհետև թեև այս ՈՒԽՏԸ ձևապես և պատմականորեն կնքված է Աստուծո և աննշան ցեղախումբի մը միջև, սակայն խորքին մեջ տեղի ունեցավ Աստուծո և մարդկության միջև: Հրեա ժողովուրդը ներկայացուցչական հանգամանք մը ուներ այնտեղ, քանի որ նման ուխտի մը անհրաժեշտ կարիքը ուներ նաև ամբողջ մարդկությունը:

Այս դաշինքի կնքումին մեջ նախաձեռնողը և պայմանները առաջարկողը բնականորեն Աստված էր: Մարդուն կմնար համակերպիլ և ընդունիլ զայն, քանի որ այդ կըլլար ի սեր և հօգուտ մարդկության: Այսուհանդերձ Աստված չուզեց միակողմանի կերպով պարտադրել մարդուն իր առաջարկները. այլ կամեցավ որ մարդն ալ իր ազատ կամքովը համաձայնություն հայտնե այս տնօրենության:

Ուխտի այս առաջարկը նախ կհիմնվի կատարված իրողությանց և պատմական տվյալներու վրա, որոնց մեջեն անցած էր Իսրայելի ժողովուրդը, և ականատես վկան եղած էր Աստուծո հզոր գործերուն, և իրեն հանդեպ ցույց տված հատուկ հոգածության: Ուստի ՈՒԽՏԻՆ նախաբանը կդրվի այսպես Աստուծո կողմե. «Դուք անձամբ ՏԵՍԱՔ այն բոլորը, զոր կատարեցի Եգիպտոսի մեջ: Առի ձեզ արծիվի թևերուն վրա և բերի ձեզ այստեղ իմ մոտս:

Եթե լսեք ինձի և պահեք իմ ուխտս, այն ատեն դուք բոլոր ազգերու մեջեն իմ սեպհական ժողովուրդս պիտի ըլլաք, որովհետև իմս է ամբողջ երկիրը. դուք պիտի ըլլաք ինձի քահանաներու թագավորություն մը, ՍՈՒՐԲ ԱԶԳ մը» (Ելք. ԺԹ 4—6): Ու Աստված ավելցուց. «Ըսե այս խոսքերը Իսրայելի որդիներուն»:

Մովսես այս առաջարկը ներկայացուց ժողովուրդի «ծերերուն», այսինքն գլխավորներուն, ու ասոնք «միահամուռ ըսին. Աստված ինչ որ ըսե պիտի կատարենք»: Այս պատասխանը Աստուծո բերավ Մովսես: Ըսավ Տերը. «Ահավասիկ ես քեզի պիտի գամ թանձր ամպի մը մեջ, որպեսզի ժողովուրդը ԼՍԵ մինչ ես կխոսիմ քեզի հետ, և հավատա քեզի միանգամընդմիշտ»: Ու կհրահանգե Աստված Մովսեսին. «Սրբե ժողովուրդը այսօր և վաղը. թող լվան իրենց հագուստները և պատրաստ ըլլան երրորդ օրը. որովհետև ես Սինա լերան վրա պիտի իջնեմ երրորդ օրը, ի տես ժողովուրդին»:

Ու արդարև «երրորդ օրը առավոտուն որոտումներ և փայլատակումներ եղան. թանձր ամպ մը իջավ Սինա լերան վրա ու բարձրաձայն փող մը հնչեց. զարհուրեցավ ամբողջ ժողովուրդը: Ու Մովսես Աստուծո առջև հանեց ժողովուրդը և կայնեցուց լերան ստորոտը: Ու Սինա լեռը կծխար շարունակ, որովհետև Աստված իջած էր անոր վրա կրակով. ու ծուխը կբարձրանար հնոցի ծուխին պես: Կսարսեր ամբողջ լեռը, և փողին ձայնը հետզհետե կմոտենար և կաստկանար: Մովսես կխոսեր ու Աստված պատասխան կուտար անոր: Ու Տերը Սինա լերան գագաթը իջավ ու կանչեց Մովսեսը լերան գլուխը: Ու Մովսես վեր եելավ...»: Ու այնտեղ Աստված Մովսեսին տվավ այս ուխտի պայմանները սկսելով **Տասնաբանյա պատվիրաններով** (Ելք. Ի գլուխ): Մովսեսի գերագույն փառքը և իրագործումը եղավ միջնորդը հանդիսանալ այս ՈՒԽՏԻՆ, որ կեդրոնական տեղը կգրավե ամբողջ Հին Կտակարանի մեջ, ուր կներկայացվին այս ՈՒԽՏԻՆ հավատարմության և անհավատարմության վերիվայրումները:

Ասկե հետո Մովսես հովվեց ու դաստիարակեց իր ժողովուրդը քառասուն տարիներ անապատի խստությանց մեջ, մինչև բերավ զանոնք Ավետյաց երկրի դռները, Հորդանանի արևելյան ափը, ուր կատարելե հետո անհրաժեշտ հիշեցումները և տալե հետո իր վերջին պատգամները, եղավ Նաբավ լեռը, և այնտեղ մեռավ մենության մեջ 120 տարեկանին: Ոչ ոք գիտցավ անոր գերեզմանը: Ու իր կյանքը եզրակացության կբերվի աստվածաշնչական սա հաստատումներով, հակառակ հարյուրքսանամյա տարիքին «իր աչքերը չվատացան, ոչ ալ իր կորովը պակսեցավ... Իսրայելի մեջ ոչ մեկ մարգարե եելավ նման Մովսեսի, զոր Աստված ճանչցավ դեմ հանդիման...»: Մինչև Քրիստոս ոչ ոք եղավ այնքան մեծ և ընտիր անոթ, որուն մեջ լեցուց Աստված իր կամքը և հայտնությունները և հրամցուց մարդկության՝ որքան Մովսես: Աստուծո մշտական ներկայության իր բնազդը և այն խոր վստահությունը թե կխոսեր և կգործեր հանուն Աստուծո, արդարև բացառիկ են: Մովսես դրավ այն հիմունքը և կազմեց այն հատակագիծը, որուն վրա գործեցին հաջորդող մարգարեները և գործիչները: Մովսեսով սկսված Աստվածահայտնությունը իր կատարումը գտավ Քրիստոսով, որուն հետ արդարև շատ սերտ նմանություններ ունեցավ Մովսես, լինելու աստիճան Անոր լիակատար նախատիպը գրեթե ամեն մարզի մեջ:

Երկուքն ալ իրենց մանկության՝ մահվան դեմ հանդիման գտնվեցան. Հիսուս՝ Բեթ-

դեհեմի մանկանց կոտորածով, Մովսես՝ գետ նետվելով: Երկուքն ալ իրենց գործունեության սկիզբները չարության ոյժերուն հետ բախում ունեցան և հաղթող հանդիսացան. Հիսուս՝ փորձությամբ, Մովսես՝ եգիպտացի կախարդներուն դեմ: Երկուքն ալ քառասնօրյա պահեցողություն ըրին: Հիսուս փորձության լերան վրա, Մովսես՝ Սինայի վրա: Երկուքն ալ ծովը իրենց հակակշռին տակ առին. Հիսուս փոթորիկը հանդարտեցնելով. Մովսես՝ Կարմիր ծովը ճեղքելով: Երկուքն ալ բազմություններ կերակրեցին հրաշալի պարագաներու տակ. Հիսուս հինգ հացով ու երկու ձուկով. Մովսես՝ երկնատեղաց լորմարգով և մանանայով: Երկուքին ալ երեսները փայլեցան ու պայծառացան գերբնական լույսով. Հիսուսինը՝ Թափոր լերան վրա. Մովսեսինը Սինայե էջքին: Երկուքն ալ ժողովրդային տրտունջներու նշավակ եղան ու համբերեցին. Հիսուս՝ երբ «ես եմ հացն կենաց» ըսավ և այլ տոհթներով երբ քարկոծման վտանգին ալ ենթարկվեցավ. Մովսես՝ բազմիցս անապատի մեջ: Երկուքն ալ իրենց տնեցիներու կողմե քննադատվեցան. Հիսուս՝ իր «եղբայրներեն». Մովսես՝ իր եղբորմեն և քրոջմեն: Երկուքն ալ ընտրեցին 70 օգնականներ. Հիսուս՝ 70 աշակերտներ, Մովսես՝ 70 ծերեր: Երկուքն ալ աղոթեցին և բարեխոսեցին այլոց համար. Հիսուս՝ իր վերջին կտակի աղոթքին մեջ. Մովսես՝ իր ապերախտ ժողովուրդին համար, երբ Աստված ապառնաց բնաջնջել զանոնք: Երկուքն ալ իրենց անջնջելի գործեն զատ հատուկ տնօրինական մնայուն հիշատակ ձգեցին. Հիսուս՝ ս. Հաղորդության խորհուրդի հաստատմամբ. Մովսես Պասեքի տոնական տնօրինությամբ: Վերջապես երկուքն ալ հետ մահու վերերևեցան. Հիսուս իր հարությամբ. Մովսես՝ Հիսուսի Պայծառակերպության:

Անշուշտ այս բաղդատականը և զուգահեռականությունը երբեք հավասարություն չեն ենթադրեր: Հիսուս միայն կրցավ ըսել. «Ո՞վ կրնա զիս հանդիմանել մեղքի համար»: Իսկ Աստուծո ծառան Մովսես, այնքան հրաշքներ տեսնելե ու կատարելե հետո, պահ մը եկավ իր կյանքին մեջ որ երկմտեցավ թե Աստված-կրնա՞ր ժայռեն ջուր բխեցնել (Թիվք. Ի 7—13): Երկմտանքի այն մեղքին համար արժանի չդատվեցավ Ավետյաց երկիրը մտնել, թեև զայն տեսավ իր լայնքին ու երկայնքին այն լեռնեն ուր մեռավ: Բաց աստի, ինչպես Ավետարանը կհաստատե, **«Օրենքը** Մովսեսի ձեռքով տրվեցավ. բայց **շնորհքը** և **ճշմարտությունը** Հիսուս Քրիստոսի ձեռքով իրագործվեցավ (Հովհ. Ա 17): Մովսես իր կյանքի վերջավորության մարգարեացավ ու ըսավ. «Աստված ձեր մեջեն ինձի նման մարգարե մը պիտի հարուցանե. անոր լսեցեք» (Բ Օր. ԺԸ 15): Ակնարկությունը Մեսիային է, Քրիստոսին (Գործ. Գ 22):

Մովսեսի մեծության, զորության ինչպես նաև սրբության գաղտնիքը իր ՀԵՋՈՒԹՅԱՆ մեջ էր. ըսված է իր մասին. «Մովսես շատ հեզ մարդ էր. աշխարհի բոլոր մարդերուն ամենեն հեզը» (Թիվք. ԺԲ 3): Հանախ հեզությունը և տկարությունը կշփոթվին իրարու հետ: Բայց ասոնք խորքին մեջ իրարու հակադիր եզրեր են. թե արդարև Մովսես ոչ միայն ֆիզիքապես՝ այլ նաև կամքով և հոգիով հզոր մարդ էր, այդ բացահայտ է իր գործերեն:

Հեզությունը խորքին մեջ այն հոգեվիճակն է, ուր մարդ այլևս չի դառնանար, ոչ ալ ինքզինքը պաշտպանելու փորձեր կընե, երբ անիրավ կերպով կդատապարտվի, որովհետև գիտե թե մարդ տկար և անկատար է, ըլլա ինք, ըլլա զինք դատապարտողը: Ոչ ալ կմեծամտի կամ ախորժ կզգա երբ կգովաբանվի. որովհետև վստահ կերպով գիտե, թե իր առավելությունները կը պարտի Աստուծո: Այս կետին մեջ ալ Մովսես կմոտենա Քրիստոսին, որ ըսավ ինքն իրեն համար. «Սորվեցեք ինձմե, որ **հեզ** եմ և սրտով **խոնարհ**. և ձեր հոգիներուն խաղաղությունը պիտի գտնեք», այն հեզության ու խոնարհության մեջ (Մատթ. ԺԱ 29): Ու երանի տվավ Հիսուս «հեզերուն, որոնք ի վերջո պիտի ժառանգեն երկիրը» (Մատթ. Ե 5):

Հույնք և լատինք կհիշատակեն Մովսեսը սեպտ. 4-ին, իսկ մենք նախահարց հետ:

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 54—65):

(Շարունակելի)



ԱՐԹՈՒՆ ՀԱՅԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԻՊՐԱՑԻ
(315—403)

Ընդհանրական եկեղեցու նշանավոր «Երկոտասան վարդապետների» շարքում իր արժանավոր տեղն է գրավում նաև Կիպրոսի Աթոռի եպիսկոպոս սուրբ Եպիփանը[1]:

Հույն օրթոդոքս եկեղեցու ինքնագլուխ (ավտոկեֆալ) Աթոռներից մեկն է հանդիսանում Կիպրոսի Աթոռը, որի հաստատումը պատմականորեն կապվում է Պողոս առաքյալի և նրա առաքելակից, բնիկ կիպրացի Բառնաբասի քարոզության հետ[2]:

Սուրբ Եպիփանը համարվում է «տիեզերահռչակ վարդապետ եկեղեցւոյ»[3]:

«Սուրբ Եպիփան Կիպրացի ճգնավոր և հրաշագործ մարդ, առաքելական ոգով աշխատած է եկեղեցվո մեջ և գրած է տեսակ տեսակ գործեր»[4]:

«Մի առանձին տիպ է եկեղեցական հայրերի շարքում սուրբ Եպիփանը»[5]:

Նա «համբավավոր եղավ իբրև եկեղեցվո արևելյան հայրերեն մին»[6]:

Սուրբ Եպիփանը միաժամանակ հանդիսանում է «եռանդուն գործիչներեն մեկը վանական շարժումին ու իբրև կազմակերպիչ և խղճամիտ հոգևորական իր համբավը այնքան տարածված էր»[7]:

Սուրբ Եպիփանի վարքագրությունը գրել են նրա երկու աշակերտները՝ Հովհաննես և Պոլիբիոս վանականները:

Եպիփան հունարեն նշանակում է «երևելի» կամ «հայտնի»:

Եպիփանը, ըստ վարքագրական գրականության տվյալների, եղել է «ազգաւ հրեայ և հայրենեօք փիւնիկեցի»[8]:

Ծնվել է 315 կամ ըստ այլոց՝ 310 թվականին, «Հրէաստանի Ելևթերոպոլիս» քաղաքում, այժմյան Բիզանդուկի մեջ, Բեյթ-Ծիպրինի մոտ, «յաղքատ և հողավաստակ ծնողաց զաւակ»: «Հայր նորա մշակ երկրագործ էր և արդար վաստակաւք կերակրէր զորդեակս իւր զԵպիփան և զքոյր նորա Կալիստրոփիայ»[9]: Մանուկ Եպիփանը

---

[1] Օրացույց, ս. Էջմիածին, 1979, էջ 128:

[2] Գործք Առաքելոց, ԺԳ 4—12, ԺԵ 36—41, Նոր Կտակարան և չորս Աւետարաններ և Գործք Առաքելոց, Մայր Աթոռ, 1969, էջ 414:

[3] **Հ. Մ. Աւգերեան**, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց որք կան ի հին տօնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց, հատոր Գ, Վենետիկ, 1812, էջ 210—238:

[4] «Լոյս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, հատոր Ա, էջ 1023:

[5] Կնիք հաւատոյ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ XLVII:

[6] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 35:

[7] **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, Համաքրիստոնեական սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 63:

[8] Լիակատար վարքագրութիւն, նույնը, էջ 211: **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 35: **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 63:

[9] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 402:

կանուխ է կորցրել իր հարազատ հորը, երբ ինքը 10 տարեկան էր: Իր ծննդավայրում որբ Եպիփանին որդեգրել է մեծատուն մի հրեա, որը նրան սովորեցրել է «եբրայական զամենայն գիրս և զամենայն աւանդութիւնս հրէից»[10]:

Եպիփանը վաղ հասակից հակում ունենալով դեպի վանական կյանքը, երկար տարիներ մնալով սուրբ Երկրում, 16 տարեկան հասակում դառնում է վանական, քրիստոնյա է մկրտվում քրոջ՝ Կալիստրոփիայի հետ, սերտելով միաժամանակ «ըզկարգ քրիստոնէութեան և միայնակեցութեան» և իրեն նվիրում ճգնավորական-վանական խստամբեր կյանքի. «իբրև ճգնական կյանք վարող սուրբ անձնավորություն շատ մեծ հոչակ ուներ»[11]:

Եպիփանը «քրիստոնյա միայնակյացներու կյանքեն խորապես տպավորվելով մը-կրտվեցավ և իր սրբակրոն կյանքովը պատկառելի դարձավ ամենուն»[12] և «ինքն ալ հաստատեց իր վանքը Ելեվթերոպոլիս քաղաքի մեջ»[13]:

Եպիփանը կանուխ է կորցրել նաև իր մորը և ազատվելով ընտանեկան մտահոգություններից, որովհետև քույրը ևս եղել էր վանական միանձնուհի, իր ողջ կյանքը նվիրում է վանական-ճգնավորական կյանքի ուսումնասիրության և եկեղեցու ծառայության գործին:

Վանական-ճգնավորական կյանքը և կանոնադրությունները ուսումնասիրելու մտքով և իր սեփական վանական-միաբանությունը ունենալու բուռն ցանկությամբ տոգորված, նա այցելում է ժամանակի քրիստոնեական վանքերը, հանգամանորեն ծանոթանում մանավանդ Եգիպտոսի մենաստաններին և ճգնավորների կյանքին: Այս այցելությունը խոր հետք է թողնում Եպիփանի կյանքի, նրա վանական համոզմունքների և ուղղափառության վրա: Նա Եգիպտոսում առանձնապես ուժեղ պայքար է մղում Գնոստիկյան աղանդավորների դեմ[14]:

Այս շրջանում է, որ Եպիփանը ծանոթանում է մի շարք աղանդավորների, մանավանդ Գնոստիկյանների հերետիկոսական մոլորությանը, որի դեմ հետագայում բուռն պայքար է մղում:

Եպիփանի կենսագիրները վկայում են նրա խստամբեր, վանական-ճգնավորական, օրինակելի վարքի և կենցաղավարության մասին. «Հաց և աղ միայն ճաշակէր... և զայն ոչ յագ, որպէս և ջուր չափով ըմպէր»[15]:

Վանական կամ անապատականության «հետապնդած բուն նպատակը լոկ մարմինը ճնշել չէր, ստոյիկյան կոչված փիլիսոփայության հետևողներուն պես, այլ հոգին կատարելագործել, միտքը լուսավորել և կամքը ջրդեղել Աստուծո հետ հաղորդակցության մեջ մնալով»[16]:

Այս մտածումներով տարված, ինչպես նախկին մեծ վանական-ճգնավորներն ու անապատականները, Եպիփանը նույնպես, իր խստամբեր կյանքի մեջ, միաժամանակ պարապում է «ընթերցանութեամբ և աղօթիւք»: Ս. Եպիփանի սիրած վանական անկյունը Փյունիկեի մենաստաններն էին «ի Սպանիտրոն անապատի», որտեղ էլ հիմնել է իր մենաստանը և մինչև 367 թվականը մնացել է այնտեղ իր աշակերտների և հետևորդների հետ, և «մեկնէր աշակերտաց իւրոց զիմաստս աստուածային տառիցն և լնոյր զամենեսին հոգևոր ուրախութեամբ»[17]:

Փյունիկեի այս չքնաղ անապատից սուրբ Եպիփանի օրինակելի ճգնավորական կյանքի, նրա «կրոնավորական խիստ վարքի» և «բազմակողմանի գիտության» համբավը տարածվում էր և հնչում ողջ Եգիպտոսում, Պաղեստինում, Միջագետքում, Եդեսիայում: «Նա հինգ լեզու գիտեր, հունարեն, ասորերեն, եբրայեցերեն, կոպտերեն (ղպտերեն) և մի քիչ լատիներեն, ինչ որ հազվագյուտ մի երևույթ էր այս շրջանում»[18]:

Վերոհիշյալ այդ երկրների եկեղեցիներից և վանական հաստատություններից հոչակավոր գիտնականներ, անվանի անապատականներ գալիս էին Փյունիկե, Եպիփանի մոտ, նրան աշակերտելու:

Սուրբ Եպիփանը շատ էր ճամփորդում, հաճախ այցելում էր իր ծննդավայրը, ապա Հոպպե, Երուսաղեմ, Ալեքսանդրիա, Հռոմ, Կ. Պոլիս, Կիպրոս, Եդեսիա: Ավելի քան 7 տարիներ մնացել է Եգիպտոսում, Թեբայիտի հոչակավոր մենաստաններում:

Իր ճանապարհորդությունների ընթացքում նա ծանոթանում է և մտերմություն է հաստատում ժամանակակից նշանավոր հոգևորականների և եկեղեցու մեծ վարդա-

[10] Լիակատար վարք..., նույնը, էջ 212:

[11] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատոր Ա, ս. Էջմիածին, 1908, էջ 243:

[12] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 35:

[13] **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 63:

[14] The encyclopedia Americana, International edition, vol. 10, 1968, էջ 427.

[15] Լիակատար վարք..., նույնը, էջ 214:

[16] **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 82:

[17] Լիակատար վարք..., նույնը, էջ 217:

[18] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, նույնը, էջ 243:

պետների հետ, այդ թվում Հիլարիոնի և մանավանդ 391-ին Հռոմում, արևմտյան եկեղեցու մեծ հայր Հերոնիմոսի հետ (342—420), «մեծագույնը՝ անցյալի սուրբ Գրքի մասնագետներուն»[19], որը և Բեթղեհեմում, այժմյան հայոց վանքի տեղում Աստվածաշունչը լատիներենի թարգմանեց 404 թվականին: Հերոնիմոսի Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը ծանոթ է «Վուլկաթա» անունով:

Եպիփանը Հռոմում, մտերմանալով Հերոնիմոսի հետ, միասին դեմ դուրս եկան Որիգինեսի՝ եկեղեցու այդ նշանավոր վարդապետի մի շարք դավանաբանական տեսությունների դեմ[20]:

Եպիփանը «չնչին ընդունակությունների տեր, առանձնապես չէր սիրում ուրիշների իրավունքը ճանաչել, մանավանդ հավատո խնդիրներում: Հատկապես նա կռիվ էր մղում Որիգինեսի դեմ. և այդ պատճառով էլ Ալեքսանդրիայի Թեոփիլոս եպիսկոպոսի դրդմամբ խառնվեց «Ոսկեբերանի վեճ»-ին[21], բայց և նա ստիպված եղավ ճանաչել յուր անզորությունը և հայրենիք վերադառնալ...»[22]:

Եպիփանը Որիգինեսի դեմ գրած իր մեկ հակաճառության՝ Պանարիայի կամ «Դեռատուփ»-ի մեջ, որը «եկեղեցական ավանդության առաջին վիճաբանական աշխատությունն է Որիգինեսի դեմ, որ բացում էր մեծ կռիվ եկեղեցու մեջ աստվածաբանական գիտության դեմ, որի իսկական նախահայր անվանում են Որիգինեսին»[23], նա Որիգինեսին անվանում է «ազատ իմաստուն, խեղճ ու փքված մարդ, որ զուր տեղը ադամանդյա կոչումն է յուրացրել», և խոսքը նրան ուղղելով ասում է. «Որքա՜ն դու ինքդ վնասվեցիր և որքա՜ն ուրիշներին վնասեցիր, ինչպե՜ս դու խաբված ես սարսափելի չարաբնեգությամբ, այսինքն հելլենական կրթությամբ և ուրիշների համար էլ դու թույն դարձար: Դո՛ւ, Որիգինես, կուրացնելով քո միտքդ հելլենական կրթությամբ, ժայթքեցիր թույնը նաև քեզ հավատացողների վերա և նրանց համար թունավոր կերակուր դարձար, վնասելով նաև ուրիշ շատերին նրանով, ինչից որ ինքդ էիր վնաս կրել»[24]:

Սուրբ Եպիփանը առանձնապես խիստ դեմ էր արտահայտվում սուրբ Գրքի բացատրության այլաբանական մեթոդի վրա: Սակայն Որիգինեսի հեղինակությունը, «որ գիտական աստվածաբանության համար նշանաբան էր դարձել... նրա նշանակությունը անդրդվելի և անվիճելի էր մնում համարյա եկեղեցական լայն շրջանակներում»[25]:

Եպիփանը առաջացյալ տարիքի մեջ, շուրջ 60-ամյա հասակում, սարկավագ է ձեռնադրվում և 367 թվականին Կիպրոսի Աթոռի Եպիսկոպոսաց ժողովում ընտրվում է Կիպրոսի Աթոռի եպիսկոպոս և ամբողջ կղզու միտրոպոլիտ: Նա այդ պատմական Աթոռը փառավորում է երկարամյա փայլուն գործունեությամբ. «Հաստատեաց բազում վանօրայս ի կղզին Կիպրոսի և զարդարեաց եկեղեցիս բարեկարգութեամբ: Աղքատասէր էր մինչև վաճառել երբեմն զսպասս եկեղեցւոյ ի բաշխել կարօտելոց»[26]:

Կիպրոսի Աթոռի կենտրոնը եղել է ի հնուց Սալամիս կամ Կոնստանցիա քաղաքը:

Սուրբ Եպիփանը իր ողջ կյանքի ընթացքում եղել է ընդհանրական եկեղեցու ուղղափառ մեծ վարդապետներից մեկը և բուռը պայքար է մղել ի պաշտպանություն Նիկիական Հանգանակի և հանդիսացել է կատաղի հակառակորդը ամեն գույնի և տեսակի աղանդավորների դեմ, ի մասնավորի գնոստիկյանների, արիոսականների, ապոլինարյանների և միլիտյանների դեմ: Դավանաբանական իր պայքարի մեջ Եպիփանը «նկարագրով եղած է անընկճելի, մոլեռանդ ըլլալու աստիճան պաշտպան Նիկիական Հանգանակին և անհանդուրժող բոլոր աղանդավորներու նկատմամբ»[27]:

Սուրբ Եպիփանը իր վաստակաշատ կյանքը կնքում է 403-ին, մայիսի 12-ին, Կիպրոս կղզու դիմաց, ծովու վրա, երբ Կ. Պոլսից վերադառնում էր իր միտրոպոլտական Աթոռը:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ է տոնում հիշատակը սուրբ Եպիփանի: Առաջին անգամ Հոգեգալստյան տոնի Գ կիրակին հաջորդ երկուշաբթի օրը[28] և «Երկոտասան վարդապետաց» տոնին[29]:

---

[19] **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 176:

[20] The eucyclepedia americana, նույնը էջ 427:

[21] Տես այդ մասին «Էջմիածին» ամսագիր, 1977, № 2, էջ 22—23:

[22] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, նույնը, էջ 243:

[23] **Պրոֆ. Ն. Սագարդա**, Հույն-արևելքի հին եկեղեցական աստվածաբանությունը յուր ծաղկման շրջանում (IV—V դդ.), Վաղարշապատ, 1910, էջ 58:

[24] Նույնը:

[25] Նույնը, էջ 58—59:

[26] Լիակատար վարք..., նույնը, էջ 226:

[27] **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 64:

[28] Օրացույց, նույնը, էջ 88:

[29] Նույնը, էջ 128:

ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ վարքագրական տվյալների վկայութեան, «Սուրբ հայրն Եպիփան եթող յիշատակ անմոռաց յեկեղեցւոջ լուսաւոր վարդապետութիւն իւր... գրեաց բազմապատիկ ճառս, ներբողեանս ի վերայ տնօրինական տօնից Փրկչին և բանս խրատականս յաղագս ողորմածութեան և այլոց առաքինութեանց, որպէս և մեկնութիւն սաղմոսաց, գրեաց և գիրս յաղագս ուղիղ հաւատոյ և մարուց, անքոռատոն կոչեցեալ, որպէս թէ խարիսխ կենաց մարդկան և գիրս ընդդէմ ամենայն հերձուածողաց և աղանդոց եղելոց ի սկզբանէ մինչև ցաւուրս իւր և այլ բազում ինչ պիտանի և օգտաշահ... և իրաւամբ դասեցաւ ի կարգս Երկոտասան վարդապետաց եկեղեցւոյ»[30]: «Անքոռատոն (ancoratus) գրվածքում Եպիփանը «կարգեաց սքանչելիս այս պատճառս և զարմատս և ժամանակս իւրաքանչիւր, ի գիրսն իւր, որ անուանեալ կոչի Ունիսկորոս, այսինքն Հաւատոց Գիրս, զոր Պարունակաց Եպիփան կարդան» (Մատենադարան, նույնը, էջ 418):

Եպիփանի թե՛ «Ընդդէմ հերձուածողաց» կամ «Պարունակաց» և կամ «Անքոռատոն», այսինքն «Հաւատոց գիր»ը[31], թարգմանվել է հայերենի: Սույն աշխատությունը, որը գրվել է 374-ին, սպառիչ քննադատության է ենթարկում ս. Երրորդության ուղղափառ դավանության դեմ հակաճառող հերետիկոսներին: Թարգմանության ժամանակի կամ ո՞ւմ և որո՞նց ձեռքով է կատարվել թարգմանությունը, վճռական խոսք ասելը դժվար է: Վկայվում է միայն, որ այդ երկու ճառերը և այլ «բազմաթիվ ճառեր վաղուց թարգմանված են հայերենի»[32]:

«Անքոռատոն»-ը կամ Ունիսկորոսը, և կամ «Անկիւրոտոս»-ը հայերեն թարգմանվում է **խարսխեալ**, «որի վերջում գտնվում է մեր եկեղեցու մեջ շատ վաղ մուտ գտած և մինչև այժմ գործածական **Հաւատոյ Հանգանակը**»[33]:

Սուրբ Եպիփանը «սահմանափակ մտավոր կարողության, բայց անսպառ եռանդի տեր մի անձն, որ նշանավոր է դարձել բազմակողմանի գիտությամբ, կրոնավորական խիստ վարքով և ամեն կարգի՝ իսկական թե ենթադրյալ, հերետիկոսների դեմ վարած նախանձահույզ պայքարով»[34]:

Սուրբ Եպիփանի «ամենագլխավոր գրվածքն է այս «Դեղերի արկղիկը» կամ «Դեղատուփ»-ը, Պանարիոնը, 374—377 թվականներին գրած, ուր «դեղեր» են նշանակված 80 հերետիկոսների դեմ»[35], «այդ հաշվում նաև 20 հեթանոսական փիլիսոփայական դպրոցներ իբրև հերքում»[36]:

Եպիփանի «Պանարիոն» աշխատությունը մի կորովի ջատագովություն է փիլիսոփայական դպրոցների, հրեա և քրիստոնյա աղանդավորների դեմ: Ավելի զգացումով գրված աշխատություն է այն, որի մեջ պակասում է ըստ մասնագետների, գիտականության և փաստերի հարուստ վկայությունը: Միամիտ է իր դյուրահավատության մեջ և պակասում է գիտական սրամտությունը[37]:

Մայր Աթոռի միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը սույն գիրքը հրատարակել է «Արարատ» ամսագրում (1892), Էջմիածնի մատենադարանի մի շարք ձեռագրերի համեմատությամբ և այն կոչել՝ «Գիրք հերձուածողաց» կամ «Պարունակաց ի պարունական խօսիցն»[38]: Վերոհիշյալ գիրքը հրատարակվել է նաև որպես «Արարատ» ամսագրի առանձնատիպ, 1892-ին, Մայր Աթոռի տպարանից:

Եպիփանի սույն գրվածքը խմբագրվել է 374—377 թվականներին, և «թեև լի է խառնաշփոթություններով, ուղիղ դատողությունն էլ պակասում է, բայց այնուամենայնիվ մի թանկագին աղբյուր է հերետիկոսությունների պատմության համար, որովհետև ուրիշը չունինք»[39]:

Եպիփանը «անդադար գրեց և քարոզեց իր դարուն և նախընթաց դարերու հերետիկոսությանց, մասնավորաբար արիոսյանց և Որիգինեսի հետևողներուն դեմ»[40], որի աշխատությունների թիվը ըստ Եպիփանի հաշվումների անցնում էր «6000»-ից, «որից քիչ բան է մնացել, այն էլ մասամբ լատիներեն ազատ թարգմանությամբ, գլխավորապես Ռուֆինոսի կատարած»[41]:

Բացի «Հերքումն հերետիկոսաց» գործեն,

---

[30] Լիակատար վարք..., նույնը, էջ 236:

[31] Մատենադարան..., նույնը, էջ 418:

[32] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 36:

[33] Կնիք հաւատոյ, նույնը, էջ XLVIII:

[34] Նույնը, էջ XLVII:

[35] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, նույնը, էջ 243:

[36] Կնիք հաւատոյ, նույնը, էջ XLVII:

[37] The encyclopédia americana. նույնը, էջ 427:

[38] Կնիք հաւատոյ, նույնը, էջ XLVII—XLVIII:

[39] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, նույնը, էջ 243:

[40] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 35:

[41] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան**, նույնը, էջ 147:

Եպիփան գրած է նաև բազմաթիվ ճառեր և մեկնողական գրություններ, որոնց մեծ մասը թարգմանված են հայերենի: Իր անունով ծանոթ կամ իրեն վերագրված 85 կտորներ կհիշվին հայերենի թարգմանված, որոնց կարևոր մեկ տոկոսը անհարազատ կնկատվին»[42]:

Սուրբ Եպիփանը «նշանավոր է իր բազմապատիկ և հմտական երկասիրությամբը: Մեր մատենագրությունն այլ և այլ գրվածքներ հասուցած է առ մեզ իր անվամբ, որոց շատք չեն հիշվիր իր հարազատ համարված երկոց թվույն մեջ և տպագրությամբ ծանոթացած են ուսումնական և բանասեր գիտության: Մենք կնշանակենք ինչ որ գտեր ենք ի գիրս մեր հանուն Եպիփանու, առանց երաշխավորելու անոնց հարազատության, ինչպես նաև ճիշտ ժամանակի թարգմանությանն ի հայս»[43]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում Եպիփանի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների մեջ հիշվում են Ցաղագս սաղմոսարանին կամ Ցաղագս սաղմոսաց, Մեկնութիւն Աւետարանաց, Ցաղագս Աւետարանին Մարկոսի՝ իւղաբեր կանանցն, Պատճառ Գ Աւետարանին, Վասն որդւոյն Կորխա, Խնդիրք ազգահամարին և ճիւղագրութիւնք, Ճառք, Ներբողեանք, Հարցմունք Ներսիսի առ Եպիփան, Հարցումն Եղիոսի առ Եպիփան, Պատասխանիք հարցմանցն Եղիոսի, Պատասխանիք հարցմանցն Թէոդորոսի, Կարգաւորութիւն թարգմանչացն սրբոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ ասացեալ[44], Գիր հաւատոյ, Վասն յարութեան մեռելոց (ի Պարունակաց գրոց), Անուանք մարգարէից, Հոմագրութիւն եկեղեցական, Ցաղագս ականց, Պատմութիւն թարգմանութեան Եօթանասնից, Մեկնութիւն գրոցն թագաւորութեանց, Վասն ամանակաց, Վարք ի Բանից (ժողովածու Բանք աստուածաբանականք և պիտանիք ժողովեալք ի գրեանց... Եպիփան Կիպրացի»[45]:

Սուրբ Եպիփանի մատենագրական վաստակի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա թվով 85 ճառերն ու ներբողյանները, որոնցից հիշենք մի քանիսը. «Ի սկզբնագիր արարածոց և աւետարանական քարոզութեանց որ ըստ Ղուկայ, և յաւետիս սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու. Ցաղագս սպանման Աբելի. Ցաղագս խօսելոյ Տեառն Աստուծոյ ընդ Կայենի քաղցրութեամբ. Ցաղագս Աբելուհւոյ որ էր քոյր Աբելի. Ցաղագս դադարելոյ տապանին. Ի գալ սրբոյ Կուսին առ Եղիսաբեթ զկնի աստուածընկալ աւետեացն. Ցաղագս Յովհաննու Կարապետին. Ի Ծնունդն Քրիստոսի. Ի դառնալն Յիսուսի Քրիստոսի յԵգիպտոսէ. Ի գալուստ Տեառն քառասնօրեայ ի տաճարն. Ի սուրբ մանկունսն Բեթղեհեմի, Ի մկրտութիւնն Տեառն. Ի քառասնօրեայ պահելն Յիսուսի և զփորձապետն յաղթելոյ. Ցաղագս յարութեանն Ղազարու. Ի գալուստ Տեառն յաւուրս արմաւենեաց (Ծաղկազարդ), Ի մեծի աւագ շաբաթու. Ցաղագս յարութեան Քրիստոսի, Ցաղագս խնկաբեր կանանցն. Ցաղագս գալստեան Հոգւոյն սրբոյ. Ի փոխումն սուրբ Աստուածածնի. Ցաղագս սուրբ Խաչին Քրիստոսի. Ցաղագս սուրբ և նկարագրեալ տերունական պատկերին սրբոյ դաստառակին (կարի հարկաւոր վասն իշխանութեան հայոց). Ի Խաչվերացն[46]:

Սուրբ Եպիփան Կիպրացու հայերենի թարգմանված աշխատությունների հայերեն տպագրություններից ձեռքի տակ ենք ունեցել հետևյալները.

ա) **Աթանաս Աղեքսանդրացի, Եպիփան Կիպրացի, Դաւիթ Անյաղթ, Սաղմոսարանին սրբոյ Դաւթի երջանիկ մարգարէի հոգենուագ երգոցն իմաստից, նախ՝ յառաջաբանութիւն մեկնութեան և զանազանութիւն իրաքանչիւրոյն դիտաւորութեան,** Արարեալ ի սրբոյն Աթանասէ եպիսկոպոսապետէ Աղէքսանդրացւոյ: Ապա՝ վերնագրացն մտաց՝ մտահանգոյց մեկնութիւն, յԵպիփանէ սրբոյ եպիսկոպոսէ Կիպրացւոյ և զկնի համառօտ իմն մեկնութիւն նս, ի Դաւթայ անյաղթ փիլիսոփայէն մերմէ սրբոյ

Եւ նս ներբողեան ինչ ի սաղմոսն

Զորս արտահանեալ ի սաղմոսարանէ վաղեմնականէ յօրինակելոյ, ի ՊԶԷ թուականի մերում (887+551) 1438:

Գիրքը տպվել է Կ. Պոլսում, «ամի փրկութեան մերոյ 1801, իսկ ի մեր թուականութեան ՌՄՕ (1250+551) 1801, ի տպագրարանի Մատթէոսի դպրի:

Գրքույկը լույս է ընծայել Կ. Պոլսի հանգուցյալ Զաքարիա պատրիարքի եղբոր որդի Պողոս քահանա Կաղզվանցին, իր «արդեամբ և ծախիւք և սրբագրական տպագրութեամբ, ի հայրապետութեան սրբոյ Գահին Էջմիածնի Տեառն Դանիէլի սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց

[42] **Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան,** նույնը, էջ 63—64:

[43] Մատենադարան..., նույնը, էջ 401—402:

[44] Մատենադարան..., նույնը, ձեռ. 1888, էջ 348բ—353բ:

[45] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Երևան, 1970, էջ 1308: Տես նաև **Հ. Ս. Անասյան,** Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ XLII:

[46] Մատենադարան..., նույնը, էջ 402—418:

եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղեմի տեառն Թէոդորոսի արհի եպիսկոպոսին Բարձրափառ հրամանաւ տեառն Յոհաննու արհի եպիսկոպոսի աստուածաբան վարդապետի և նորապսակ պատրիարքի ի Կոստանդնուպօլիս
յամի փրկութեան մերոյ 1801, իսկ ի մեր թուականութեան ՌՄԾ (1250+551) 1801 ի տպագրարանի Մատթէոս դպրի»:

Վերոհիշյալ գրքույկում սուրբ Աթանասի գրած Դավթի սաղմոսարանի մեկնությունը գրավում է 5—45 էջերը:

Տպագրիչը 46-րդ էջում հրատարակել է մի հետաքրքիր համառոտ և բովանդակալից ուսումնասիրություն, «արժան է մեզ գիտել զայս, եթէ ընդէ՞ր երգօք և քաղցր նուագօք ասին սաղմոսք» թեմայի շուրջ, էջ 46—53:

Այնուհետև գրքույկում հրատարակվել է Եպիփանի «Յաղագս երգոց սաղմոսարանի առաջաբանութեանց ասացեալ» ճառը, որը գրավում է հատորի 55—69 էջերը: Դավթի սաղմոսարանի մեկնության «առաջաբանութիւն»-ը սկսվում է այսպես.

«Ամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա ի հոգեկիր ծերոյն, բաւական համարեցայ պատմել փոքր ի շատէ և դնել ի տեղի առաջաբանի» (էջ 55)... «մտանել ի պատմութիւն սաղմոսացս և ցուցանել զբազմադէմ և զդժուարագիտ միտս սաղմոսարանիս» (էջ 56):

Սույն «առաջաբանութեան» հաջորդում է Եպիփանի սաղմոսների մեկնությունը (էջ 55—69):

Սաղմոսների մեկնությունից հետո 69-րդ էջի հիշատակարանում նշվում է, որ Եպիփանի սույն մեկնությունը «իբր ի բազում երկովք ընտրեալ և ստուգեալ է» Հաղբատի վանքում «սուրբ վարդապետ և սոփեստէս, սուրբ Ոխտին Հաղբատայ սարկաւագն»: Սույն սարկավագը (վարդապետ?) կոչվում է «այր սուրբ և տեսանող, զուարթատես և լի հոգւով... մտեալ յարկեղս գրեանցն որ ի Հաղբատ, զամենայն որոնեաց և ապա հուսկ քան զամենայն գրեանսն՝ ի ներքոյ եգիտ թարգմանչագիր սաղմոսարան ջինջ և նուաղ գրով և առեալ զայն խնդութեամբ համբուրեաց և եդ ի վերայ աչաց իւրոց ապա արկեալ ձեռն ի գործ բացայայտեաց անտի զծածկեալ գանձն և զխցեալ աղբիւրն և ցրուեալ ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս օրինակ»:

Սաղմոսների մեկնությունը համարվում է «բազում բարեաց բանալի և բազմաց ըղձալի. թէ կամիս բանիցդ աշակերտել երկայնամտութեամբ իմա զգրեալսդ, զի դա՛ է լոյս աչաց, և խրատ մտաց, և սահման պաղատանաց և աղօթական հոգևոր զբօսանք անձանձիր, և գրէթէ խօսակցութիւն ընդ Քրիստոսն մեր:

Այլ դու ո՞՝ անդրանիկ ոգւոյ իմոյ՝ Քրիստոսընկալ և ուսումնասէր սիրելի, ցայգացանկ աղօթական և ցերեկավարժ ծիր մըշակ, մանաւանդ խնդրող այսմ հատատի, որ է աղ և համեմիչ ամենայն աղօթից, այս քաղցրաճաշակ սաղմոսս»:

Էջ 71-ից «Դաւթի փիլիսոփայի յաղագս սաղմոսաց Դաւթի» գրվածքն է, որը սկսվում է «Արդ առեալ, ասէ Սամուէլ զեղջիւր իւղոյն և օծ զԴաւիթ թագաւոր» (էջ 71—77):

Ապա ցանկը «Դաւթայ մարգարէութեանն» (էջ 78—105). (150 մարգարեություններ):

Գրքույկի 106—108 էջերում կա մի «ներբողեան վայելուչ ի սուրբ սաղմոսս», որն սկսվում է «Աստուածատունկս այս հոգիաբողբոջ բուրաստանս» բառերով: Ներբողյանի մեջ գեղեցիկ, պատկերավոր արտահայտություններով նշվում է սաղմոսների հոգևոր, բարոյական նշանակությունը: «Սաղմոս՝ զէն պատերազմողաց, վահանակցութիւն ախոյենից, նիզակակից յաղթողաց, սուսեր անձնելի, վատնումն թշնամեաց, հերքումն հակառակորդաց, հէն հատուածելոց, պահպանութիւն տանց, զարդ եկեղեցւոյ»:

109-ից տպագրության հիշատակարանն է, որի առաջին մասը մի ներբող է՝ նվիրված տպագրիչ Պողոս քահանային, ուր խնդրվում է հիշել «ի մաքուր աղօթս ձեր» Կաղզվանեցի Զաքարիա հանգուցյալ պատրիարքին, նրա երկու եղբայրներին, նրա ծնողներին, և նրա եղբոր որդի վերոհիշյալ Պողոս քահանային, որի «արդեամբ» էլ տպագրվել է Սաղմոսարանի մեկնությունը:

Գրքի 111—112 էջերում, գրքի թղթի «պարապ»-ը լցնելու համար, տպագրվել է «զօրինակ արձանագրի տեառն Զաքարիայ վերագրեալ վեհապետի որ ի Ղուրուչեշմէ, ի ՌՄԽԸ (1248+551)», 1799 թվականին մահացել է և թաղվել այնտեղ:

Վերոհիշյալ «արձանագրի» մեջ նշվում է, որ Զաքարիա պատրիարք Կաղզվանեցին իր ուսումը ստացել է Էջմիածնում, ապա եկել է Կ. Պոլիս որպես նվիրակ և ընտրվել է հայոց պատրիարք: Մահացել է 1799 թվականին: Զաքարիա պատրիարքը եղել է «յոյժ ազգասէր... շինեալ զոմանս եկեղեցիս, և հիւանդանոց երկու... յոյժ ճոխացոյց շատ դպրատունս, յորս հաստատեաց վարժապետս ... հասոյց զեօթնեակ եպիսկոպոսս և չորեսին վարդապետս»:

Զաքարիա Կաղզվանեցին 26 տարի իր պատրիարքության օրերին եղել է Կ. Պոլ-

սի հայոց պատրիարքների մեջ մեծագույն դեմքերից մեկը, որպես գրասեր, շինարար, ազգասեր պատրիարք[47]:

բ) **Երանելոյն Եպիփանի եպիսկոպոսապետի Կիպրացւոյ, ասացեալ յաղագս սուրբ և նկարագրեալ տէրունական պատկերին ի դաստառակի սրբոյ»**[48]:

Եպիփանի սույն տպագրված ճառը, ըստ հրատարակիչ Ս.-ի, (հավանաբար Սմբատյանց Մեսրոպ վարդապետի) թարգմանվել է Ե դարում. «Հաւանիմք ասել ի Մեսրովբայ կամ ի նորին աշակերտաց յԵզնկայ Կողբացւոյ և ի Յովսէփայ Պաղնացւոյ հեղեալ ի հայկականս բարբառ, հաւանականագոյն երևի գիտելի լեզու ասորւոց, զի ի Միջագետս էր գրեալ գուցէ և ի Միայնակեցաց անապատին Սպանիտրիոյ»[49]:

Ուսումնասիրությունից հետո՝ բնագիրը, որը և շարունակվել է «Արարատ»-ի հաջորդ համարներում, 1870 հունվար, թիվ 9, էջ 214—220, փետրվար, թիվ 10, էջ 241—243:

Եպիփանի «Ցաղագս սուրբ և նկարագրեալ տէրունական պատկերին ի դաստառակի սրբոյ» ճառը սկսվում է այսպես. «Աստուածային լուսովն և երկիւղիւն նորոյն իմաստացեալ իմ տօնասիրիս, ևս և ծածկելոցն խնդրողիս, և ունիմ ճառել զանհաս հրաշից անճառելոյն իմն Յիսուսի»:

Եպիփանի սույն ճառը կարևոր է նաև մեր եկեղեցու պատմության տեսակետից: Հիսուսի անձեռակերտ դաստառակը Եդեսիա են բերել հայոց Աբգար թագավորի պատգամավորները Երուսաղեմից, ուր գնացել էին Հիսուսին հրավիրելու Եդեսիա, արքային բուժելու համար, ըստ Գ դարի նշանավոր եկեղեցական պատմիչ Եվսեբիոսի և Խորենացու վկայության[50]:

Հրատարակիչը իր ծանոթության մեջ նշում է, որ սույն ճառի երեք օրինակներ կային Էջմիածնի մատենադարանում, և «ոչ ի լոյս ածեալ մնայր ի հին ճառընտիրս ինչ», ինքը այն հրատարակելով ցանկացել է «զուշադրութիւն հնագէտ բանասիրաց ի հետաքրքրական զննութիւն, որք ունին անշուշտ քաղել զկարևոր ինչ ինչ զԱզգային տեղեկութիւնս ի պատմական ճառէս յայսմանէ» (էջ 185—186):

գ) Եպիփան Կիպրացու մատենագրական վաստակի հայերեն տպագրված երրորդ աշխատությունը **Գիրք հերձուածոց** երկն է, որը «Արարատ» ամսագրում հրատարակել է Միաբանը (Գալուստ Տեր-Մկրտչյան)[51]:

Այս առթիվ հրատարակիչ բազմահմուտ Միաբանը (Գալուստ Տեր-Մկրտչյան) Մայր Աթոռի «Գիրք հերձուածոց»-ի իր «Ցառաջաբան»-ում (էջ 1) նշում է, որ «գրվածքի հեղինակը, ժամանակը, թարգմանիչը—որովհետև գրվածքն երևում է թարգմանական—և թարգմանության ժամանակը անհայտ են...: Եկեղեցու հարց երկասիրությանց մեջ խուզարկելով այս գրվածքի նախօրինակը, մենք գտնում ենք որ տա ուղղակի կամ անուղղակի կապ պետք է ունենա սրբոյն Եպիփան Կիպրացու (Դ դար) գլուխ գործոց panarium-ի կամ Հերձուածոց գրքի հետ»:

Միաբանի սույն հրատարակությունը կատարվել է Կ. Պոլսում 1620 թվականին գրված մի ձեռագրից՝ «ձեռամբ յոգնամեղ Սահակի» («Ցառաջաբան», էջ 2):

Ս. Էջմիածնի ձեռագրաց Մայր ցուցակի № 2005 ձեռագիրը ունի հետևյալ վերնագիրը. «Հերձուածողք երևելիք այսչափ են և այսոքիկ, զոր սերմանեաց սատանա ի մարդիկ» (էջ 93—114): «Գիրք հերձուածոց» վերնագիրը չկա ձեռագրում, այլ մեր հատկացրածն է» (Միաբան):

Սույն աշխատությունը սկսվում է այս բառերով.

«Բարբարիսմոսք, որ կոչին խուժադուժք, սկսեալ, յԱդամայ մինչև ի Նոյ, զի ոչ գոյր առաջնորդ և ամենայն ոք ըստ կամաց իւրոց գնայր»[52]:

Եպիփանի սույն աշխատությունը նրա մատենագրական վաստակի «ամենից նշանավոր գրվածքն է», որը կոչվում է նաև «Պանարիոն» կամ «Դեղատուփ» և ուղղված է 80 աղանդների դեմ (այդ հաշվում նաև 20 հեթանոսական փիլիսոփայական դրպրոցներ) իբրև հերքում»[53]:

դ) 1902 թվականին Թիֆլիսում Ֆ. Ն. Ֆինկը հունարեն և հայերեն լեզուներով հրատարակել է **«Եպիփան եպիսկոպոսի Կիպրացւոյ «Վասն նախապատիւ եկեղեցեաց իւրաքանչիւր Աթոռոց մայրաքաղա-**

---

[47] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատոր Բ, Բեյրութ, 1960, Զաքարիա Փոքուզյան Կաղզվանեցի, 1773—1781, և դարձյալ 1782—1799, էջ 3092—3098, 3141—3143, 3150—3152, 3155—3158:

[48] «Արարատ» ամսագիր, 1869, Բ տարի, թիվ Ը, դեկտեմբեր, էջ 185—190:

[49] Նույնը, էջ 185—186:

[50] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատոր Ա, մասն Ա, Բեյրութ, 1959, էջ 20—22:

[51] «Արարատ», 1892, բնագիր և ուսումնասիրություն, էջ 91—114:

[52] «Արարատ», 1868—1919, Մատենագիտություն, ս. Էջմիածին, 1970, էջ 85 և Գիրք Հերձուածոց, Հրատարակութիւն Միաբանի, Վաղարշապատ, 1892 էջ 1:

[53] Կնիք. հաւատոյ, նույնը, էջ XLVII:

քաց» աշխատությունը, 55 էջի ծավալով: Հրատարակիչը Եպիփանի սույն աշխատության հայերեն առաջին թարգմանությունը վերցրել է «Էջմիածնի վանքի ձեռագրից 1696 (Կարենյանի Մայր ցուցակի 1654), թերթ 226ա—235բ»[54]:

Եպիփան Կիպրացու սույն աշխատությունը ներկայացնում է Հռոմի, Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքական Աթոռների թեմական իրավասությունները, ինչպես նաև վերոհիշյալ Աթոռների ենթակա «աստիճանք միտրապալտաց արքեպիսկոպոսաց ինքնագլուխաց, «կարգ եպիսկոպոսաց»-ը «ընդ ձեռամբ» այդ պատրիարքությունների: Հայերեն և հունարեն բնագրերը հրատարակված են դեմ-դիմաց:

«Այս համեմատությունը հեշտացնելու համար», նշում է հրատարակիչը, «տպագրական տարբերություններ է նշանակել, ինչ որ դիմաց գրվածի մեջ պակաս է, նշանակված է փակագծով, ուրիշ տեսակ տպագրություններ, որոնք նկատողության արժանի են, բաժանված են տառերով»[55]:

Եպիփան Կիպրացու սույն աշխատության վերջին մասում (էջ 52) խոսվում է նաև «իշխանութիւն Հայոց Մեծաց» Աթոռի թեմական իրավասությունների մասին:

Այդ մասին կարդում ենք.

«Իշխանութիւն Հայոց Մեծաց. գիտելի լիցի այս, զի սոքա ինքնագլուխք են, և ոչ վճարեն ինչ յառաքելական Աթոռսն, այլ պատուի վասն սրբոյն Գրիգորի որ ի Մեծ Հայք, և առնու յաջորդ նորին յիւր եպիսկոպոսացն զձեռնադրութիւն. Եւ ունի քաղաքս և աւանս բազումս որք պարունակին ի ներքոյ իշխանութեան կաթողիկոսին յաջորդի յԱթոռ սրբոյն Գրիգորի: Նոյնպէս և իշխանութիւնն Կիպրոսի, մնաց ի ներքոյ իւրոյ տէրունականն» (էջ 52):

Ինչպես հայտնի է, Նիկիայի ժողովի 6-րդ և 15-րդ կանոնները, ինչպես նաև Կ. Պոլսի ժողովի Բ կանոնը խոսում են կայսրության չորս «պրոֆեկտուրայի» սահմաններից դուրս գտնվող եկեղեցիների մասին, որոնք կոչվում են «այլազգի ժողովուրդների Աստուծոյ եկեղեցիներ» և որոնք պետք է ղեկավարվեն իրենց հին ավանդություններով և ինքնագլուխ իրավասություններով:

«Ոչ է պարտ ի վերայ երթալ և շփոթել զեկեղեցիս այլ ըստ կանոնիցն...»: «Այլազգի եկեղեցիներ ասելով հասկանում է այն եկեղեցիները, որոնք չէին մտնում այդ «պրոֆեկտորիայի քաղաքական բաժանման մեջ»: «Բայց ի պահելոյ կանոնին, որ ինչ գրեալն է իւր նահանգին ժողովն կարգաւորեսցէ, որպէս հրամայեալն է ի Նիկիայ: Իսկ որք ի Բարբարոսացն ազգս եկեղեցիք Աստուծոյ՝ տնաւրինել պիտոյ է ըստ սովորութեանցս, որ կարգեալն է ի հարանց»[57]:

«Մեր եկեղեցին կարող ենք մուծել այս վերջին շարքը և նրա անկախությունը հենակետել հենց Տիեզերական ժողովի այս որոշումով, որի ժամանակից 10—15 տարի առաջ, արդեն Արշակ Բ-ի օրով, բոլորովին անկախ էր հրատարակվել»[58]:

Այս որոշումների լույսի ներքո երրորդ Տիեզերական ժողովը, որը գումարվեց 431 թվականին Եփեսոսի մեջ, քննություն է նաև Կիպրոսի եպիսկոպոսների բողոքը Անտիոքի Աթոռի ոտնձգությունների և դատապարտում է Անտիոքի Աթոռը և որոշում է պահել եկեղեցական հնավանդ կանոնը, որը ասում է. «Թող պահպանվեն հին սովորությունները և եկեղեցիների առավելությունները, և ազգային եկեղեցիների ինքնուրույնության սկզբունքը... Ամեն մի աշխարհի եպիսկոպոս չտարածի յուր իրավասությունը իր աշխարհի սահմաններից դուրս և եկեղեցիները չխառնի», «յաղագս ոչ երթալ եպիսկոպոսին յիւրմէ վիճակէ յայլ և շփոթել»[59]:

Եպիփանի մասին սույն ուսումնասիրությունը շարադրելիս ձեռքի տակ չենք ունեցել Եպիփանի հայերենի թարգմանված այն գործերի հրատարակությունները, ինչպիսիք են «Եպիփանի ճառք», 1807—1808, Կ. Պոլիս, որի մեջ եղել է նաև նրա վարքը, և 1821 թվականին Վենետիկ հրատարակված «Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց, առաջնորդութեամբ Եպիփանու, Խորենացւոյ և Շիրակացու», 207 էջ[60]:

Եպիփանի գործերի հայերեն տպագրությունների երկու հատվածներ էլ կան նրա «Ի Պարունակաց» կամ «Ի Պարունական խօսիցն» աշխատության հայերեն թարգմանությունից, «ասել է թե ս. Եպիփանի ամենից նշանավոր գրվածքից, որ կոչվում է «Պանարիոն» կամ «Դեղատուփ»[61]:

---

[54] Սույն ձեռագրի ընդարձակ նկարագրությունը տես «Հանդէս հայագիտութեան», հատոր Ա, էջ 1—32 և 97—120. Ազդ, էջ 3:

[55] Ազդ, էջ 3:

[56] Եկեղեցական իրաւունք, Ա գիրք, Շուշի, 1903, էջ 167:

[57] Կանոնագիրք հայոց, հատոր Ա, 1964, էջ 275—276, Հայոց եկեղեցական իրաւունք, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 166—167:

[58] Եկեղեցական իրաւունք, Ա գիրք, Շուշի, 1903, էջ 167:

[59] Կանոնագիրք հայոց, հատոր Ա, էջ 274—275: Եկեղեցական իրաւունք, նույնը, էջ 166:

[60] Հայ գիրքը 1801—1850 թվականներին, էջ 97:

[61] Կնիք հաւատոյ, էջ XLVII:

Ա. հատված

Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսին Կիպրացւոյ. «թէ հայր և միայն ճշմարիտ Աստուած, Միածինն և միայն ճշմարիտ, վասնզի միայն ի միոջէ Միածինն և միայն սուրբ Հոգին Աստուած ճշմարիտ՝ Երրորդութիւնն ի միութիւն, և մի Աստուած՝ Հայր և Որդի և սուրբ Հոգին»[62]:

Բ հատված

Երանելոյն Եպիփանու հարցումն և պատասխանի. «Ընդէ՞ր զառաջնոցն թլփատութիւնս յութերորդում հրամայեն օրէնք, և ընդէ՞ր ոչ ի պարկեշտ վայրի, այլ ի վերայ առականացն տայ զնշանն, որ է ամօթոյ և ծածկութեան: Եթէ անապական ծնաւ, զի՞նչ պարատումն թլփատութեան, զի ի բաց առաւ, եթէ թլփատութիւնն վասն պարկեշտութեան և անմեղութեան... ընդէ՞ր և Քրիստոս ընդունի զայս՝ այն, որ ո՛չ արար մեղս, յորում և ո՛չ գտաւ նենգութիւն: Զի՞նչ պարատեալն յանապականութենէն, քանզի ի բաց առաւ՝ յանհունս տարաբերեալ զանապականութեանն խորգ. ապա թէ ոչ՝ գիր վրիպեալ գտանի»[63]:

[62] Նույնը, էջ 26—31:

[63] Նույնը, էջ XLVII—L և 249—251:





ՄԵԼԻՔ ՂԵՎՈՆԴԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ծննդյան 200-ամյակի առթիվ)

Խաչատուր Աբովյանը և Ռաֆֆին, գնահատելով մեր ժողովրդի կյանքում հայ եկեղեցու և հոգևոր իշխանությունների խաղացած դերը, բազմիցս նշել են, որ հայոց պետականության կորստից հետո կաթողիկոսները, թեմական առաջնորդները Հայաստանին տիրող տերությունների առջև ճանաչվել են հայոց ազգի ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ:

Նրանք անձնապես պատասխանատու են եղել այդ տերությունների առջև իրենց հովվապետության հանձնած համայնքի յուրաքանչյուր արարքի համար և իրավունք են ունեցել միջամտելու նրա ներքին կյանքին վերաբերող հարցերին:

Այդպես է եղել հայոց հոգևոր ղեկավարների դերը Պարսկաստանում, Թուրքիայում և հետագայում նաև Ռուսաստանում: Սակայն սակավաթիվ են հայ նշանավոր հոգևոր գործիչները, որոնք իսկապես քաղաքական հեռատեսությամբ, անձնական նվիրվածությամբ և գործիմացությամբ կարողացել են հետևողականորեն պաշտպանել ու առաջ մղել ազգին հուզող հարցերը տիրող երկրների կառավարությունների առջև: Հայոց եկեղեցու այդ սակավաթիվ երջանկահիշատակ երախտավորներից են Սիմեոն կաթողիկոս Երևանցին, Հովսեփ արքեպ. Արղությանը, Ներսես Ե Աշտարակեցին, Կարապետ արքեպ. Բագրատունին, Խրիմյան Հայրիկը և ուրիշներ, որոնք իրոք երկար տարիներ հաջողությամբ կարողացել են պաշտպանել իրենց դժբախտ հոտի իրավունքներն ու շահերը:

Հայոց եկեղեցու այդ բարձրաստիճան հոգևորականության շարքում իր բազմաբեղուն հոգևոր ու հասարակական գործունեությամբ առանձնահատուկ տեղ է գրավում Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին (մինչև 1801 թ., վարդապետ ձեռնադրվելը՝ Հովհաննես Բագրատունի): Նա ծնվել է 1779 թվականի մայիսի 18-ին Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում և «թոռն էր Սպեր գավառի Հունուտ գյուղի իշխան Եղիկյան Կարապետի»: Նրա հայրը՝ Գրիգոր Բագրատունին, զբաղվում էր առևտրով: Դեռ չէր լրացել Հովհաննեսի տասը տարին, երբ ժանտախտից մահացան հայրը և փոքր եղբայրը, իսկ մայրը՝ Արեգնազանը, ամուսնացավ ուրիշ մարդու հետ: Մեկ տարի անց մահացավ նաև մայրը: Հոր՝ Գրիգոր Բագրատունու թողած կարողությունն անցավ նրա աներոջ որդու և մոր երկրորդ ամուսնու ձեռքը: Փոքրիկ Հովհաննեսին խորթ հայրը խեղճ որբից խլված ժառանգության դիմաց մի մարդասիրություն արավ՝ նրան տվեց մետաքսագործի մոտ արհեստ սովորելու: Այդ արհեստը նրա սրտով չէր, ուստի 1781 թվականին փախչում է իր վարպետից և գնում Ակն: Այստեղ Հովհաննեսը թեմական առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսի մոտ դառնում է «փոքրավոր», այսինքն՝ սպասավոր: Հովհաննեսը մետաքսագործ վարպետի մոտից փախչելու հա-

մար ստացել է «ուստադան ղաչան» (վարպետից փախչող), իսկ Միքայել արքեպիսկոպոսի գրքերը ծածուկ վերցնելու և ընթերցելու համար՝ «քիթաբ խրխզի» (գրքերի գող) մականունները:

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի

Տեսնելով Հովհաննեսի աչքաբացությունը, ընդունակությունը և սերը դեպի ուսումը, 1788 թվականին Միքայել արքեպիսկոպոսը նրան, իր միջոցներով, ուղարկում է Պոլիս սովորելու: Պոլսում Հովհաննեսը այն ժամանակվա նշանավոր հայագետ ուսուցիչների մոտ սովորում է հայոց քերականություն, ճարտասանություն, աստվածաբանություն, տրամաբանություն և թուրքերեն լեզու: 1795 թվականին Հովհաննես Բագրատունին լավ վկայականներով վերադառնում է իր բարերարի՝ Միքայել արքեպիսկոպոսի մոտ, որը մի քանի տարվա ընթացքում նրան ձեռնադրում է դպիր, սարկավագ, իսկ 1801 թվականին Ակռ քաղաքի ս. Գևորգ եկեղեցում՝ վարդապետ, որտեղ նրա Հովհաննես անունը, Հայաստանյայց եկեղեցու սովորության համաձայն, վերանվանվեց Կարապետ, երևի իր պապի՝ Կարապետի անունով:

Այնուհետև Կարապետ վարդապետ Բագրատունին Միքայել արքեպիսկոպոսի կողմից նշանակվեց Կարինի և Ակռի վիճակի եկեղեցիների ու վանքերի կալվածքների կառավարիչ: Կարապետ վարդապետի կառավարիչ դառնալը և նրա նկատմամբ որպես ուսումնական մարդու Միքայել վարդապետի ունեցած մեծ վստահությունը նախանձ է առաջացնում նրա մրցակից Հակոբ վարդապետի մեջ, բայց այդ նախանձը չէր կարող խանգարել նրան, քանի դեռ կենդանի էր իր մեծ բարերարը: 1804 թվականին մահանում է Միքայել արքեպիսկոպոսը: Հակոբ վարդապետը և իր կողմնակիցները աշխատում էին ժողովրդի առաջ վարկաբեկել Կարապետին, որպեսզի Հակոբ վարդապետը դառնա ոչ միայն կալվածքների կա-

ռավարիչ, այլև թեմական առաջնորդ: Կարապետ Բագրատունին զգալով, որ Հակոբ վարդապետը, դառնալով թեմի առաջնորդ, կխանգարի իր գործունեությանը, 1808 թվականին մեկնում է Պոլիս և օգոստոսի 21-ին, Հովհաննես պատրիարքից նշանակվելով ու սուլթան Մահմուդ II-ի (1808—1839 թթ.) հրովարտակով հաստատվելով Կարինի թեմի առաջնորդ, վերադառնում է Էրզրում:

1811 թվականի նոյեմբերին Էջմիածնում Եփրեմ կաթողիկոսը Կարապետ վարդապետին ձեռնադրեց եպիսկոպոս: Դառնալով թեմական առաջնորդ, Կարապետ արքեպիսկոպոսը բարեկարգեց Կարնո թեմի եկեղեցիների կառավարման գործը: Իր նախորդների օրով Կարինի և Ակնի թեմի բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, նրանց կալվածքները հափշտակվել էին թուրք կառավարիչների կողմից: Կարապետ արքեպիսկոպոսի ջանքերով մեծ թվով եկեղեցիներ ու նրանց կալվածքները վերադարձվեցին թեմի տնօրինությանը՝ այդ թվում Էրզրումի սուրբ Աստվածածին վանքը: Նրան են վերագրվում Կարինի Կարմիր վանքի և Խաչավանքի նորոգությունները:

Կարապետ արքեպիսկոպոսը անչափ մարդասեր ու կարեկցող էր աղքատների և թշվառների նկատմամբ: 1811 թվականին Էրզրումում տիրում էր մեծ սով: Մարդիկ սովից ստիպված ուտում էին, ինչ պատահեր՝ բույսեր, կոպտոն, մորթված անասունների աղիքներ, փորոտիք և այլն: Մի քանի մայրեր սովից փրկվելու համար իրենց երեխաներին փոխում էին մի քանի փութ ցորենի կամ գարու հետ: Այդ ծանր օրերին իր սիրելի հոտին սովի ճիրաններից փրկեց Կարապետ արքեպիսկոպոսը: Նա թեմի եկեղեցիների և վանքերի շտեմարաններում ամբարած հացահատիկը բաժանեց սովյալներին: Կարապետ արքեպիսկոպոսը սահմանափակ, մոլեռանդ կրոնավոր չէր և սովի պատճառը չէր վերագրում Աստծուն, այլ ապաշնորհ կառավարությանը և մարդկանց: Կարապետ արքեպիսկոպոսը լավ էր հասկանում, որ մարդկային բարեկեցության միակ աղբյուրը աշխատանքն է: Դրա համար թե՛ Էրզրումում և թե՛ հետագայում Սխալցխայում նա աշխատում էր իր համայնքի մարդկանց ներգրավել հանրօգուտ աշխատանքի մեջ:

Թեմի եկեղեցիները, վանքերն ու դպրոցները մշտական հաստատուն եկամուտներով ապահովելու նպատակով Կարապետ Բագրատունին իր խնայած և ժողովրդից հանգանակած միջոցներով Էրզրումի նահանգում գնել էր ընդարձակ մարգագետիններ, արոտավայրեր և պահում էր ոչխարների ու կովերի մեծ հոտեր, որոնց վաճառքից ստացված հասույթները ծախսում էր նրանց պահպանության վրա: Բացի դրանից նա Էրզրումում հիմնել էր «Ազգային գանձանակ», ուր ամեն հայ պարտավոր էր տարեկան մի փոքր գումար գցել, որից հետո Կարապետ արքեպիսկոպոսը այդ գումարից վճարում էր տերության որոշակի հարկեր, իսկ մնացածը ծախսում էր աղքատների վրա: Այդ մասին իր օրհնության թղթի մեջ նա գրում է. «Առ ի թեթևացուցանելոյ զպահանջս բազմատեսակ հարկաց սահմանեցաք առ այն «զազգային գանձանակ»:

Կարապետ արքեպիսկոպոսը համոզված էր, որ ազգի առաջադիմությունը, բարեկեցությունը կախված են նրա կրթության և լուսավորության մակարդակից: Այդ նպատակով նրա անմիջական նախաձեռնությամբ, երբ Էրզրումում դեռ չկային թուրքական դպրոցներ, բացվում է իր անունը կրող Կարապետյան վարժարանը: Այդ դպրոցը գործում էր եկեղեցու միջոցներով և մեծ դեր է խաղացել Էրզրումի հայերի բարոյակրթական կյանքում: Այդ վարժարանում տարբեր տարիներին դասավանդել են նշանավոր հայկաբան-մանկավարժներ Հովհաննես վարժապետը (Արդար մականունով), Շաքարճյան Գրիգոր պատվելին, Կարապետ վարժապետ վանեցին, Գևորգ Տեր-Հովհաննիսյանը և Կարապետ Չմշկյանը: Աղքատների երեխաների ուսումնառությունը ձրի էր: Ամեն տարի 40 աղքատ երեխաներ ձրի սովորում, կերակրվում և հագուստ էին ստանում Կարապետ արքեպիսկոպոսի միջոցներով:

Մեծ են նաև Կարապետ Բագրատունու մատուցած ծառայությունները ռուսական զորքին ու արքունիքին Էրզրում քաղաքի գրավման և Էրզրում քաղաքի ու նահանգի մոտ 50 հազար հայերի գաղթի կազմակերպման և ռուսական սահմաններում վերաբնակեցման գործում: 1828 թվականին ռուսական զորքերը Կովկասի կառավարչապետ, գեներալ, Երևանյան կոմս Ի. Ֆ. Պասկևիչի հրամանատարությամբ մեկը մյուսի հետևից գրավեցին Կարսը, Ախալքալաքը, Ախալցխան, Բայազետը, Արդահանը և 1829 թվականի հունիսին մոտեցան Էրզրումին: Ռուսների ռազմական հաջողությունների մեջ մեծ էր հայերի մատուցած ծառայությունը և նյութական օգնությունը: Կարսի, Ախալցխայի և Բայազետի ազատագրման ժամանակ հազարավոր տեղացի հայեր զենքը ձեռքերին ռուսների հետ մարտընչում էին իրենց երեկվա տիրողների դեմ:

1829 թվականի հունիսին, երբ ռուսական

զորքերը մոտենում էին Էրզրումին, զորահրամանատար Պասկևիչի խնդրանքով, Եփրեմ կաթողիկոսը Էջմիածնից Կարապետ, Բագրատունուն հղեց «Առաջնորդի Հայոց Կարնոյ» հասցեագրված կոնդակը, որով հանձնարարվում էր նրան հորդորել իր առաջնորդության ներքո գտնվող հայերին՝ օգնելու ռուսական զորքերին: Էրզրումի հայերին սպասվում էր «Բարթուղիմեոսյան գիշեր», որը տեղի չունեցավ միայն սերասկյարի պալատ կանչված Կարապետ արքեպիսկոպոսի ճարպկության շնորհիվ. նա կարողացել էր նախօրոք կաշառել թուրք թարգմանչին և աղավաղել կոնդակի բովանդակությունը: Թուրք փաշաների ատյանը փոխում է Էրզրումի հայերին սրի քաշելու և նախապես Կարապետ Բագրատունուն սպանելու վճիռը: Ատյանը որոշում է Էրզրումի հայերին դատապարտել քաղաքի շուրջը խրամ (փոս) փորելու, իսկ Կարապետ արքեպիսկոպոսից՝ բռնագանձել 40 քիսա (22 հազար) ղուրուշ: Այդ ծանր աշխատանքը տևում է մոտ չորս ամիս, և տեղի հայերը կրում են շատ զրկանքներ ու նեղություններ: Սկզբում ինքը Կարապետ արքեպիսկոպոսն էլ ժամկոչի շորեր հագած երեք օր աշխատեց իր դժբախտ ժողովրդի հետ միասին, որից հետո Ղելիբ փաշայի հետ ձի նստած շրջում էր քաղաքի շուրջը և ոգևորում հայրենակիցներին: Բազմաթիվ ընտանիքներ, որոնց ամուսինները աշխատում էին քաղաքի շուրջը, օրերով մնում էին քաղցած: Դարձյալ այդ օրհասական ծանր պահին նրանց օգնության հասավ «մեծավորը» (այդպես էին կոչում Կարապետ արքեպիսկոպոսին): Նա թեմի պահեստներից բաժանում է ցորեն, ալյուր, իսկ «Ազգային գանձանակից»՝ դրամ:

1829 թվականի հունիսին, երբ ռուսները արդեն գտնվում էին Էրզրումի մատույցներում, նրանցից ահաբեկված թուրքերը փորձում էին վրեժ լուծել հայերից: Նրանց կրոնամոլ, մոլեռանդ մոլլաները հրապարակներում քարոզում և հրահրում էին իրենց հավատակիցներին անխնա ջարդել «գյավուրներին»: Այդ ընդհանուր արհավիրքի օրերին Կարապետ արքեպիսկոպոսը, կատաղած թուրքերի վրեժխնդրությունից փրկվելու համար, հարկադրված էր քաղցած ու ծարավ, երեք օր ու գիշեր անցկացնել Մանեսոլլյանի խոնավ նկուղում: Հենց այդտեղից էլ նա մի նամակ ուղարկեց գեներալ Պասկևիչին մաքսատան բեռնակիր ֆերմանի միջոցով:

Այդ նամակում նա հրամանատարին հայտնում է Էրզրումի քրիստոնյաների ծանր վիճակի մասին և միաժամանակ խորհուրդ տալիս նրան, թե ո՛ր ճանապարհով, ո՛ր ուղղությամբ պետք է հարձակվել քաղաքի վրա, որպեսզի հեշտությամբ գրավվի այն: Այդ նամակը Պասկևիչի առաջ կարդաց և թարգմանեց ռուսերենի Սերովբե վարդապետ Կարնեցին:

1829 թվականի հունիսի 27-ի երեկոյան ժամը 3-ին քաղաքից ուղարկված թուրքական պատվիրակությունը ս. Նշան լեռան մոտ Էրզրումի բանալիները հանձնում է գեներալ Պասկևիչին: Կարապետ արքեպիսկոպոսը ձի նստած, վարժապետ Գրիգոր Շաքարճյանի ուղեկցությամբ, բարձրանում է սուրբ Նշան լեռ, օրհնում ռուսական զորքի հաղթական մուտքը Էրզրում և մոտենում Պասկևիչին, որն ընդառաջ գալով համբուրում է խաչը ու գրկում նրան: Հունիսի 27-ի երեկոյան ժամը 6-ին, Պոլտավայի ճակատամարտի փառապանծ տարեդարձի օրը, ռուսական զորքերը Պասկևիչի առաջնորդությամբ և Կարապետ արքեպիսկոպոսի ուղեկցությամբ մտնում են Արևմտյան Հայաստանի նշանավոր կենտրոն Էրզրում քաղաք: Հուլիսի 7-ին Էրզրումի գրավման առթիվ Պասկևիչը կազմակերպում է շքեղ զորահանդես և ժողովրդական տոնախմբություններ, որոնց մասնակցում են քաղաքի հայությունն ու հոգևորականությունը՝ Կարապետ արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Երեկոյան սերասկյարի պալատում կազմակերպվում է ճաշկերույթ, որին մասնակցում են ռուս հրամանատարները, Էրզրումի գրավման ականատես, ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը, Կարապետ արքեպիսկոպոսը, հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ Եփրեմ վարդապետ Սեթյանը և Սերովբե վարդապետ Կարնեցին:

1829 թվականի սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրով Կովկասում Ռուսաստանին անցան Սև ծովի արևելյան ափերը, Ախալցխայի փաշայության մի մասը, Ախալցխա և Ախալքալաք քաղաքները, իսկ Էրզրումի, Բայազետի և Կարսի փաշայությունները վերստին վերադարձվեցին Թուրքիային:

Ռուս-թուրքական պատերազմը չարդարացրեց Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու հայ ժողովրդի փայփայած դարավոր հույսերը: Ադրիանապոլսի դաշնագրի լուրը ծանր հարված էր ռուսների կողմից գրված ու Թուրքիային վերադարձվող փաշայություններում ապրող հայության համար: Դաշնագրից դժգոհ մնացին ոչ միայն արևմտահայերը, որոնք դրա համար բարոյական հիմք ունեին, այլև առաջին հերթին ինքը Պասկևիչը:

Չնայած Ադրիանապոլսի պայմանագրի յոթերորդ և տասներկուերորդ հոդվածներով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ապահովել իրեն վերադարձված գավառներում ապրող քրիստոնյաների խաղաղ կյանքն ու հավատը, սակայն խուստումների ուժն ու հուսալիությունը Թուրքիայի նման բարբարոսական երկրում հայտնի էր հայերին: Կարապետ արքեպիսկոպոսը, քանորևէ մեկը, լավ գիտեր թուրքական կառավարության քաղաքականության մութ ծալքերը, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերի վիճակը ավելի պիտի վատանա, նրանք ռուսներին ցույց տված օգնության համար զոհ պիտի գնան մոլեռանդ թուրքերի վրեժխնդրությանը, ուստի բանակցելով գեներալներ Պասկևիչի և Պանկրատովի հետ «հրավեր» կարդաց իր ժողովրդին՝ ռուսական զորքերի հետ միասին գաղթել Ռուսաստան: 1829 թվականի դեկտեմբերի 15-ին Էրզրում քաղաքի և նահանգի հայության անունից Կարապետ արքեպիսկոպոսը և 29 պատվավոր քաղաքացիներ իրենց ստորագրություններով ու կնիքներով մի աղերսագիր ներկայացրին Պասկևիչին, որով խնդրում էին թույլատրել գաղթել ու իրենց որպես բնակության վայր հատկացնել Ախալցխան ու նրա գավառը: 1830 թվականի մայիսի 15-ին Կարապետ արքեպիսկոպոսը ընդմիշտ թողեց պատմական Բարձր Հայք նահանգը: Նրա հորդորներով ու անմիջական առաջնորդությամբ 1830 թվականին Էրզրում քաղաքից և նահանգի հարյուրավոր գյուղերից, ճանապարհին բազում նեղություններ կրելով, մոտ 50 հազար (7298 ընտանիք) հայեր գաղթեցին և բնակություն հաստատեցին Ախալցխայում, Ախալքալաքում, Ծալկայում, Լոռի-Փամբակում և Շիրակում:

Էրզրումի և նահանգի հարյուրավոր գյուղերի միանգամից հայաթափ լինելը խիստ անհանգստացրեց թուրքական կառավարությանը: Նա չէր սպասում, որ հայերը, կամավոր կերպով, զանգվածաբար լքեն իրենց դարավոր հայրենիքը, հարազատների թարմ շիրիմները: Թուրքական արքունիքը դիմեց Պոլսի ռուսական դեսպան Օռլովին, բողոքելով, որ Կարապետ արքեպիսկոպոսը հայերին բռնությամբ է գաղթեցնում: Գաղթը խափանելու համար թուրքական սուլթանը Պոլսի հայոց պատրիարքարանի միջոցով Կարապետ արքեպիսկոպոսին զրկեց թեմի առաջնորդի պաշտոնից և գաղթը խափանելու համար Էրզրում ուղարկեց նոր առաջնորդ Բարթուղիմեոս եպիսկոպոսին, որին բոլոր գաղթականներն էլ պատասխանում էին՝ «Եթե անգամ Քրիստոսն ինքն իջնի երկնքից, որպեսզի ներշնչի մեզ մնալ թուրքական տիրույթներում, մենք նրա խորհրդին էլ չենք հետևելու» (Բանբեր Երևանի համալսարանի, 1973 թ., № 2, էջ 214): Բազմավաստակ Լեոն, բարձր գնահատելով Կարապետ արքեպիսկոպոսի ունեցած հեղինակությունը և ազդեցությունը գաղթականների վրա, գրում է. «Մի բան սակայն ճիշտ էր... եթե Քրիստոսի տեղ Կարապետ արքեպիսկոպոսը դուրս գար բազմության առաջ և ասեր՝ ժողովուրդ, ետ դարձիր, ամենքն էլ հլու հնազանդությամբ կկատարեին այդ հրամանը: Բայց ժողովուրդը չէր վերադառնում, գնում էր, որովհետև չէր վերադառնում և գնում էր Կարապետ արքեպիսկոպոսը, որը մանավանդ այժմ դարձել էր այդ ժողովրդական հոծ զանգվածների հոգու և մտքի տերը» (Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մաս 2-րդ, Երևան, 1927 թ., էջ 242—243):

Գաղթի ժամանակ Կարապետ Բագրատունու ջանքերով Էրզրում քաղաքի և նահանգի գյուղերի եկեղեցիներից ու վանքերից հավաքվել և Ախալցխա է տեղափոխվել հոգևոր-մշակութային մեծ արժեք ներկայացնող 486 կտոր (13 սայլ) եկեղեցական սպասքներ, անոթներ, մասունքներ, ձեռագրեր ու գրքեր (111 խաչ, 7 սկիհ, 17 սաղավարտ, 6 բուրվառ, 7 մեռոնատուփ, 62 արծաթապատ Ավետարան, 4 փութ արծաթեղեն), որոնք գետեղվել են 1835—1837 թվականներին նրա նախաձեռնությամբ Ախալցխայում կառուցված սուրբ Փրկիչ հոյակապ եկեղեցում:

Կարապետ արքեպիսկոպոսը բեղմնավոր տնտեսական, հասարակական և հոգևոր-մշակութային գործունեություն ծավալեց նաև Ախալցխայում և Ախալքալաքում՝ գաղթականներին նոր բնակավայրերում բնակեցնելու և նյութապես օգնելու գործում: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1830 թվականին հիմնադրվել է Ախալցխա քաղաքի աջափնյա մասը՝ պլանը, և հարյուրից ավելի գյուղեր ու մոտ 60 եկեղեցի: Էրզրումի Կարապետյան վարժարանի փոխարեն 1831 թվականին Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայում, թուրքական մզկիթում, բացեց Կարապետյան դպրոցը, որը հետագայում փոխադրվեց նրա միջոցներով 1842—1844 թվականներին կառուցված երկհարկանի քարաշեն շենքը: Անդրկովկասում Կարապետյան դպրոցն իր մշակութային նշանակությամբ երկրորդն էր Ներսիսյան դպրոցից հետո: Այնուհետև նրա օգնությամբ 1836 թվականին Ախալցխայում հիմնադրվեց սուրբ Մեսրոպյան արական դպրոցը:

1831 թվականից մինչև 1835 թվականը,

այսինքն գաղթի առաջին հինգ տարիներին, Կարապետ արքեպիսկոպոսի կյանքը ներկայանում է մեզ վշտերով, տանջանքներով լի մի պատկեր, նյութական և բարոյական մարտիրոսություն: Հինգ երկար ու ձիգ տարիներ նա հանգիստ չուներ իր գաղթական հողի անթիվ և անհամար, իրավացի ու անիրավացի, տեղին ու անտեղի պահանջներից, բողոքներից, գանգատներից և մինչև անգամ հայհոյանքներից: Հատկապես ծանր վիճակ էր ստեղծվել Էրզրումից Ախալցխա գաղթած մոտ երեք հազար ընտանիք առևտրականների, արհեստավորների ու սնագործ բանվորների համար: Ախալցխայում սպառողներ և հումք չլինելու պատճառով նրանք անգործության մատնվեցին ու խիստ սնանկացան: Նրանց չփրկեց ո՛չ կառավարության բաց թողած դրամական նպաստը, ո՛չ էլ վերջին կահկարասիների վաճառքը: Ոմանք մինչև իսկ զանազան պատրվակներով նորից վերադարձան Էրզրում կամ ուղղակի դիմեցին փախուստի: Այսպիսի հազարավոր բողոքները և տրտունջները հետզհետե աճելով ու սաստկանալով պատճառ դարձան հրապարակային այն ցույցին, ուր գաղթականները, հատկապես ստորին խավերը, իրենք թշվառության համար մեղավոր համարելով իրենց բարերարին՝ Կարապետ արքեպիսկոպոսին, ուզում էին իրենց զայրույթը թափել նրա գլխին: 1834 թվականի սեպտեմբերի 23-ին սրերով, դանակներով և կացիններով զինված արք ու կանայք խառն բազմությամբ խնուսցի Մկրտիչ հազարապետի առաջնորդությամբ շարժվում են դեպի Ռաբատ, «մեծավորի խուցը», նրան սրախողխող անելու: Հեռվից տեսնելով, որ այդ բազմությունը շտապում է դեպի իր տունը, Կարապետ արքեպիսկոպոսը անվրդով, մահն աչքերին, ընդառաջ է գնում նրանց և բերդից իրեն օգնության եկած ռուս զինվորների մասնակցությամբ, առանց արյունահեղության, զինաթափում կատաղած ամբոխին: Կարապետն իր հոտի վրա ազդելու և սանձելու համար մի զենք ուներ՝ դա ճարտասանության և հոետորական արվեստին լավ տիրապետելն էր: Կատաղած գաղթականներին խաղաղեցնելով նրանց հրավիրեց Դաշղանի եկեղեցի և սկսեց մի քարոզ, որի ամեն ցողից կաթում էր ցասում ու կարեկցություն, հանդիմանություն և բարի խրատ, և որը ապացուցում էր կյանքի բարության մասին նրա ունեցած միանգամայն ճիշտ հայացքները: Մանրամասն նկարագրելով իր համայնքի արած չարությունները ու անկարգությունները Էրզրումում, հիշեցնելով նրանց պատճառով իր կրած բազում վշտերն ու տառապանքները, ակներև դարձնելով նրանց նկատմամբ իր հայրական հոգատարությունը և մշտական պատրաստականությունը կարողության սահմաններում օգնելու նրանց, Կարապետ արքեպիսկոպոսը խիստ հուզված ու արտասվալից աչքերով կշտամբեց այդ անմիտ թշվառներին, հասկացնելով, որ մի մարդու՝ մի «մեծավորի» ուժերից վեր է նրանց բոլորին իրենց սրտի ուզածի համեմատ բավականություն տալ, փոխանակ իրենց ձեռքերն ու խելքը աշխատեցնելու, քան թե ամեն ժամանակ իրենց հույսը դնել մի դրժբախտ «մեծավորի» վրա: Կարապետ Բագրատունին իր ատենաբանությունը վերջացրեց հետևյալ սրտառուչ բառերով. «Մի յուսայք ի մարդիկ և ի զօրութիւնս նոցին, այլ յուսացէք յԱստուած և յողորմութիւն նորա... Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քոյ»: Այս կրակոտ քարոզով նա կարողացավ խաղաղեցնել դժբախտ գաղթականների զայրույթը, որոնք ծունկ չոքելով նրա առաջ, ներողություն խնդրեցին՝ իրենց հետ տանելով պատկառելի ծերունու աչքերից թափած արտասուքները որպես «ի խայթ և ի կշտամբանս սրտի ու խղճի»:

Իր հոտի երեսից կրած բազում տառապանքների ու վշտերի մասին Կարապետ արքեպիսկոպոսը հիշատակում է իր այն «օրհնության» թղթի մեջ, որը 1856 թվականի մայիսի 23-ին, վախճանվելուց մի քանի օր առաջ, ուղղել էր «պատվարժան քահանայից, բարեծնունդ աստիճանավորաց, արժանահարգ իշխանյաց, բազմաշխատ ուստաբաշաց և արհեստավորաց՝ գաղթականաց Կարնո վերաբնակվելուց Ախալցխա»: «Նախնիք Ձեր,—գրում է նա,— և հարք գիտէին քաջ և բազումք ի ձէնջ որք գիտեն և ականատես եղեալ են ինքեանք, խոստովանեսցեն, զի ես որքանեաց վշտուց և տառապանաց տարի յերկրին Օսմանեան յերեսաց յայնժամեան խստաբարոյ մահմեդականաց, թշնամեաց քրիստոնէական ազգամբ գնեալ մերս Սուրբ եկեղեցոյ: Քանի քանիցս յատեան անողորմ սպարապետաց նոցին և վեզիրաց մահու չափ կրեցի դառնութիւնս ըստ պարտաւորութեան իմում ի սէր սիրելեացդ իմոց և որդւոցդ հարազատիս» («Փորձ», 1876 թ. № 1, էջ 173):

Բացի այդչափ բարոյական հարվածներից, Կարապետ արքեպիսկոպոսը շատ անգամ ստիպված էր մեծամեծ նվեռներ տալ այս կամ այն ընչաքաղց փաշային, վեզիրին կամ մոլեռանդ մոլլային, որոնք կարող էին որևէ վնաս պատճառել իր հոտին: Էրզրումում շատ պաշտոնատար անձինք զանազան չնչին պատճառներով աշխատում

էին նրանից մի բան պոկել, և նա հարկադրված էր բավականություն տալ բախտախնդիրներին՝ հանուն հայ համայնքի անդորրության:

Էրզրումի թեմի առաջնորդ նշանակվելու օրից մինչև մահ Կարապետ արքեպիսկոպոսը իր նպատակն է համարել հաստատուն եկամուտով ապահովել՝ ա) եկեղեցին, բ) Կարապետյան դպրոցը, որին նա անվանում էր «գաւիթ եկեղեցւոյ», գ) աղքատանոցը: Այդ երեք վսեմ նպատակներն էլ նա ուր եղել է, անձնվիրությամբ և հաջողությամբ առաջ է տարել: Նրա միջոցներով հազարավոր երեխաներ կրթություն են ստացել, նրա պաշտպանությամբ և հովանավորությամբ հարյուրավոր գաղթականներ հասել են քաղաքացիական և զինվորական բարձր պաշտոնների:

Կարապետ արքեպիսկոպոսը, օգուտ քաղելով ժամանակից և Թուրքիա փախած թուրքերի թողած կալվածքների էժանությունից, Ախալցխայում գնեց դատարկ տներ, խանութներ, կրպակներ, իսկ գավառի Կարծախ, Դադեշ, Խոզաբին, Խավետ, Կոնճղա, Կանաթխև, Ծիրա, Գոգաշեն, Կարավ, Բալաթուբան գյուղերում՝ վարելահողեր, արոտավայրեր, մարգագետիններ, որտեղ, ինչպես անում էր Էրզրումում, պահում էր անասունների հոտեր, որոնց վաճառքից ստացված հասույթները ծախսում էր սուրբ Փրկիչ եկեղեցու, Կարապետյան դպրոցի և աղքատների վրա:

Ինչպես Էրզրումում, այնպես էլ Ախալցխայում Կարապետ արքեպիսկոպոսը հետևողականորեն պայքարել է իր հայրենակիցների քաղաքացիական իրավունքների և արտոնությունների համար: Նա կարողացավ հասնել այն բանին, որ Ախալցխայի նոր թաղամասում բնակվեն միայն Էրզրումից գաղթած հայերը, աղքատ գաղթականների համար տներ կառուցել պետության հաշվին և գաղթական-առևտրականների ներմուծած ապրանքներից մաքս չվերցնել: 1831 թվականի հունվարի 10-ին հատուկ գրությամբ դիմեց Պասկևիչին՝ խնդրելով գաղթականների համար հիմնել ազգային դատարան և վերականգնել անվանի տոհմերի ժառանգական, ազնվականական տիտղոսները և իրավունքները: Պասկևիչին նա գրում է. «Եթէ բարեհաճեսցի տէրութիւն հաստատել ի մէջ նոր քաղաքին ազգային իրաւարան ինչ որ ունիցի իրաւունս դատելոյ զամենայն պակասաւորս և զդատելիս ըստ ծեսից ազգին յամենայն իրս կրօնական, քաղաքական և վաճառական, բացի ի մեծագոյն քրէական յանցանց, որք պատշաճին տէրութեան դատարանին: Ոմանք տունք ծանուցեալ էին ի մէջ օսմանցւոց որպէս երևելիք ազնուատոհմք և պատուելիք. խնդրանք, զի նոյն արտօնութիւն ունիցին և այժմ ի մէջ բարերար և հայրենասիրաց տէրութեան ռուսաց թէ ինքեանք և թէ սերունդք նոցա» (Բանբեր Հայաստանի արխիվների, 1973 թ., № 2, էջ 143): Պասկևիչին փոխարինող Կովկասի նոր կառավարչապետ բարոն Ռոզենը մերժեց Կարապետ արքեպիսկոպոսի խնդրած այս արտոնությունները:

1837 թվականի հունվարի 20-ին Կարապետ արքեպիսկոպոսը Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի կողմից նշանակվեց և Նիկոլայ I-ի կողմից հաստատվեց Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդ ու այդ պաշտոնում մնաց մինչև մահ:

1837 թվականի սեպտեմբերին Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայում ջերմ ու սիրալիր ընդունելություն ցույց տվեց Անդրկովկասի իր նորանվաճ երկրամասերն այցի եկած Նիկոլայ I կայսրին: Ռուսական գորքին և Էրզրումի հայերի գաղթին մատուցած ծառայությունների համար կայսրը ցանկանում է իմանալ, թե նա ինչ է խնդրում. Կարապետ արքեպիսկոպոսը կայսրին պատասխանում է. «Այս մի բուռն քո նոր հպատակ ժողովուրդը պահպանեցի և պաշտպանեցի իմ թույլ ուժերով, մինչև քերի քո հզոր թևերի տակ. այնուհետև, մեծ արքա, դու եղիր սոցա հայրը և պաշտպանը. իմ հայ ազգը քեզ եմ հանձնում և քեզ՝ Աստծուն» («Փորձ», 1876 թ., № 1, էջ 190): Ընդառաջելով Կարապետ արքեպիսկոպոսի ցանկությանը, Նիկոլայ I-ը ևս մեկ տարով երկարաձգեց Ախալցխայի, Ախալքալաքի և Ծալկայի գաղթականների հարկերից ազատ լինելու արտոնյալ ժամկետը:

1846 թվականի հունիսի 9-ին Կարապետ արքեպիսկոպոսը Էջմիածնում Ներսես Աշտարակեցուն օծեց կաթողիկոս որպես երիցագույն արքեպիսկոպոս: Այդ օրվանից նրանց միջև սկսվեց ներքին պայքար Վրաստանի թեմի եկամուտների և Կարապետի անձնական սեփականության շուրջը: Ներսես Աշտարակեցին ուզում էր, որ Կարապետը, իր թեմի դրամական հաշիվներով ու եկամուտներով, անվերապահ ենթարկվի նրան (մի բան, որ ինքը Ներսեսը, երբ Վրաստանի թեմի առաջնորդն էր, հաշվետու չեղավ Եփրեմ կաթողիկոսի առաջ): Այդ պայքարն այնքան սրվեց, որ Կարապետ արքեպիսկոպոսն ստիպված 1848 թվականի հոկտեմբերին թողեց Թիֆլիսը և վերադարձավ Ախալցխա՝ դեպի իր «սիրելի գաղթական ժողովուրդը»: Վրաստանի թեմի և Կարապետի հիմնադրած կոնսիստորիայի

ղեկավարությունը Ներսես Աշտարակեցին վերցրեց իր ձեռքը: Նա Վրաստանի թեմից հսկայական գումարներ տարավ, որով կառուցել տվեց Էջմիածնի լիճը և տնկեց անտառ: Ներսեսն իր հալածանքները շարունակեց նաև Ախալցխայում: Նա բռնությամբ վերցրեց Կարապետ արքեպիսկոպոսի կառուցած առանձնատունը, Կարապետյան դպրոցի և Տայքի հոգևոր կառավարության ղեկավարությունը: Հալածանքի էին ենթարկվում նաև Կարապետի բարեկամները: Հետագայում Ներսեսն զգաց իր սխալը և հիշաչարությունը, որին մղում էին նրան շրջապատող նախանձ մարդիկ: 1850 թվականին Ներսես Աշտարակեցին, հաշտվելու նպատակով, Մակար վարդապետին (ապագա Մակար կաթողիկոսին) ուղարկեց Ախալցխա՝ Կարապետ արքեպիսկոպոսին հրավիրելու Էջմիածին, բայց վերջինս հրաժարվեց ներկայանալ: 1852 թվականին Ներսես Ե կաթողիկոսն ստիպված ինքն եկավ Ախալցխա, իջևանեց Կարապետի տանը և նորից նրան հրավիրեց Էջմիածին: 1853—1856 թվականների ռուս-թուրքական պատերազմը խանգարեց Կարապետ արքեպիսկոպոսին իրագործելու իր ուղևորությունը դեպի Էջմիածին: Այդ տարիներին նա օգնում էր ռուսական զորքերին, որոնց հրամանատարն էր հայազգի գեներալ-լեյտենանտ Բ. Հ. Բեհբութովը, պաշտպանելու Ախալցխան թուրքական զորքերի ներխուժումից:

Կարապետ Բագրատունին վախճանվեց 1856 թվականի հունիսի 3-ին, Ախալցխայում: Նա թաղված էր իր նախաձեռնությամբ կառուցած Ախալցխայի սուրբ Փրկիչ եկեղեցու գավթում: Նրա կենսագիր Հովակիմ (Եղիշե Վարդապետ) Գեղամյանը 1876 թ. «Փորձ» ամսագրում գրում է, որ Ախալցխայի սուրբ Փրկիչ եկեղեցու գավթում գտնվում է մի անշուք գերեզման, որի շիրմի վրա չկա ոչ մի գիր և հիշատակություն: Այդ տապանաքարի տակ մինչև 1953 թվականը հանգչում էին «Կարապետ արքեպիսկոպոսի ոսկորտիքը»: Այդ, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ոսկորները չարժանացան ավանդական դարձած՝ «հանգըստություն ոսկորներին» մաղթանքին: Նրա աճյունը տեղափոխվեց և ամփոփվեց քաղաքային գերեզմանատանը: 1956 թվականին՝ մահվան 100-ամյակի օրը, Ախալցխայի երախտագետ հայությունը նոր հուշարձան կանգնեցրեց իր սիրելի, բազմաչարչար «մեծավորի» գերեզմանին:

Ռուսական կառավարության և Էրզրումի հայերի գաղթին մատուցած մեծ ծառայությունների համար 1830 թվականի հոկտեմբերի 20-ին Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին պարգևատրվել է սուրբ Անայի առաջին աստիճանի շքանշանով:

Անուրանալի է Կարապետ արքեպիսկոպոսի մատուցած ծառայությունները, վաստակը հայոց եկեղեցուն, ռուսական կառավարությանը և մոտ 50 հազար Էրզրումի հայերի գաղթի կազմակերպման գործում: Նա հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության առաջին ջատագովներից է: Նրան երախտագիտությամբ են հիշել և հիշում Էրզրումի գաղթականների բոլոր անցյալ և ներկա սերունդները, որպես մեծ հայրենասերի և իր հովվապետության հանձնած հոտի բարեկեցության, կրթական և հոգևոր-մշակութային գործին նվիրված անխոնջ գործչի:

Ամփոփագրային մեկ հոդվածում հնարավոր չէ ցույց տալ Կարապետ Բագրատունու բազմամյա և բազմաբեղուն գործունեությունը: Մեր հոդվածն ավարտում ենք մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի հայոց եկեղեցու մեծ երախտավորին ձոնած «Առ գալուստ նորին բարձր սրբազնութեան տեառն Կարապետ արքեպիսկոպոս Վրաստանի և Տայոց» հայտնի բանաստեղծության տողերով.

Ծոինչ հողմաձայն են երգ գովութեանց,
Որք Քեզ ձայնեցան ի խուռն ամբոխից,
Անդ միայն յագուրդ հետաքննին աչաց
Էր նոր տեսութիւն հիւրոցդ եկամտից...

Պատուար փրկութեան ազգին վշտահար
Տեսուչ և պաշտպան անյոյս զաւակաց,
Յորոց երկամբեր թիկունս նեղահար
Բեռնեալ՝ ճնշէ ձեռն ժանդ ժամանակաց...

Անմահից պատկեր, պսակ քո դարու
Հայցեմ լինել Քեզ հովիւ քաջազուն.
Թողուլ յանմոռաց սիրտս շնորհակալու,
Ազգաշէն ճգանց՝ անջինջ աստ զարձան:

Մարդասէր սրտիդ Քում ձայն նեղելոց
Լիցի զգալի յաւէտ քան զնոցայն,
Որք անկուշտ ըղձից, անձնյագուրդ շահուց
Զոհեն անպատկառ զփառս ազգին
համայն...

Օրհնեսցին նորա սուրբ կամք գթառատ՝
Որ ընդ վիշտս ազգին խնամօք գթացեալ
Ընտրեաց զՔեզ՝ լինել Հայր երախտապարտ
Զնորայն համօրէն զորդիս որբացեալ:



ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

11 սեպտեմբեր 1978 թվականի պաշտոնական գրությամբ, ուղղված Վեհափառ Հայրապետին, վրաստանյան թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը ներկայացրել էր մի զեկուցագիր Թբիլիսիի հայոց ս. Գևորգ Մայր եկեղեցում նույն տարվա ընթացքում կատարված վերանորոգչական աշխատանքների մասին:

1978 թվականի փետրվար 21-ի գրությամբ առաջնորդ սրբազանը մանրամասնորեն Վեհափառ Հայրապետին էր ներկայացրել 1977 թվականին վրաստանյան բոլոր եկեղեցիներում կատարված շինարարական աշխատանքները և ս. Գևորգ եկեղեցու տարվող հիմնական վերանորոգությունները (Տես «Էջմիածին» ամսագիր, 1978 թ., № Գ, էջ 62—63):

Ներկա զեկուցագրից պարզվում է, որ արդյունավետությամբ շարունակվել է ս. Գևորգ եկեղեցու վերանորոգությունը: Հիմնովին վերանորոգված և բարեկարգված են եկեղեցու հիմքերը, որոնք այլևս ամբողջությամբ պաշտպանված են խոնավության դեմ: «Եկեղեցի ներծծվող խոնավությունը լրիվ կասեցված է»: Վերանորոգվել է ամբողջությամբ եկեղեցու տանիքը նոր թիթեղներով:

Ներքին վերանորոգությունների ընթացքում հատնաբերված են չորս մեծադիր և երկու փոքր ծավալի որմնանկարներ: Մեծադիր որմնանկարները հետևյալներն են.

ա) Հարավային սյան վերևում՝ ս. Գաբրիել հրեշտակապետը՝ «Ավետման ծաղիկը ձեռքին, Հորդանան գետի տեսարանով»:

բ) Հյուսիսային սյան վերևում՝ ս. Միքայել հրեշտակապետը՝ «զինված սրով և վահանով»:

գ) Արևմտյան պատի հարավային մասում՝ «Ադամի և Եվայի դրախտային կյանքի տեսարանը, մեղանչումից առաջ»:

Ս. Միքայել հրեշտակապետ

դ) Արևմտյան պատի հյուսիսային մասում՝ «Ադամի և Եվայի դրախտից արտաքսման պատկերը՝ մեղանչումից հետո»:

Իսկ փոքր ծավալի որմնանկարներն են.

ա) Հարավային սյան վրա՝ ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գիրքը բաց վիճակում:

բ) Հյուսիսային սյան վրա՝ ս. Էջմիածնի Մայր տաճարը և Արարատ լեռը:

Բոլոր որմնանկարները մաքրված են և վերանորոգված: Այսպիսով, ս. Գևորգ եկեղեցու նորահայտ որմնանկարների թիվը բարձրացավ 16-ի:

Վեհափառ Հայրապետին մատուցելով վրահայոց թեմի ժողովրդի որդիական ազնիվ զգացումներն ու հարգանքները, տ. Գևորգ եպս. Սերայդարյանը վերջացնում է իր զեկուցագիրը՝ նշելով, որ թեմը մշակում է «եկեղեցուն հարակից շինությունների վերանորոգության նոր ծրագրեր ևս», որոնք հանձնվելու են Նորին Սուրբ Օծության «բարձր նկատառմանը»:



Սաղմոսերգու Դավթի հաղածվելը Սավուղ թագավորից

Նարեկ





ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 31-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՃԱՄԱՅԿԱՅՈՒՄ

Ճամայկայի Եկեղեցիների խորհրդի հրավերով 1979 թվականի հունվարի 1—11-ը, Կինգստոնի համալսարանական թաղամասում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի նախագահ դոկտոր Էդվարդ արքեպ. Սկոտի և նախագահի տեղակալ տիկին Ժեան Սկյուզեի ղեկավարությամբ տեղի ունեցավ ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի 31-րդ նստաշրջանը:

Նստաշրջանին Հայաստանյայց առաքելական եկեղեցու անունից մասնակցում էին ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի անդամներ տ. Շահե արքեպ. Աճեմյանը և տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Նստաշրջանին ներկա էին Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և համաշխարհային քրիստոնեական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, խորհրդականներ, դիտորդներ:

Կենտրոնական կոմիտեի նստաշրջանի բացման նախօրյակին, 1978 թվականի դեկտեմբերի 31-ին, համալսարանի մատուռում ժամը 23-ին կատարվեց Նոր տարվա ժամերգություն:

Հաջորդ առավոտյան, նույն մատուռում, նստաշրջանի բացման առթիվ կատարվեց էկումենիկ ժամերգություն, որից հետո լիագումար նիստերի դահլիճում կայացավ Կենտրոնական կոմիտեի սույն նստաշրջանի պաշտոնական բացումը:

Նիստի մասնակիցներին ջերմորեն ողջունեց Ճամայկայի Եկեղեցիների խորհրդի նախագահ հայր Սեմ Ռեդը:

Սկզբում լուծվեցին նստաշրջանի կազմակերպչական աշխատանքների հետ կապված հարցեր, ապա հաշվետու զեկուցումով հանդես եկավ Կենտրոնական կոմիտեի նախագահ դոկտոր Էդվարդ արքեպ. Սկոտը:

Իր զեկուցման մեջ նա, մասնավորապես, շոշափեց մարդու քրիստոնեական կատարելության պրոբլեմները:

Զեկուցման մեջ մեծ տեղ էր հատկացված ճշմարտության քրիստոնեական հասկացությանը և նրա իմացության ուղիներին:

Նույն օրը զեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտոր Ֆիլիպ Փոթրը, որի զեկուցման մեծ մասը նվիրված էր ԵՀԽ-ի 30-ամյակին, այդ ժամանակաշրջանում նրա գործունեության արդյունքներին և հեռանկարին: Զեկուցման մեջ լայն տեղ էր հատկացված ԵՀԽ-ի՝ ռասիզմի դեմ պայքարի ծրագրի հատուկ ֆոնդի գործունեությանը, ռասայական ճնշման ենթարկված ժողովուրդներին և խմբերին

ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների և քրիստոնեական խմբերի կողմից ցույց տրված շոշափելի օգնությանը: Դոկտոր Փոթըրը իր զեկուցման մեջ քննության առավ նաև էկումենիկ շարժման մեջ եկեղեցիների փոխադարձ պատասխանատվության, անդամ-եկեղեցիների և ԵՀԽ-ի միջև եղած փոխհարաբերությունների, ինչպես նաև հավատի դավանության միության հասնելու աշխատանքներում Աստուծո ժողովրդի մասնակցության վերաբերյալ հարցերը:

Հաջորդ օրը նստաշրջանի մասնակիցները քննարկեցին ԵՀԽ-ի գործունեության ծրագրերի վերանայման հատուկ կոմիտեի զեկուցումը և ֆինանսական կոմիտեի հաշվետվությունը:

Երեկոյան նստաշրջանի մասնակիցներին ուղղված մի ճառով հանդես եկավ Ճամայկայի պրեմիեր-մինիստր Մայքլ Մանլին: Նրա ելույթը նվիրված էր Միջազգային Նոր Տնտեսական բարեկարգության հարցերին:

Չորեքշաբթի օրը, հունվարի 13-ին, նստաշրջանի մասնակիցները բաժանվեցին խմբերի՝ չորս թեմատիկ կոմիտեներում աշխատելու համար: Դրանք են՝

«Հավատք և վկայություն»,

«Արդարություն և ծառայություն»,

«Կրթություն և բարեփոխություն» ծրագրային միավորների կոմիտեները, ինչպես նաև գլխավոր քարտուղարության կոմիտեն:

Այդ թեմատիկ կոմիտեներում քննության առնվեցին ԵՀԽ-ի ողջ գործունեության ծրագրերը:

Թեմատիկ կոմիտեների աշխատանքը շարունակվեց մինչև երկուշաբթի, հունվարի 8-ը:

Հինգշաբթի օրը, հունվարի 4-ին, երեկոյան, Ճամայկայի ընդհանուր նահանգապետ, մեծարգո Ֆլորիզել Գլասսպոլը «Կինգ Հաուզ» պալատում մեծ ընդունելություն կազմակերպեց՝ ի պատիվ Կենտրոնական կոմիտեի նստաշրջանի մասնակիցների:

Ուրբաթ օրը, առավոտյան, հունվարի 5-ին, պլենար նիստում տեղի ունեցավ «Հույս և միասնություն» թեմայի քննարկումը, որը պատրաստել էր նստաշրջանի համար ԵՀԽ-ի «Հավատք և եկեղեցական կառուցվածք» հանձնաժողովը: Թեման ներկայացրին դոկտ.-պրոֆեսոր Ն. Նիսսիոտիսը (հույն օրթոդոքս եկեղեցի) և հայր Տիլլարը (հռոմեական կաթոլիկ եկեղեցի):

Երկուշաբթի օրվանից մինչև հինգշաբթի, հունվարի 8-ից մինչև 11-ը, կայացան լիագումար նիստերը:

Գլխավոր քարտուղարության կոմիտեի և մյուս 4 միավորների հաշվետվության կապակցությամբ Կենտրոնական կոմիտեն ընդունեց համապատասխան որոշումներ:

Կենտրոնական կոմիտեն քննարկեց և ընդունեց նաև ֆինանսական կոմիտեի զեկուցումը ԵՀԽ-ի 1978 թվականի բյուջեի իրագործման, ԵՀԽ-ի 1978 թվականի ֆինանսական դրության և ԵՀԽ-ի 1979—1981 թվականների բյուջեի նախագծերի մասին: Կենտրոնական կոմիտեն անդամ-եկեղեցիների ուշադրությունը հրավիրեց ԵՀԽ-ի բյուջեի բացը լրացնելու այն ուժեղացող դժվարությունների վրա, որոնք տեղի են ունենում ամերիկյան դոլարի շարունակվող արժեքազրկման կապակցությամբ, և նորից կոչ արեց նրանց՝ ուժեղացնել իրենց ֆինանսական մասնակցությունը Միջազգային խորհրդի կյանքում:

Կենտրոնական կոմիտեն բազմաթիվ որոշումներ ընդունեց անձնական հարցերի շուրջը: Այդ որոշումներից նշում ենք հետևյալները.

— ԵՀԽ-ի նախագահության անդամ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկոդիմ սրբազանի մահվան կապակցությամբ Կենտրոնական կոմիտեն միաձայն որոշմամբ այդ պաշտոնին նշանակեց Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ին:

— ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնին միաձայն որոշմամբ կոչվեց Սոֆիայի ս. Կլիմենտ Օխրիդսկու անվան հոգևոր կաճառի դասախոս, պրոֆեսոր Թոդոր Սաբևը (բուլղարական օրթոդոքս եկեղեցի):

— Կենտրոնական կոմիտեն հաստատեց 1-ին, 2-րդ և 3-րդ ծրագրային միավորների տնօրեններ՝ դոկտ. Լուկաս Ֆիշերի, դոկտ. Խիրապուտոն Իտտիի և տիկին Բրիգալի Բամի ԵՀԽ-ում տարած բազմամյա աշխատանքի ավարտումը ընթացիկ տարում:

— Կենտրոնական կոմիտեն միաձայն վերընտրեց իր ծրագրային կոմիտեն:

— Կենտրոնական կոմիտեն միաձայն և երախտագիտությամբ ընդունեց Կանադայի եկեղեցիների խորհրդի առաջարկությունը՝ ԵՀԽ-ի վեցերորդ համաժողովն անցկացնել 1983 թվականի ամռանը Վանկուվեր քաղաքում:

— ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանը տեղի կունենա 1980 թվականի օգոստոսի 14—22-ին Ժնև քաղաքում:

Կենտրոնական կոմիտեի նստաշրջանն ավարտվեց համալսարանական մատուռում կայացած էկումենիկ ժամերգությամբ:



Խաղաղության համար

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 26—30 օրերին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովը 1975 թվականին սուրբ Էջմիածնում գումարած իր ժողովից հետո այս անգամ իր հերթական խորհրդակցությունը անցկացրեց Պրագայում: Խորհրդակցությանը մասնակցում էին Սովետական Միության և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների 48 ներկայացուցիչներ:

Խորհրդակցությունը տեղի ունեցավ մայրաքաղաքի Յան Կոմենսկու անվան Բողոքական սեմինարիայի հանրակացարանի մեծ դահլիճում «Ավետարանչությունը սոցիալիստական հասարակարգում» թեմայով:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու սույն խորհրդակցությանը իր մասնակցությունը բերեց Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Ծաքարյանը:

Խորհրդակցության պաշտոնական բացումից հետո, որը կատարվեց աղոթքով և ավետարանական ընթերցումով հանձնաժողովի նախագահ դոկտ. Էմիլիո Կաստրոյի նախագահությամբ, գլխավոր թեմայի շուրջ առանձին զեկուցումներով հանդես եկան Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Տ. Անտոնին և պրոֆ. Էբերհարդ Ռինկլերը՝ ԳԴՀ-ից:

Առաջին երկու օրերի լիագումար նիստերից և գլխավոր զեկուցումների քննարկումներից հետո խորհրդակցությունը շարունակեց իր աշխատանքները հետևյալ չորս աշխատանքային խմբերում.

Ա.—Քարոզչություն և ծեսեր.

Բ.—Ավետարանչությունը մեծ և փոքր քաղաքներում.

Գ.—Անձից անձ եղած վկայությունը.

Դ.—Ավետարանչությունը աշխարհականացած սոցիալիստական հասարակարգում:

Խորհրդակցության ավարտին աշխատանքային խմբերի՝ համապատասխան թեմաների շուրջ մշակած եզրակացությունների հիման վրա կազմվեց աշխատանքային մի փաստաթուղթ, որը մանրամասն քննարկման ենթարկվելուց հետո միաձայնությամբ ընդունվեց խորհրդակցության մասնակիցների կողմից:

Փաստաթղթում ընդգծվում է ԵՀԽ-ի «Ավետարանչություն» հանձնաժողովի առաքելությունը սոցիալիստական նոր ձևի հասարակության ընկերային կյանքի յուրահատուկ պայմաններում:

«Ավետարանչությունը,—ասված է փաստաթղթում,—մեր կոլեկտիվ հարաբերությունն է Աստուծո հետ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, մի նոր հարաբերություն մեր փոր-

կության ճանապարհին: Ահա թե ինչու ամեն մի եկեղեցի գործնականորեն պետք է ձգտի կատարելու այդ առաքելությունը, որ պատասխանատու և դժվարին մի գործ է, մանավանդ այսօրվա աշխարհականացած հասարակության կյանքի պայմաններում:

Գաղափարական, սոցիալ-քաղաքական, տնտեսական և այլ կարգի ազդակներ հակառակության առիթ չպետք է հանդիսանան ավետարանչության սուրբ գործի իրականացման ճանապարհին: Ավետարանչությունը մեր օգտակարությունն է մարդկության առաջադիմությանը՝ սոցիալ-տնտեսական կյանքի նոր պայմաններում, մեր պայքարն է պատերազմի դեմ: Եկեղեցին կարող է և պետք է պայքարի մարդկության զարգացմանն ու առաջադիմությանը վնասող ամեն տեսակ երևույթների դեմ:

Ծարունակելով իր սուրբ առաքելությունը,—նշված է այնուհետև փաստաթղթում, —եկեղեցին պետք է օգնի մարդկանց՝ ժողովուրդների բարեկամության հաստատման, փոխադարձ վստահության, ազնվության, հավատարմության, ընդհանուրի համար եղած բարի գործերում»:

Մարտի 29-ին, հանուն ՀՍՍՀ-ի կառավարության, խորհրդակցության մասնակիցների պատվին ճաշկերույթ տրվեց Չեխոսլովակիայի կրոնական գործերի տնօրեն Կարև Հրուզայի կողմից, մայրաքաղաքի «Մոսկվա» ռեստորանում:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ





ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱԳՆԴԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ» սովետական շաբաթաթերթի 16-րդ համարում տպագրված է Վ. ՌՈԶԵՆԻ «ՀԱՆՈՒՆ ԵՐԿՐԱԳՆԴԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ» վերնագիրը կրող հոդվածը, որտեղ նշվում է, որ մարտի 27-ից մինչև 29-ը ԺՆԵՎՈՒՄ տեղի է ունեցել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցական հանդիպում՝ զինաթափման հարցերի գծով:

ՍՍՀՄ եկեղեցիների պատվիրակությունը գլխավորել է միտրոպոլիտ ՅՈՒՎԵՆԱԼԻՆ, իսկ ԱՄՆ-ի պատվիրակությունը՝ ՔՐԻՍՏՈՍԻ եկեղեցիների Ազգային խորհրդի նախագահ բապտիստ Մ. ՎԻԼՅԱՄ ՀՈՎԱՐԴԸ:

Հանդիպման մասնակիցները մեծ ուշադրությամբ են լսել Զինաթափման կոմիտեում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ներկայացուցիչներ Վ. Լ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ և Ա. ՖԻՇԵՐԻ զեկուցումները: Ճառախոսները նշել են, որ ստրատեգիական հարձակողական զենքերի սահմանափակման մասին պայմանագիր կնքելը բարերար ազդեցություն կունենար ընդհանուր զինաթափման խնդիրների որոշման վրա:

Այդ հանդիպման ընթացքում ընդունվել է համատեղ մի հայտարարություն, որտեղ մասնավորապես ասվում է.

> «Մենք համոզված ենք, որ սպառազինությունների մրցավազքում հնարավոր չէ հաղթել, այլ միայն կարելի է պարտվել: Մեր երկրագունդը կործանող ուժերի գոյությունը բազմակի անմտություն է, որի հետ չի կարելի հաշտվել: Մենք խոր մտահոգություն ենք արտահայտում ուժերի այն անհուսալի հավասարակշռության վտանգի առաջ, որը մարդկությանը հասցրել է միջուկային աղետի եզրին: Մենք գիտենք, որ ստեղծվում են է՛լ ավելի սարսափելի զենքեր, որոնք կարող են հասցնել վախի ու կասկածամտության ուժեղացմանը և, այդպիսով, սպառազինությունների է՛լ ավելի տենդագին մրցավազքի: Եվ դրա դեմ մենք միասին տալիս ենք մի պատասխան՝ «ո՛չ»:

Հանդիպման մասնակիցները կոչ են արել շուտափույթ կերպով ստորագրել սպառազինությունների սահմանափակման վերաբերյալ պայմանագիրը, լրիվ և համընդհանուր կերպով դադարեցնել միջուկային զենքի փորձարկումները, միջուկային զինամթերքների նոր սիստեմների մշակումն ու տեղաբաշխումը, քիմիական և ռադիոլոգիական, ինչպես նաև մասսայական բնաջնջման այլ զենքերի արտադրությունն՝ ու կուտակումը:

«Սպառազինությունների մրցավազքը,— նշված է փաստաթղթում,—դժվարություններ և մահացու վտանգներ է առաջացնում ոչ միայն մեր երկու երկրների համար, այլև աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Դրա համար էլ բոլոր կառավարությունները.... պարտավոր են գործում մասնակցություն ունենալ զինաթափման պրոցեսին»:

ԺՆԵՎԻ վերոհիշյալ հանդիպումը լայն արձագանք է գտել եկեղեցական շրջանակներում: Այսպես, Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Պատրիարք ՊԻՄԵՆԸ Նորությունների մամուլի գործակալությանը մասնավորապես հայտարարել է.

> «Մենք մեծ հույս ենք կապում սպառազինությունների սահմանափակման վե-

բաբերյալ պայմանագրի շուտափույթ ստորագրման և նրա՝ ուժի մեջ մտնելու հարցի հետ, քանի որ հավատում ենք, որ նրա պտուղները մեծ օգուտ կբերեն մարդկությանը: Պայքարելով զինաթափման համար՝ մենք ամենից առաջ պայքարում ենք միջուկային զինաթափման համար, քանի որ մասսայական բնաջնջման զենքը հանդիսանում է մարդկության գոյության հիմնական վտանգը և հիմնական արգելքը՝ լրիվ և համընդհանուր զինաթափման ճանապարհին»:

ԺՆԵՎՅԱՆ հանդիպումը կենդանի արձագանք է գտել նաև մարտի 31-ից մինչև ապրիլի 4-ը Մոսկվայում կայացած սոցիալիստական երկրների բապտիստների միությունների ղեկավարների սեմինար-խորհրդակցությանը, որը տեղի է ունեցել Եվրոպայի բապտիստների ֆեդերացիայի շրջանակներում: Սեմինարի մասնակիցները Եվրոպայի բապտիստներին կոչ են արել հանդես գալ խաղաղության, զինաթափման ու ժողովուրդների համագործակցության օգտին:



ՄԱՀ ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆԻ
(1888—1979)

Տարվույս փետրվարի 20-ին Իտալիայի Միլանո քաղաքում, իր բնակարանի մեջ, 91 տարեկան հասակում, իր մահկանացուն կնքեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարազատ զավակ և ս. Հռիփսիմե տաճարի վերանորոգության բարերար տիար Երվանդ Հյուսիսյանը:

Հակառակ նրա առաջացած տարիքին, նրա մահը մեծ կորուստ և մեծ վիշտ էր բոլոր նրանց համար, ովքեր ճանաչում էին նրան:

Հանգուցյալը ծնվել է 1888 թվականին Թոքատում: Նա իր աշխատունակ կյանքի ընթացքում հիմնականում զբաղվել է առևտրով և այդ ասպարեզում հասել փայլուն հաջողությունների:

Լինելով, սակայն, գիտակից, ազգասեր մի հայ, նա չի սահմանափակվել միայն իր անձնական կյանքով, այլ ծավալել է ազգային-հասարակական, եկեղեցանվեր, մշակութային օգտակար գործունեություն բոլոր այն երկրների հայ համայնքների մեջ, ուր նա ապրել է՝ Եթովպիա (1912—1941 թթ.), Եգիպտոս (1941—1945 թթ.) և ապա Իտալիա:

Նրա հասարակական գործունեությունը հիմնականում կայացել է հայ մշակույթի զարգացմանը և տարածմանը նրա սատար հանդիսանալու մեջ՝ սփյուռքյան պայմաններում: Այդ նպատակով իր հնարավորությունների սահմաններում նա իր լայն նյութական օժանդակությունն է բերել ամեն անգամ, երբ առիթը ներկայացել է: Անգամ չլինեին նրա կատարած բազմաթիվ բարեգործությունները, բավական կլիներ հիշատակել միայն Բեյրութում նրա ստեղծած Հայագիտական Հիմնարկը, որպեսզի նրա մասին կազմված դրական կարծիքը լիներ արդար:

Երախտաշատ հանգուցյալը միևնույն ժամանակ հավատավոր էջմիածնասեր էր: Նա այդ ապացուցել է բազմաթիվ անգամներ թե՛ բարոյական և թե՛ նյութական իր աջակցությամբ, որպես Ամենայն Հայոց Հայրապետի մտերիմ բարեկամ: Ամենայն Հայոց Հայրապետը, գնահատելով տիար Երվանդ Հյուսիսյանի կատարած ազգանվեր, եկեղեցաշեն և բարեսիրական վաստակը, նրան պարգևատրել է «ս. Գրիգոր Լուսավորիչ» ականակուռ Ա կարգի շքանշանով:

Հանգուցյալը երկար տարիներ եղել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամ և 1960-ական թվականներին եղել է այդ Միության կորովի փոխնախագահը և իր այդ պատասխանատու հանգամանքով այցելել է սփյուռքի զանազան հայ կենտրոններ:

Հանգուցյալի նյութական օժանդակությամբ Բեյրութի մեջ հաստատվել է Հ. Բ. Ը. Միության անունով մի հիմնադրամ՝ ապահովելու համար արդարորեն իր անունը կրող Հայագիտական Հիմնարկի գործունեությունը:

Ստանալով տիար Երվանդ Հյուսիսյանի

ԵՐՎԱՆԴ ՀՑՈՒՍԻՍՑԱՆ
(Քանդակագործ՝ Նիկողոս Նիկողոսյան)

մահվան տխուր լուրը, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռից նրա դստեր և փեսայի՝ Մարի և Զավեն Մնտիկյանների անունով հղեց հետևյալ ցավակցական հեռագիրը՝ սփոփելու համար նրանց կրած ծանր կորստի դառնությունը.

«Խոր վշտով կմասնակցինք Ձեր և ամբողջ համայնքի սուգին: Սուրբ Էջմիածնի խորանին առջև կաղոթենք Ձեր աննման հայրիկի՝ Երվանդ Հյուսիսյանի արդար հոգվույն համար: Հանգուցյալի բարի հիշատակը անմոռաց պիտի մնա իբրև հասարակական ազնիվ, իմաստուն գործիչ, իբրև իրավ հայրենասեր, իբրև ազգային բարերար, իբրև հոգատար հարազատ զավակ Մայր Աթոռիս:

Օրհնությո՜ւն և լո՜ւյս հանգուցյալի պայծառ հիշատակին: Թող սուրբ Հոգին մխիթարե Ձեր վշտահար սրտերը և Ձեզի բոլորիդ պարգևե արևշատ օրեր:

Կիրակի հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ Մայր տաճարի մեջ:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Հանգուցյալի հուղարկավորության արարողությունը, ի ներկայության բազմահարյուր բարեկամների, տեղի ունեցավ փետրվարի 22-ին Միլանոյի հայոց ս. Քառասուն Մանկանց եկեղեցում՝ նախագահությամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի և մասնակցությամբ տեղի հայոց հոգևոր հովիվ տ. Սարգիս քհն. Սարգսյանի:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի, անձամբ ցավակցություն հայտնեց հանգուցյալի հարազատներին և հուզիչ ու բովանդակալից մի դամբանականով վեր հանեց տիար Երվանդ Հյուսիսյանի եկեղեցանվեր, մշակութային, բարեսիրական և հասարակական գործունեությունը:

Փետրվարի 25-ին, Բուն Բարեկենդանի կիրակին, Մայր տաճարում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն հանգուցյալի հոգու խաղաղության համար:

Հարգա՜նք և երախտագիտությո՜ւն եկեղեցասեր հանգուցյալի բարի հիշատակին:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 6բ.—Եղբայր. յետ շրջէ զԵ թուխտս և ապա գտցես զկարգ բանիս ըստ ծաղիկ նշանիս:

թ. 7բ.—Ով սիրելի եղբայր. ծանիր որ թխտիս կ[ա]մ ս[ուր]ք գրոց ...ղս սխալելի է. շուտ տուր Ղ թուխտ և ապա գտց... կարգ բանիս ծաղիկ նշանովքս:

թ. 101բ.—Կամաւն Այ այս իմ գիր է մեղայպա...:

ՁԻԸ [այստեղ կա նույնանման հինգ կրճատ ստորագրություն—Ն. Մ.]:

Յանուն Յի Քի որդոյն Այ Տն մերոյ:

Գիրաւջի ազգրմորնայնշան արաս...ոյնի. Թափուի թափու Ած փշրեայ ...զատմսցնցյ իրրօս իւրց և զծնն եր... խրտկէ Տր:

թ. 208ա.—Ով Ած այս էր բարէ քաղաք կարդացողք յիշե[ցէ]ք զատտանուն քանհանայնս զմեծ ե-ռեցսին ...փայլ աղա[ւ]թս և մեղաց թողութիւնին գրեց ... յիշեցէք .....:

№ 475
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթերը՝ 374:—**Պրակները՝** 32, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի հետևյալ պրակները՝ ԼԱ՝ 4, ԻԷ՝ 9, Ա՝ 10, Դ, ԺԲ և ԻԵ՝ 11, Ի՝ 18:—**Մեծությունը՝** 19.6×13.3×6.4 սմ.:—**Նյութը՝** երբեմն բարակ և երբեմն էլ հաստ դեղնած և կեղտոտած թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, քայքայված, առաջին երեսին՝ կաշին պատռված: Առաջին երևսի ներսում գունավոր և նախշավոր մի կտոր է կպցված, իսկ կոնակի ներսում քրեմ գույնի կտոր է կպցված: Կազմի կաշվի տակ կա կանաչ գույնի հաստ կտոր: Կաշվի վրա ճնշումով զարդեր են նկարված: Սկզբում կազմն ունեցել է երեք բռնիչներ, որոնք հետագայում պոկվել և կորել են: Գրքի կազմողն է Հակոբի որդի Գրիգորը:—**Վիճակը՝** անբավարար:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** 301բ, 347բ, 374ա և 374բ:—**Տողերը՝** 24:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի բավականին սիրուն զարդագրություն: Կան բազմաթիվ լուսանցազարդեր, զարդագրեր և թոչնագրեր: Կան նաև քիչ թվով գազանագրեր, ձրկնագրեր, խաչեր, գմբեթներ և թոչուններ: Որոշ տեղեր զարդագրություն չկա, իսկ այլ տեղեր էլ խազեր են օգտագործված: Մատյանն ունի մի շարք կիսախորաններ՝ թթ. 108բ, 141ա, 222ա, 228ա, 231բ, 234բ, 240ա, 250բ և 261ա:—**Գրիչը՝** Հարությունն:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17-րդ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ձեռագիրը նվիրել են Բաղդադից Գառնիկ և Ծաղիկ Արաթուն ամուսինները, Վեհափառ Հայրապետի 1978 թ. հունվար-փետրվար ամիսներին Իրաք կատարած Հովվապետական այցելության առթիվ: Նորին Սրբությունը ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատուն հանձնեց 1978 թ. մարտի 2-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ունի սաղմոսներ, շարականներ, տաղեր, կանոններ, քարոզներ, աղոթքներ, ինչպես նաև մեջբերումներ ավետարաններից և առակաց գրքից:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից և 1979 թվականի № Բ-ից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 40բ.—Ցս Քս օգնեա մեղաւորիս:

Թ. 50ա.—Աւետարանս խաչի տաւնին կարդա և զիս յիշե[ա]:

Թ. 85ա.—...Դ գլուխն աւարտեցս: Եւ զեղկելիս յիշեա ով ընթերցող:

Թ. 108ա.—Ով եղբայր վերջ ձայնիս ... Աւետարանն կարդա. սաղմոսն ի խորոց կարդացի ասայ ... Ցորժամ քաղցր եղանակէք. յիշեց[ե]ք զեղկ[ե]լի գրիչս:

Թ. 134ա.—Ով եղբայրք ի գլխաւորք օ[ր]հնութե[ան]ցն ավարտեցաք, ապաշխարութե[ան] մարտիրոսաց և կամ այլ տօնից օ[ր]հնութի[ւն] կամիս ասել ի մէջ սորա. գրած կայ. գիտ և ասայ:

Թ. 140բ.—Ով ուսումնասէր, ավարտ եղև բանիս. ոմանք այսպէս կատարեն զտօնախմբութիւն երգ պաշտմանց ...

Թ. 170բ.—Ով եղբայրք աղուհացիցն ոչ ասէ զայս երգս...:

Թ. 214ա.—...երգ ուրբաթի ասայ և զանպիտանս յիշեա:

Թ. 217ա.—...Ով ընթերցողք. կարդա և զեղկելիս յիշեա:

Թ. 301ա.—Ապիկար Ցարութի[ւ]նս յիշեա:

Թ. 309բ.—Փառք քեզ Տ[է]ր Աստ մեր: Գիտացիր ով ուսումնասէր եղբայր այս ը[նդ] փոխ աւետարանս որ ես գրեցի...

Թ. 328ա.—Այլ տաղ յարութե[ան] ասայ ով սիրելի եղբայր:

Թ. 368բ.—...մանաւանդ ես առավել ըստացող գրոյս և ըզգրչի ծրող սորայ. ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 81ա.—ասացուք:

Թ. 140բ.—ասաբդգ [գրչափորձ]:

Թ. 347բ.—Ես Ցակորի որդի Գրիգորս այս գիրքս առի և կազմեցի վասն մեր[ո]յ կարդալ, էն:

Թ. 358բ.—Ց. Ն. Թ. Հ.:

Թ. 374ա.—Ընդ էրէ ընդունելի Եմէհեթ:

№ 476
ՊՐՈՄԵԹԷՈՍ
(Ողբերգութիւն)

Թերթերը՝ 50:—**Պրակները՝** 3, որոնցից Ա՝ 17, Բ՝ 16 և Գ՝ 17 թերթից են:—**Մեծությունը՝** 22×14.4×0.6 սմ.:—**Նյութը՝** մաքուր գծավոր թուղթ:—**Կազմը՝** կարմրավուն բարակ ստվարաթուղթ, որի երեսին անգլերեն գրված է հետևյալը. «The PR «Student» Copy-Book, Registered»:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապաղաղ:—**Դատարկ թղթերը՝** 2բ, 3ա, 3բ, 4բ, 18բ, 19բ, 35բ, 40բ, 41բ, 43բ և 44բ:—**Տողերը՝** 29:—**Գծումները՝** թերթերը գծավոր են:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** Տիրայր վարդապետ Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:—**Ժամանակը՝** 1905 թ.:—**Վայրը՝** Բրյուսել (Բելգիա):—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն մատյանը Ձեռագրատուն հանձնեց 21 Ապրիլի 1978 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1ա.— Ի. Ժիլկէն
Պրոմեթէոս

Zeus est l'éther, Zeus est la terre, Zeus est le ciel, Zeus C'est tout ce qui est au-dessus et enveloppe l'univers.

Eschyle
Թ. 1բ.— Iwan Gilkin
Promethée
Poème dramatique
Couronné
par
L'Académie Française
1900.

Թ. 2ա.— Ի. Ժիլկէն
Պրոմեթէոս
Ողբերգական քերթուած
Պսակուած
ֆրանսիական
Գիտութեանց Մեմարանից
1900.

Թ. 4ա.—Պատկեր Ա.
Թ. 5ա.—Պրոմեթէոս.
Թ. 19ա.—Պատկեր Բ.
Թ. 20ա.—Պրոմեթէոս՝ առանձին.
Թ. 35ա.—Պատկեր Գ.
Թ. 36ա.—Ոլիմպոսի վերայ.
Թ. 41ա.—Պատկեր Դ.
Թ. 42ա.—Աստղազարդ երկինք.
Թ. 44ա.—Պատկեր Ե.
Թ. 45ա.—Ժայռերի մէջ կորած մի կիրճ: Անտառուտ դիրք:
Թ. 50բ.—(2035—չափածո տողերի քանակը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1բ.— Traduit en Arménien
Թ. 2ա.—Թարգմ. ֆրանս.
Տ(իրայր) Վ(արդապետ):

№ 477
ՊՐՈՄԵԹԷՈՍ
(Ողբերգութեան շարունակութիւնը)

Թերթերը՝ 50:—**Պրակները՝** 3, որոնցից Ա՝ 17, Բ՝ 16 և Գ՝ 17 թերթից են:—**Մեծությունը՝** 22×14.4×0.6 սմ.:—**Նյութը՝** մաքուր գծավոր թուղթ:—**Կազմը՝** կարմրավուն բարակ ստվարաթուղթ, որի երեսին անգլերեն գրված է հետևյալը. «The PR «Student» Copy-Book, Registered»:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապաղաղ:—**Դատարկ թղթերը՝** 10բ, 13բ և 50բ:—**Տողերը՝** 29:—**Գծումները՝** թերթերը գծավոր են:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդա-**

գրություն՝ չունի:—**Գրիչը՝** Տիրայր վարդապետ Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:—**Ժամանակը՝** 1905 թ.:—**Վայրը՝** Բրյուսել (Բելգիա):—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն մատյանը Ձեռագրատուն հանձնեց 21 Ապրիլի 1978 թ.:

Թ. 10ա.—Պատկեր Զ.

Թ. 11ա.—Անհունի մեջ.

Թ. 13ա.—Պատկեր Է.

Թ. 14ա.—Լեռան ամենաբարձր գագաթին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 50ա.—1905. Bruxelles.

№ 478
ԿՈՆԴԱԿ
(Վրացերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 62×24.6 սմ.:—**Նյութը՝** դեղնավուն հատ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապուն:—**Տողերը՝** 1ա՝ 46, 1բ՝ 32:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** արդի վրացական:—**Զարդագրությունը՝** ձեռագրում կա մի հատ ծաղկավոր գլխագարդ, ոսկեգույն խաչ, չորս հատ զարդագրեր և երկու ծառ: Օգտագործված է կարմիր, կանաչ, կապույտ գույները և ոսկեգույնը:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ.:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 30 Սեպտեմբերի 1978 թ.:—**Վայրը՝** Թբիլիսի:—**Ծանոթություն՝** սույն կոնդակը Ձեռագրատուն հանձնված է Վեհափառ Հայրապետի կողմից 20 Նոյեմբերի 1978 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոնդակը նվիրված է Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակի և գահակալության 23-ամյակի, ինչպես նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորման 150-ամյակի երեք տարեդարձների առթիվ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1բ.— + Իլիա II (վրացերեն)
Կաթողիկոս Համայն Վրաստանի
30/IX. 1978 թ.

(Ստորագրության ձախին կա հայրապետական կլոր կնիքը 5.2 սմ. տրամագծով):

№ 479
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
(Պորտուգալերեն)

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 57.7×38.5 սմ.:—**Նյութը՝** մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապուն:—**Տողերը՝** 8:—**Գծումները՝** մատիտով:—**Գիրը՝** լատինատառ:—**Զարդագրություն՝** ամբողջ հրամանագիրը շրջանակված է նախշազարդ մի շրջանակով, որտեղ պատկերված են կարմիր ծաղիկներ և կանաչ տերևներ: Վերևի և ներքևի մասերը նկարված են դեղին գույնով: Վերևի մասի կենտրոնում կարմիր ֆոնի վրա նկարված է մի սուր և երկու ճյուղեր, կողքը գրված են S և P մեծատառ գրերը, որոնց վրա կա ճնգաթև մի աստղ: Այս բոլորը նկարված է արծաթագույնով: Սրանց տակը կարմիր մի ժապավենի վրա սպիտակ տառերով գրված է լատիներեն՝ PRO-BRASILIA-FIANT-EXIMIA: Հրամանագրի ներքևի մասում կա մի շրջանակ, որի մեջ գրված է լատիներեն HONOR MERITUM-LAUDARE DIGNOS HONESTA ACTIO EST: Իսկ սույն գրության կենտրոնում էլ մեծատառերով գրված է Վեհափառ Հայրապետի անվան սկզբնատառերը այսպես՝ S S. V. I (Ն. Ս. Վ. Ա.):—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Բրազիլիայի Օսասկո քաղաքի քաղաքապետ Օկտասիլիո Ֆիրմինո Լոպես:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 27 Հունիսի 1968 թ.:—**Վայրը՝** Օսասկո (Բրազիլիա):—**Ծանոթություն՝** սույն հրամանագիրը Ձեռագրատուն հանձնված է Վեհափառ Հայրապետի կողմից 20 Նոյեմբերի 1978 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքապետարանի սույն հրամանագրով Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետին շնորհվում է Օսասկո քաղաքի պատվավոր քաղաքացու կոչումը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

MUNICIPIO DE OSASCO
TITULO DE CIDADAO OSASQUENSE

A Câmara Municipal de Osasco, atendendo ao que dispõe o Decreto Legislativo No, 7 de 1968, concede à

S. S. VAZKEN I

Patriarca Supremo dos Armenios, o Titulo de

„CIDADAO OSASQUENSE".

Câmara Municipal de Osasco, 27 de Junho de 1968.

Autor da Propositura	Presidente
(ստորագրություն)	(ստորագրություն)
André Bogasian io Secretario	Octacilio Firmino Lopes Director da Secretaria
(ստորագրություն)	(ստորագրություն)
Clóvis Carrilho de Freitas	Ruy Leone Mayr

№ 480
ՈՍԿԵՄԱՏԵԱՆ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
(Պրակ 1)

Թերթերը՝ 39:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 33×24.7×0.5 սմ.:—**Նյութը՝** մի քիչ դեղնած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա:—**Տողերը՝** 34:—**Գծումները՝** գործարանային գծավոր թուղթ:—**Գիրը՝** շեղագիր:—**Զարդագրություն՝** չունի: Միայն կազմի երեսին փակցված է լրագրի մի թղթիկ, որ ցույց է տալիս ձեռագիրը գրողի լուսանկարը, որի տակ տպված է հետևյալը.—«Ցորեղեար ուսուցչապետ Տիար Գէորգ Սիմքէշեան (1870—1951):—**Ժամանակը՝** 1930-ական թթ.:—**Վայրը՝** Ստամբուլ:—**Մանրամասնություն՝** Ձեռագիր այս մատյանը, ինչպես նաև հաջորդ 26 պրակները, Մայր Աթոռիս Ձեռագրատունն ստացել է Ստամբուլից 1976 թ. գրող-բանասեր Գեորգ Սիմքեշյանի ավագ որդի՝ բժիշկ Եդվարդ Սիմքեշյանի կողմից, ի հիշատակ իր հանգուցյալ հոր:

Գեորգ Սիմքեշյանը հանդիսացել է բազմավաստակ գրական և կրթական մշակ: Ավելի քան վաթսուն տարի Ստամբուլում զբաղվել է մանկավարժությամբ և գրականությամբ: Վարել է ուսուցչական պաշտոններ տեղի հայկական բազմաթիվ վարժարաններում, ինչպես նաև Օսմանյան հայմալսարանում: Ունի արձակ և ոտանավոր բազում գործեր: Հրապարակ իմացել է մի շարք արևելյան լեզուներ՝ թուրքերեն, արաբերեն և պարսկերեն, ինչպես նաև եվրոպական լեզուներ՝ ֆրանսերեն և անգլերեն:

Հսկայական գործ է կատարված կազմելու համար Ոսկեմատյանի 27 պրակները: Հայ հեղինակների գործերից դուրս օտար հեղինակների աշխատանքների գրեթե 90 տոկոսը թարգմանել է անձամբ Գեորգ Սիմքեշյանը: Բացի այդ աշխատության մեջ կան մեր նահատակ գրողների հրատարակված և անտիպ գործերը: Որով հարմար ենք գտնում այստեղ տալ բոլոր հոդվածների վերնագրերն և հեղինակի անունը:

Կոթողական այս աշխատանքը պարունակում է թանկարժեք կտորներ հայ նահատակներից և ժամանակակից գրողներից, ինչպես նաև ունի հայկական, եվրոպական և համաշխարհային գրականության ընտրյալ նմուշներ: Այստեղ կարելի է գտնել նմուշներ արաբ, պարսիկ, թուրք, ֆրանսացի, անգլիացի, գերմանացի, շվեդ, բուլղար, ռուս, ճապոնացի, իսպանացի, նորվեգացի և բազմաթիվ այլ ժողովուրդների գրականությունից, արձակ և ոտանավոր:

Ամբողջ աշխատանքում գրության ձախ կողմը կա երկու սմ.անոց մի լուսանցք, իսկ աջ կողմը գտնվող 7 սմ.անոց լուսանցքում հաճախ տրված են ծանոթություններ, զանազան տեղեկություններ, տեքստի հետ կապված բացատրություններ, ինչպես նաև օտար հեղինակների կրճատ կենսագրությունը:

(Շարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում 3

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված շնորհավորական հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9

1979 թվականի համամիութենական մարդահամարի նախնական արդյունքների մասին. Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը 11

Մայր Աթոռի պատվիրակությունը Հնդկաստանում 13

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 17

Այցելություն Իրաքի հայոց տիրախնամ թեմին 21

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի տվչության հանդիսություն Մայր Աթոռում . . 23

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ—Այց Սինգապուրի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի 25

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր . . 27

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Եպիփան հայրապետ Կիպրացի 33

ՄԵԼԻՔ ՂԵՎՈՆԴԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ—Հայոց եկեղեցու մեծ երախտավորը . . . 42

Վերանորոգություններ Թբիլիսիի հայոց ս. Գևորգ եկեղեցում 50

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի 31-րդ նստաշրջանը Ճամայկայում 52

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի խորհրդակցական ժողովը Պրագայում 54

Հանուն երկրագնդի խաղաղության 56

Մահ Երվանդ Հյուսիսյանի 58

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 60

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 13.04.1979 թ.: Ստորագրված է տպագրության 28.05.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 330

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.